

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

894.3

2-65

0-15

Alphabet. Unversus See

Zug. Unversus

pd. Unversus

1925.

15.413

63829-6X

ԹԱՐԳՄԱՆԻՉԻՆ ԿՈՂՄԷՆ

Համիտեան նախճիրները, իրենց տարողութեամբ, կը գերազանցեն բոլոր այն սխրագործութիւնները, որ երբեքէ արձանագրուած ըլլան հին ու նոր պատմութիւններու մէջ:

Փուցէ ոչ մէկ բռնաւոր՝ Ներոնէն Շահ Աբաս, Կեսլէրէն Տուղրիլ, Պիսիստրատէն Նարոլէոն արնքան արիւնոտ հանգիստանայ, որքան Սուլթան Համիտ, որ իր անօրինակօրէն ճզճիմ մարմինին մէջ կը միացնէր անգթութիւնը և վայրագութիւնը իրենց ամէն խայտաբղէտութիւններով:

Ժօզէֆ ար Մէսթր, մին տասնըութերորդ զարու ֆրանսական գրականութեան աչքառու դէմքերէն՝ հաւանաբար խոր սխալի մէջ կ'իյնայ, երբ կը կարծի թէ՛ իշխանները չար չեն կամենար. թէ՛ ասոր ներհակ ամէն երևոյթ, հարկ է վերագրել սաղրանքներուն՝ ազդեցութեան բարձունքները հասած հասարակ ոճ-բագործներու, որոնք իշխաններուն գործել կուտան եղեւնը:

Կը սխալի, որովհետև փաստը զոյց կուտայ անհերքելի կերպով որ, սովորական ինչպէս նաև անսովոր մահկանացուներու կեանքին մէջ՝ ակներև գեր կը կատարեն հակաբանները, խառնուածքը, ժառանգականութիւնը, մանաւանդ կաշին ու դիրքը փրկելու մըզ-ձաւանջը, որոնց մասին գեռ ևս չատ ըսելիքներուն թնազանցութիւնը:

ձակատագրականութիւնն . . . — ա՛յս քարոզած պի-
տի ըլլայինք, եթէ ըսէինք որ մարդիկ կա՛մ հրէշ կը
ծնին կա՛մ հրեշտակ . — ո՛վ պիտի կրնար պնդել այդ
պարագային որ բացառութիւն պիտի կազմէին Սուլ-
թան Համիտ, որպէս և բուն իսկ իր խմորը ունեցող
թագակիր ասպետները՝ որոնց կը վերագրուէր բարու-
թեան մենաշնորհը: Փորձառութիւնը, ընդհակառակը,
ցոյց կուտայ որ, Համիտները առաւելապէս ընդունակ
եղած են ստորին արարքներու և թէ իրենց առանձ-
նաշնորհեալ գիրքին հետեանքով է որ պատեհութիւնը
չի ներկայանար մեզ, առտունները կանուխ տեսնալ
գիրենք շղթայի զարնուած, քալելն իրենց՝ փողօցնե-
րու մէջէն՝ քովն է վեր սատիկաներու որոնք բոլորիկ
արդարութեան յաղթանակը կը հռչակեն պահականօց
առաջնորդելով կիսամերկ շահատակները գիշերուան,
այնքան շատ ամեն երկրի մէջ, այնքան շատ ատեն
մը և այսօր ալ երբեմնի Ղազիններու մայրաքաղաքին՝
Պոլիսի մէջ:

Կ'ապրինք գերազանցապէս անհատապաշտ գարու
մը մէջ, ուր անձնիւր ոք կը ձգտի ազգեցութեան,
զօրութեան և իշխանութեան, ատոնցմով ապահովե-
լու համար իրաւունքներ, որ անձնական ակնոցով՝
ձեռք կրնան ձգուիլ ուրիշներու հաշտոյն ի գործ դր-
ուած յայտնի կտմ անյայտ անիրաւութիւններով: Ին-
ծի համար՝ բացարձակ անհատական ազգեցութեան,
զօրութեան, իշխանութեան ըմբռնումները. — չարա-
գործ երրորդութիւն — հոմանիշ են գազանութեան եւ
սոսկական ազրիւրները ընկերային դժբախտութիւննե-
րուն. վասնզի շատ քիչեր են որ կրցած են հասկնալ և
գործադրել թերեւզացեալ արդարութիւնը անհատական
աշխարհի անձուկ սահմանին մէջ, Բացարձակ իշխա-
նութիւնը, անձեռնմխելի վերին իրաւունքները՝ հիգ-

րաներ եւեթ պարզեա՞ծ են մարդկութեան, գիշատիչ
բորենիներ, որ կատաղութեան մոլուցքէն մղուած
արատուքի, ցաւերու անձայրածիր հովիտի մըն են
փոխակերպած այս այնքան հրաշալի երկրագունդը՝ ուր
անասելի առատութեամբ կը յորդին, եղանակէ եղա-
նակ մայր բնութեան բարիքները, ողողելով մեզի ձրի
շնորհներով, որոնց փոխարէն սակայն, անժառանգ-
ները կը ծծեն մահացու թոյները թշուառութեան,
հալածանքի, զրկանքի և ստրկութեան:

Նուիրապետական կարգերը, որոնց մէջ է որ արդի
ընկերութիւնը գտած է իր ներդաշնակութիւնը, յա-
ճախ անբարոյացուցած են սերունդները՝ երբ իրենց
բարձրութեան վրայ եղած չեն նախարարէն սկսած հա-
սարակ սատիկանը, երբ անոնք գէշ մեկնած են իրենց
պաշտօնին նշանակութիւնը: Հոս է որ Օթման ու Օր-
խան ձեռք ձեռքի տուած կը զարնեն անդադրում,
գիտակցաբար քալելով ոճիրէ ոճիր, եղեռնէ եղեռն.
պատմութեան դատաստանին, դաւադիր եղեռնագործ-
ներու ծիրանիով կը ներկայանան Գանոնի Սուլթան
Սիւլէյմանը, Ա. Բ. Սուլթան Մահմուտները, Ա.
Սուլթան Համիտը, անիկա որ առաջին անգամ խո-
նարհիլը տեսաւ օսմանեան մահիկին / Բայց երբ կու-
գանք զուգակշիռն ընելու Սուլթան Համիտ Բ. ի պարա-
գային՝ հոն կանգ կ'առնեն Լէնկ-թիմուրեան և Գոս-
մուէլեան զարհուրանքները. անոնք, այս վերջինները
ո՛րքան կը նսեմանան Սուլթան Մէճիտի հարազատին
առջև, երբ սա իր երեսունընդամեայ գահակալու-
թեան ընթացքին, մանաւանդ 1890-էն ասդին, կ'ուզ-
ղէ իր ուշն ու զուրուչը դէպի արդէն նահատակ հայ ցե-
ղը և կը սարքէ արիւնի հսկայական ու անդնդախոր
լիճերը ուր պիտի թաւալէին միլիոնաւոր հայօրդի-
ներ, բաց ու վրէժխնդիր նայուածքով, երկինք ցցած

իրենց սպասնական բռունցքները :

Գաղանք ուրախութեամբ կը դիտէ և անսպառ ու ճիւղազային հրճուանքով ահանատես կ'ըլլայ անոնց թալթլումին, տեսնելով որ ճապարկներու բաղնիքներուն մէջ կ'անէանան սերունդներ ամբողջ. գոհունակութիւն կը զգայ սպաննած ըլլալուն համար հայ ժողովրդի ազատութեան տենչն ու ըմբռնումը : Ճիշդ է, երեսունընէնք տարիներու ընթացքին, միշտ կը խորանայ իր կազմած արիւնի ծովը, պատրաստ ընկլուզելու մասնաւորաբար մեր տարաբախտ ազգակիցները, անոնց առնթներ վերապահելով խորչեք, ուր անժամանակ մահուան տագնապը պիտի ճաշակէին իրենց կարգին յոյներ, պուլիարներ, սերպեր, արաբներ և թուրքեր : Եւ ինչո՞ւ այս անթիւ ու անհամար զոհերը, ինչո՞ւ այս մարդկային զիակոյտերը, ինչո՞ւ գանկերէ կազմուած աշտարակները, — գլխաւորաբար ամբարցնելու գահը, որուն վրայ, Երլաքի բոցերին կը յաւակնի ունենալ անվիճելի իրաւունքներ : Բազմած Պէշիկթաշի գեղազուարճ բլրակներու գագաթին, մի՛շտ կը դիտէ, մի՛շտ որսեր կ'որոնէ, մի՛շտ կը գաւէ, մի՛շտ կը հաւաքէ, կը վճռէ և կը մահացնէ իր խաւարչտին որջին մէջէն :

Պալատը անյատակ ու անեզր գատարան մըն է, հոն կը խոյանան դիշեր ցորեկ ամբափակ կառքեր. ասոնք կը կրեն օսմանեան պետութեան սահմաններուն մէջ գտնուած, արդարութեան և ազատութեան գոյզն հասկացողութիւնն ունեցող յետին խլիճաները, որոնք հազիւ ներս մտած Երլաքի գագաթէն կը զգան փշելն իրենց երեսին՝ Համիտի խորշակ շունչի, շունչ որ կը չորցնէ զանոնք մահուան պատիժով և նոյնհետայն :

Մահուան պատիժ՝ լուցնելու համար համարձակ

լեզունները, մահուան պատիժ՝ տեղնուտեղը խեղդելու համար նուազագոյն ճիչն ազատութեան, մահուան պատիժ՝ խորտակելու համար հողի և սրտի ամէն անկախ թռիչք, մահուան պատիժ մէկ խօսքով, շատ աւելի վազաժամ սպաննելու համար Թուրքիան, սքիւսելով անոր գօսացած մարմինն վրայ կոտորածի համապարփակ աւերը :

Կայսերական ծոյլ զրօտանաւերը, որ կը խարսխեն Պէշիկթաշի և Տօլմա-Պահչէի բացերը, ոչ նուազ լըծուած են դիշերային ոճբապարտ արարքներու . կ'իջնայ արևը, կը հնչէ ատոր յայտարար փողը, քանի մը տասնեակ ծովային զինուորներ երեսին դէպի Երլաքը կ'ուզղեն հո՞ն իրենց սէլամները, խաւարը իր կապարէ թեւերը տակաւ կը տարածէ Սթամպուլի վերայ . մութ պատմուճան կը հաղնին Մարմարան, Սեւ Մովըն ու Վոսփորը . սգաւոր կը մբմնջնն Գըզ Գուլէի յօթանուտները : Կէս դիշեր է վերջապէս . եռուզեռը կը սկսի զբօսանաւերուն մէջ, երբ ամէն երթեւեկ և շարժում դադրած են ծովուն վրայ . նաւերը կը Փշան, ու հասկ ապա՝ ընդհանուր աղջամուզլի և անշարժութեան մէջ ճամբայ կ'ելլեն անոնք անորոշ ուղղուածութիւններով . կը տանին իրենց իրանին վրայ գաատապարտեալներ, որոնք ոչ ևս պիտի բանան իրենց աչքերը օրուան լոյսին, որոնք պահ մը ետքը պիտի գալարուին ծովամոյն փոկեղէն պարկերու մէջ, Սև կամ Մարմարա ծովերու խորութիւններուն մէջ խեղդամահ սատկելու գատակնիքը իրենց ճակտին . . .

Հրէ՛շ, երիցս հրէ՛շ . . . Ո՞ր զարհուրելի թաթառ թքաւ քեզ . ո՞ր արիւնտա կողը աճեցուց սաղմդ . ո՞ր քանասար դեւը շունչ դրաւ թոքերուդ մէջ :

Պոլսէն մինչև Պաթաքները, մինչև Մօնթէնէկրօի կիրճերը, հեռաւոր անկիւնները Արաբիոյ, Ափրիկեան

Տրիպոլիս, Արշիպեղագոսի կղզիները. մինչ Մարտիրոս Կրետէն, կը վխտան անխօս ու սակայն կենդանի վկաներն Սուլթան Համիտի անլուր բարբարոսութիւններուն. իսկ 1890-էն սուգին ատոնց շարքին աւելի քան երբեք գուռն փաստերով կը խօսին հայկական դաւառները, Պերլինի Վեհաժողովին ուշադրութեան արժանացած վեց վիլայէթները՝ Վանն ու Պիթլիսը, Տրգրանակերտն ու Նարբերդը, Սեբաստիանն ու Կարին, յորս բարենորոգումները կը գործադրուին թրքական եաթաղանով, զանգուածային կոտորածներով, առեւանգումներով և յաւիտենական աւարառութիւններով:

Տօղրու Եօլի բարձրերէն բաց և ծածկագիր հրահանգներ կը թելադրեն բնաջնջել հայութիւնը, թագելու համար Հայկական Հարցը և Հայկական Ազատ Պետութիւն մը ստեղծելու ցնորքը. Այդ արիւնարբու հրահանգներուն հետեանքով 1875—1909 ուղղակի եւ անուղղակի քանի մը միլիոն կը զոհուի հայութենէն, եւ սակայն չի յազենար Երլարզի գայլը, անիկա որ ի տղայ տիոց բարձրու վրայ կը փորձէր իր սուրը, Հայեր ջարդած ըլլալու տոնքիչոտութեամբ. այսու կը ջանար սրբել իր ճակտի վրայէն մայրենի արատը, զոր ի գէպս և յանդէպս կը քսէին իրեն՝ նոյնիսկ իր հարազատ եղբայրները, մանաւանդ Զրաղանի պալատին ապուշ բանտարկեալը՝ Սուլթան Մուրատ, որու ինդրանքով է որ յայտնի բանաստեղծ Զիա փաշան գրեց 1872 թուականին Փիեթի Համիտը, նմանողաբար Մօլիէթի Ագանին:

Փինթի Համիտ... այո՛, Բայց և ճիւղ... աւելի քան այո՛. Մարդ ապուշ կը կրթի երբ կը տեսնէ մէկը հասած արքայական բարձրութեան, ուրկից— յղփացած անոր ընձեռած առաւելութիւններով, — սըրուած պիտի ըլլար իրեն շնորհքի գանձեր տեղալ իր բո-

լորտիքը. հակառակ ատոր ան լեղի և թունաւոր լորձուք կը սրսկէ աջ ու ձախ. մէկ ձեռքով կը շարժէ սարասուր դաշոյնը, իսկ միւսով կը յօրինէ սպանդի Դանայեան Կարասը անյատակ, զոր իր բազմամիլիոն զոհերը բնաւ չի պիտի կրնային լեցնել: Ու մենք կը մղուինք անգամ մըն ալ մտածելու, մարդ կայ որ հրեշ կը ծնի, մարդ կայ որ հրեշտակ...:

Սուլթան Համիտի դերը չի վերջանար իրմով, անիկա հոգ կը տանի որ յաւերժանայ իր սկսած անօրինակ մահացումի ձեռնարկը. ու այս անգուն է որ իրեն սարքել կուտայ դպրոց մը որուն մէջ պատրաստուեցան և հասան հարիւր հազարներով արժանաւոր սաները իրեն: Եթէ Օսմանէն Ֆաթիհ, Ֆաթիհէն Ապտիւլ Ազիզ անպակաս են եղեր պալատական ոճիրները և անհաշուելի էնթրիկները սուլթաններու կենցաղին մէջ, Ապտիւլ Համիտ այսուհանդերձ կը ներկայանայ գերազանց առաւելութեամբ հասարակաց դատաստանին, կազմակերպելով պետութեան հիմերը քանդող այն քաղաքականութիւնը, որով ոտքի կը հանէ իր ցեղին է՛ն արիւնոտուշտ զաւակները. կը լծէ գտնոնք գործի, գլուխ հանելով իր հպատակասպան ծրագիրը, որուն իմաստն ու արժէքը ինք միայն կ'ուզէր գիտնալ: Իրմէ առաջ ծանօթ կամ անծանօթ խորհրդականներով կ'առաջնորդուէին սուլթանները. ամոնք յաճախ, իրենց գահոյքի վրայէն, կը գործադրէին թելադրանքները զիրենք չըջապատող գոեհիկ հացկատակներուն: Համիտ կ'երևայ մական ի ձեռին, և ահա՛ մէկկողմ կը նետուին մակարոյծները ամենքն ալ և անարգ քուրջի կոտորներու նման կ'արձակէ անցեալէն մնացած կարևոր և անարժէք հրիտակները. ու ատոր վրայ է որ բոլոր Միտհատ, Զիա փաշաները եւ Քեմալ պէյերը, բոլոր Օտեանները կ'աքսորուին, կը

մահացուին, կը հեռացուին, գործի կրկէսէն. զէջ բանտերու խոնաւութեան մէջ կը քաւեն անոնք իրենց սահմանադրական որոճումներն ու ազատական ձգտումները, կամաւոր տարագրութեան մէջ ողբալու ճամար Թուրքիոյ անխուսափելի անկումը:

Ապտիւլ Համիտ կը դառնայ տէրն ու տիրականը կաղութեան: Այլ ապահովաբար գիտէ թէ քանի պարկ ալիւր մտաւ Ելլազը: Գաւառի է՛ն խուլ անկիւնն անգամ առաքուած ուսուցիչն կ'ենթարկուի իր վաւերացումին: Ասով է որ ինքը կ'ըլլայ վարիչն այն զբոսորդին զոր պիտի գարձնէր գալիք սճիւրներու, մարդասպաններու և իր գործակիցներուն մարզաբանը:

Ատեն մը, երբ նոր դրաւ անկիւնաքարերը իր եղբնապարծութեան վարժոցին, իրեն թեւթիկունք էին Գատրի պէյերը, Ահմէտ, Նազըմ, Պահրի, Հասան փաշաները, երբ անդին կը զգեստաւորէին իր գեհննադարոցին մէջ էնվէրները, Ճավիտները, Թալէաթները, Ըսմէթները և Մուսթաֆա Ինճալները: Մանաւանդ այս ետքիները, ամօթով չէ որ պիտի թողուին իրենց թանկագին ուսուցիչը, ինչպէս Գերմանիոյ Վիլհելմ Բ. -ը որ շրկնեցուց երկաթէ նախարարապետը, Հէրպէրթ Պիզմարը, զոր և օր մը լաթի կտորի մը պէս անկիւն մը նետեց. այնպէս ալ Սուլթան Համիտ պիտի արձակուէր Իզմիրի մէկ խողջը, ուր պիտի մահաւոր երգելով:

«Պիր վագըր իտի պեմ գուլ դեմ իտիմ»:

Մինչ միւս կողմէն պատմութիւնը, այդ անհամբեր բայց պաղարիւն արձանագիրը, պիտի խարանէ անոր ճակտին ամենասեւ վճիռն իրեն, արիւնոտ դահիճի վճիռը որ պիտի շարունակէ նոյնը մնալ դարեր ետքն ալ, արժանանալով սերունդներու անէծքին, որոնք թուք ու մուր պիտի քսեն յիշատակին մարդու

մը անխղճահար բառին ամենալայն իմաստով, որ գազան ծնաւ, այնպէս ալ ապրեցաւ և մեռաւ:

..

Բարոյագիտութեան ընթացքներու մէջ մենք կը հանգիպինք յաճախ, արժէքներու գնահատումի զըլուխներուն մէջ արթուն վարկածի մը, ուր մարդը կը գատուի իր գործերէն. անկասկած չի պիտի կրնայինք վատ կամ լաւ կարծիք մը յայտնել անձի մը մասին: որուն կապուած են ձեռքերն ու ոտքերը. ուրեմն, որպէսզի կապեալը արժեցնէ ինքզինքը, ասպարեզ տուէ՛ք և ան ցոյց պիտի տայ ձեզ թէ քանի՛ ընդուն կարելի է նշանակել իրեն՝ իբր գին: Սուլթան Համիտի գահընկեցութենէն վերջը հրապարակը մնաց անպատասխանատու մարդոց՝ մասնաւորաբար իթթիւատականներու ձեռքը. ազատական, բռնաւոր, պատեհապաշտ, ասոնք նախանձը պիտի շարժէին իրենց վարպետին, Սուլթան Համիտի. ատեն մը կար որ վարժապետին գայլ էր դրած անոնց բերնին և բազուկներուն. ատեն մըն ալ, նորածագ Սահմանադրութիւնն որ շղթայ էր զարկած անոնց ապերաստութիւններուն. ասպարեզ հարկ էր որպէսզի իրենց իսկական գոյներով հրապարակ իջնային էնվէրն ու Թալէաթը. առիթը ներկայացաւ համաշխարհային պատերազմով. օգտուելով անոր յայտարարութենէն, համաթուրանական գաղափարի այդ նոր ծաւալիչները, սկսան նոյնքան դիւային ոճիրներ նիւթել որքան Ապտիւլ Համիտը: Ի՛նչ կ'արժէր Ատանայի ջարդը: Ի՛նչ փոյթթէ Պապիկեաններ կանգնէին դէմերնին. ամէն պարագայի մէջ, Արևելեան նահանգներու մէջ հայ ցեղէն մեկ երկու միլիոնի դոյութիւնը լուրջ վտանգ մըն էր Թուրքիոյ համար. հաւասարութեան, եղբայրութեան

գաղափարներէն գերիվերոյ էր թրջութեան ուղղափառ շահը: Վերէլմի կուշտին, լծուելով պատերազմի, ազատ մեծ պետութիւններու անմիջական միջամտութենէն, պէտք էր արմատէն ջնջել Փօքր Ասիոյ Հայութիւնը, մէկ անգամ ընդմիջո կարգադրել հայկական Հարցը դարերու մղձաւանջը նոյնիսկ եթէ հայերը շատ հաւատարիմ և շատ անկեղծ կ'եցուածք ունենային:

Հապա ո՛ւր մնացին հաւատարմները հաւատար իրաւունքներու, խոստումները ազատութեան, աւաղները սրտակոծ ողբերու. ո՛ւր արցունքները որ թափուեցան եկեղեցիներու բեմերէն, գերեզմաններու վերայ, ազատութեան ըլուրներու սարերէն. ո՛ւր մնացին Միութեան Դաշին հանգիստուր ուխտերը, որոնք կապուեցան ամենուրեք Պոլիս և զաւառները, արտասահմանի մէն մի անկիւնը, որտեղ տարագիր հայեր ու թուրքեր կային. ո՛ւր մնացին կուրծքերնին ծեծող այն օսմանցիները երէկուան որոնք արտօսըրը աչքերնուն սիրազեղ համբոյրներու և գիրկընդիսանումներու մէջ «եղապար եմք մենք որ մրրկաւ էինք զատուած» կ'երգէին. ինչ՞ու Յուդաները, ժամանակաւոր գինարբուքէ մը ետք, այդքան շուտ խզեցին իրենց նըռած կապերը.— որպէսզի իրենց հարազատ արժէքով գուրս գային իթթիհատական ձագերը որոնց մէջ ալ համարձակ կը խօսէին հակուժը, խառնուածքը, ժառանգականութիւնը, կաշին ու դիրքը փրկելու անդոնը...

Ի՞նչի մը ազգային երգեր, բուռ մը ազատաշունչ ճառեր գիտակից ու չքջահայեաց զարթումի նշաններ պատրուակ պիտի ստեղծէին որ օսմանեան սահմանադրութեան ուխտադրուժ ասիւրիաները դառնային զէպի դաւանանութիւն, որուն այնքան լաւ ուսած էին

դասերը աքսորական արքային դպրոցին մէջ: Վերականգնուած Միացեալ Ընկերութիւնները, Դպրոցասէրը, Ազգային Ժողովը, Պալատիոյ Օճախը, գաւառներու կրթական շարժումը, Պոլիսի և կուսակալութիւններու լրագրական և գրական եռուզեքը պիտի մեկնուէին իբր յայտարարները քաղաքական նուաճումներու, այն թուրքերու կողմէն որ շատ լաւ կը ճանչնային մեզի և մեր անկեղծութեան ճշմարիտ սահմանները, երբ մենք զիջեր էինք նստիլ Սապահետարներու և Ահմէտ Րիզաներու հետ, շուրջը միւսնայն սեղանին, փրկելու համար Թուրքիան բնաջնջումէ, խոստանալով բերել մեր բոլորանուէր աջակցութիւնը, մեր միջոցները, դրամը, հօգին և կեանքը:

Ապացո՞յց... — Բայց կա՞յ արդեօք թուրք մը, որ կարենայ երկմտիլ մեր ուղղամտութեան վրայ. ո՛ր ատեն նենգամտօրէն ներկայացանք մենք: Ազգին թունդ յեղափոխական կուսակցութիւններէն սկսելով է՛ն պահպանողականները հաւատարմութեան երդում ըրին, շատ բան զեղչեցին իրենց ծրագիրներէն. զբանուեցան որ շատ աւելի առաջ ալ գացին. անձեռնմխելի հաշակեցին սուլթանի անձը, բայց ասոնք անբաւական պիտի ըլլային գոհացնելու համար նոր ու իթթիհատական Թուրքիան. պէտք էր հանգիստ քունքնանալ պատերազմէն ետք. պէտք էր մէջտեղէն վերցնել ներքին թշնամի նկատուած հայութիւնը. ընկուէին այն՝ ինչ որ ըրեր էին Թուրքստանէն մեկնած առաջին հորդանները իրենց. ընկուէ էին այն, ինչ որ կ'ընեն մինչ օրս ալ մահմետական ժողովուրդները իրենց արշաւանքներու միջոցին... զըբա՛լ (կոտորած):

Դըբա՛լ... Ահա թէ ի՞նչ կ'օտնան էնվէր ու Թալէաթ զիկատաորները օսմանեան պետութեան, որոնք սարսափաւար պատերազմի արագ վերջաւորութեան հե-

ուսպատկերէն, կը փութան իսկոյն կազմակերպել մահացու հարուածը՝ մասնաւորաբար հայ ժողովուրդին և ընդհանրապէս բոլոր թուրքիաբնակ հասարակութիւններու գլխուն: Կը գիմեն հուրի ու սուրի քաղաքականութեան, երկնելու համար միատարր, միացեղ թուրքիան՝ ու հակառակ համաձայնական պետութիւններու պայման դրած պատասխանատուութեան, կը ստորագրուին հայկական նոր ձևի կոտորածները և տեղահանութիւնները. Պոլիսէն, Բիւթանիայէն, Կարինէն, Տիգրանակերտէն, Խարբերդէն վերջապէս ամէն այն տեղերէն ուր հայութեան բեկոր մը կայ, ծայր կուտան տարագրութիւնները, ձև մը բնաջընջումի որուն գաղափարը չունեցաւ Ապտիւլ Համիտ ճամբայ կ'իյնան միլիոնաւոր հայերու կարաւանները. լեռ ու ձոր հայ էր կտրած և ուղիներու եզերքը, գետերու մօտ, լեռներու անցքերուն վրան, անտառներու խորերը կը սկսին մարդագոհները. ամենաստուար մեծամասնութեամբ, իւրաքանչիւր հարազատ թուրք կը փոխուի գահիճի մը. կը կուրացնեն աչքեր, կը պատռեն սիրտեր, գետամոյն կը խեղդեն իրարու ազուցուած բազմութիւնները, գրեթէ անխտիր կը բռնաբարուին քալելու վիճակին մէջ գտնուող մանուկները. Սերաստիան կը դառնայ անսպառ խարոյկը անհամար զուարակներու. տուայտանքի, անլուր խաչելութեան գողգոթային վրայ իրենց յետին շունչը կը փչեն անվերջ ու անվերջ շարաններ. անտէր հօտերու պէս, մանաւանդ հայ թեղն է, որ կը քշուի Գըզըլ-Ըրմաքէն. Միջագետքէն, Կիլիկիոյ տափաստաններէն մինչև Տէր Զօր, Եփրատի վերին ափերէն մինչև Գառլըք վերջին հանգրուանը մեր ազգային դժբախտութիւններուն...

Գառլըք և Տէր Զօր... Մարդկային հնարագի-

տութիւնը և զրիչը երբեք պիտի չկրնան նկարագրել այդ երկու պատուհասները, անտարբեր ու անկարեկիր ականատեսները հայ մարտիրոսագրութեան, մին առջինը, մուտքի գուռը սպանդանոցին ու մակաղատեղիին շուրջ երկու հարիւր հազար հայ տարագրեալներու, ուր կը խաղան ամէն սեռէ և ամէն հասակէ մեր ցեղակիցները. երկրորդը՝ բուն իսկ սպանդանոցը՝ Տէր Զօրը, որուն ամենակուլ երախը կուլ կուտայ անյագօրէն, այդ երկու հարիւր հազարի բազմութիւնը կենդանի և կիսամեռ. գեռ մինչև օրս ալ կարելի է անխտիր հանդիպիլ այդ սպանդանոցին շրջակայքը, ոսկորներուն՝ նահատակուած բիւրաւորներու, անմուրազ մահացած հայորդիներու որոնց վրայ չերգեցին քահանան ու դպիրը. որոնց վրայ պուտ մը ջուր և ափ մը հող նետող չի գտնուեցաւ, որոնք մերկ ու բոպիկ դիակնացան ու կմախքացան, իբր յաւիտենական նախատինք արձակուած մարդկութեան երեսին...

Առիթն ունեցէ՛ք խօսեցնելու քչիկ մը խիղճ ունեցող Հալէպցի, Տէր Զօրչի, Բէսէլայնցի կամ Շէտատացի մը, յուզման և սարսափի ցնցումներ պիտի ունենայ ան. իր աչքերուն առջին գործադրուած սպանդաներու վերյիշումն ոտքի պիտի կանգնէ բոլոր ջիղերը. խօսեցուցէ՛ք և ահա ձեր գազաթներուն վրայ ձեր մազերը պիտի ցցուին ողնի փուշերուն պէս. ան դժուարութիւն պիտի կրէ, կենդանի խօսքով նկարագրելու այն արհաւիրից տեսարանները որոնց արձանացած վկան նղաւ ինք, ուր ամէն բան էին էնվէրի և Թալէաթի հրամանները. խօսեցուցէ՛ք վկան և ապահովաբար ան պիտի մաքառի ստուերներու հետ, պիտի աշխատի հեռացնել իրերայաջորդ պատկերներ մօտիկ անցեալին, պատկերներ խողխողուած մարդերու,

աղջիկներու, կիներու, տղոց և յուսահատ պայքար-
 ներն, աղերսուած շնորհներն, որոնցմով այս եղկելի-
 ներն համբուրեցին վերջին անգամ մըն ալ, ի դին
 կեանքի, փէշերն իրենց դահիճներուն և մերժուեցան:
 Պատմական Սողոմ Գոմորի ծուխն ու կրակը ոչինչ
 կ'արժէր Տէր Զօրի բոցերուն քով, հուր զոր վառեցին
 իթթիհատականները, յանուն վրէժխնդրութեան պայ-
 մանի մը, որուն հաշիւն պիտի պահանջէր լետա-
 գային դալիք հայ սերունդը էնվէրներէն ու թալէաթ-
 ներէն:

Տարիները կ'անցնին, տասնամեակները կը յա-
 ջորդեն իրարու, բայց ո՛չ մենք և ոչ ալ թուրքերը
 կրնանք մտնալ յիշատակը այն արիւնի խրախճանքնե-
 րուն զորս սարքեցին իթթիհատականները, խրախ-
 ճանքներ, որոնք ծրագրուեցան նոյն այդ կազմակեր-
 պութեան օճախներուն մէջ և գործադրուեցան սխտե-
 մատիկ կերպով հայրենիքին ծառայած ըլլալու վատ-
 շուէր համոզումով:

Ինչո՞ւ, երբ զինադադարի փողերը հնչեցին, էն-
 վէրները և թալէաթները ծակամուտ եղան. ինչո՞ւ ա-
 պաստանեցան թուրքեստանի, Թիֆլիսի և Պերլինի
 թագստոցները, համարձակութիւն շունեցան կոկոզա-
 վիզ ման գալու Աթամպուլի փողոցներուն մէջ, պաշտ-
 պանելու համար իրենց արկածախնդրական թէզերը.
 թէզեր, — ըսենք արդարութիւն ըրած ըլլալու համար,
 — որոնց գէմ ի գուր ծառացած էին մինչև իսկ պա-
 տերազմի շրջանին, մտաւորական թուրքեր, գինու-
 րակական թուրքեր, հասարակ քաղաքացիներ եւ կի-
 ներ:

Ուղեկորոյս անհետանալ ուղեցին հայութեան
 շարգարարները, որովհետև կատարելապէս գիտէին
 թէ Հայ Նեմեսիսը չի պիտի ուշանար համարն ուղե-

լու իրենց գործած աններելի աւերին. գիտէին թէ
 պիտի շողային իրենց գլխուն Թէհլէրեաններու վրէժ-
 խնդրական դաշույնները, որոնց հարուածներուն ներ-
 քե պիտի կքէին թալէաթներն ու ձիվանչիրները...


Ու անոնք ինկան և դեռ ևս պիտի իյնան Յու-
 դայի պէս, Ռասիութիւնի պէս, Սուլթան Համիտի՝ ի-
 րենց մեծ վարպետին պէս:

Հիմա ալ հանդիսատեսներն ենք նոր և աւելի մեծ
 երեւոյթներու, Գեմալական Շարժումին, իսկական
 թուրք հանրապետութեան նոր շղաճութիւններուն,
 երբ Գարապէթիւններ և Համէթներ կը ներկայանան
 հասարակաց դատաստանին, որպէս թէ նորագոյն ծը-
 րագիրներով, թխուած էնկիւրիի անբարոյ պարիսպ-
 ներուն մէջ, որոճացուելու համար ժընեվ, Փարիզ ու
 Լոնտոն: Ու ցոփութեան երկնած խրախճանքներու
 կողմ ի վեր — խրախճանքներ զորս հազար տեսակ գայ-
 թակղութիւններով կ'երփնեն Միլլի ժողովի երեսփո-
 խանները, ցորեկ և գիշեր — միշտ ալ նոր տեսակէտներ
 կան երկրին մէջ, դեռ ևս գոյութիւն ունեցող ոչ-
 մահմետական ուսյա բեկորներու նկատմամբ: Այդ տե-
 սակէտները ձուլումի տեսակէտներ չեն միայն:

Ճիշտ ասոր համար է, որ համոզումով կրնանք ըսել
 թէ՛ լուրջ վտանգի ներքե կը գտնուին այժմու բե-
 կորները երբեմնի մեծ զանգուածներուն, որոնք չկան
 հիմա:

Մենք շատ լաւ կը ճանչնանք թուրքիան և մա-
 նաւանդ մեծամասնութիւնը այն թուրքերուն, որոնք
 արտաքին ձևերով և ծեծեծութեամբով բարի մարդու
 ապաւորութիւն ձգել գիտեն, բայց նուազագոյն ա-
 ութիւր տուէ՛ք, ասպարէզ բացէ՛ք ու այդ բարի մարդիկը
 ճիհատ պիտի պատան հաւար պիտի կանչեն ու նոր ա-
 րիւններ պիտի թափեն հայու արիւն, յոյն արիւն,

63829. 67



ոչ-մահմետականի արին: Մենք տեսեր ենք վեհաճանաչ
 յայտարարուած բացարձակ միապետական Թուրքիան .
 տեսանք երկիցս սահմանադրական Թուրքիան, կը
 տեսնենք հիմա հանրապետական Թուրքիան, ժամա-
 նակները ու անձերը փոխուեցան, սակայն խորքը՝ շէ
 փոխուեցան հոգեբանութիւնն ու վայրենի բնազդնե-
 րը: Տարբերութիւն կայ պիտի ըսէին խանգաւազ մը-
 աածողներ. և մարդիկ որ նոյնիսկ կշռել զիտեն ու
 չափել, չէ՛ արդի Թուրքիան առջի Թուրքիան չէ՛ պի-
 տի ըսէին: Բայց մենք ձեռքը սուրինք այժմու զեկա-
 վարներուն հալուամշ երկիր մը, գրեթէ անմարդաբը-
 նակ. ու ի հեճուկս ատոր, քեմալական Թուրքիան ան-
 վթար դուրս եկաւ հարազատ յաջորդ նախկին ըէ՛ժիմնե-
 րուն: Գեմալական Թուրքիան այն Թուրքիան չէ՛, որ
 ինքնակամ աքսորի մղեց Պոլիսի քանի մը հարիւր
 հազար բնակիչները. այն Թուրքիան չէ՛ որ հազիւ հազ
 ժամանակ տուաւ կիլիկիոյ քրիստոնեաներուն ա-
 պաստանի մօտաւոր սահմաններուն մէջ. Գեմալա-
 կան Թուրքիան այն Թուրքիան չէ՛ որ իզմիրի ծովա-
 փէն Արշիպեղագոսի ծանծաղուտները թափեց շուրջ
 միջ միլիոն և աւելի ժողովուրդ:

Ոճի՛ր, սոսկ ոճի՛ր. ահա՛ թէ ինչ կը բնորոշուի
 Թուրքիա ըսելով. անհատի և հրապարակագրի մեր
 համեստ հանգամանքով մենք որ հնարաւորութիւն ենք
 ունեցած գէզգերն ուսումնասիրելու, պատմութիւննե-
 րը սերտելու, այն վերջնական համոզումին ենք լռն-
 դած թէ՛ Թուրք պետականութեան գոյութիւնը ժա-
 մանակագրական ահաւոր սխալ մըն է. ըլլայ Փօքր-
 Ասիան, ըլլան իր եւրոպական կատար-բրդուհ հողամա-
 սերը, այն ատեն միայն կը խողողին, երբ աշխարհի
 երեսէն խլուի նեաուր թրքական անարգ եաթազանը,
 բան մը, որ անպատճառ աեղի պիտի ունենայ, որ-

քան ալ այդ բանը արժէ նոր կեանքեր եւ նոր ա-
 րեւներ:

Ասիական կարծիքը չէ եւեթ հայ կամ եւրոպացի
 ողջամիտ խորհողներու. քիչ չեն նոյնիսկ օսմանցի
 ծագում ունեցող անհատներ որ մեզի չափ համոզուած
 են թէ՛ բնա մըն է օսմանեան պետութիւն ըսուածը .
 անոնք ալ կը պնդեն թէ՛ բաւական չէ զարդարուիլ
 ճիւղաբերիքի կեղծ ու պատիւ փեսաւորներով, բժշկե-
 լաւ համար Թուրքիոյ մարմին սպասանացոյ փառա-
 ւոր: Չեմք անոնք, անա անհատներ սկսեր են աշ-
 խարծի շարս հովերուն չհոյակել թրքական ոճիները և
 զրգոյհը, զոր Թուրքերէն բնագրէն թարգմանելով այ-
 սոր հուսանք հայ ընթերցողներուն, կը ներկայացնէ
 ատոր ակներև մէկ առհաւատչեան:

Այսօր, յանուն Հայ Դատին առած կ'ըլլանք,
 շուրջ հարիւր ամիսի և շուրջ ելեր, որոնցմով կը
 բացատրուին Հայ Եղեռնին կարգ մը գրուածները,
 գրուածներ զորս կը պարտինք Թուրք գրելի մը,
 Մուսթաֆա Նետիմի, գրագետ մը իր կարգին, բնիկ
 Պոլսեցի, որ շատ մօտիկէն ճանչցած է Սուլթան Հա-
 միտը, Բարձրագոյն Դուռը, Սպարապետութիւնը,
 դաւառները. 1880—1908 եղած է զոնը Համիտեան
 քեմալաճոյքներուն ու կրկին զոնը իթթիատական-
 ներուն. կը գտնուի Հալէպ ուր համաշխարհային պա-
 տերազմի ընթացքին կը դիտե Նոր Թուրքիոյ վայրա-
 դութիւնները, Հայ Տիասրօրան և ջարդերը:

Չեմեցնելով այն վաւերաթղթերէն, որոնք Մուս-
 թաֆա Նետիմի ձեռքը կը մնան, մարդասիրական ըզ-
 դացուներու անչէջ վառարան մը եղած է ինք. Երե-
 սուլնըհինգ տարիներու աքսորական կեանքը՝ չէ կեր-
 ցած մարել իր ազատատենչ ձգտումները զորս չէր
 քաշուած խոտովանիլ նոյն իսկ Սուլթան Համիտի

ներկայութեան. գիտցած է քննադատել յոռի արարք-
ները վերին կամ ստորին կարգ մը զաշաօնեաներու,
որոնք վատութեան մէջ կ'որոնէին կեանքի և գէրքի
յաջողութիւնը:

Ազատախոհ ոգին և մարդասիրական հակառակները
շատ սուղի են նստած Մուսթաֆա Նէտիմի. ատոնց
պատճառով է որ անիկա ձեռք կ'առնէ աքսորի ճակա-
նը. կը քշուի Տիգրանակերտ, Խարբերգ, Իզմիր, Հա-
լէպ և Տէր Զօր. այս աքսորները կը դիպին իրեն իթ-
թիհատի և Սուլթան Համիտի ժամանակ. Մուսթաֆա
Նէտիմ հալածական Համիտէն, Էնվէրէն և Թալէաթէն՝
հալածուած է նոյնքան ալ Մուսթաֆա Քեմալէն, որ
երկու ափ կարմիր սկիւր կը խոստանայ այն համար-
ձակ թուրքին, որ պիտի ժախէր իրեն՝ Քեմալին տանիւ
Նէտիմի գլուխը:

Ընթերցողը պիտի տեսնայ որ, դէպքերը, որոնք
կը շարայարուին մեր թարգմանութեան մէջ, կը բո-
վանդակեն 1890—1918 շրջանները. անոնք կը սկսին
Պոլսոյ Պատրիարքարանի ցոյցով և կը հասնին մինչև
Զինադադարը:

Երկու բան ուշադրաւ է Մուսթաֆա Նէտիմի անձին
մէջ: Նախ՝ ճշմարտախօսութիւնը, այն չափով որով
օգնած է իրեն իր յիշողութիւնը, լիտոյ սատարը զոր
ընձեռած է հայ ցեղին, որու տառապանքը արցունք
միայն խլած է անոր բարի աչքերէն: Ասոնցմէ դուրս
մենք ներողամիտ աչքով կը նայինք իրազուրկեան ան-
համապատասխան այն քանի մը սխալներուն որոնք
գործուած են իր պատմութեան ընթացքին, սխալներ
զորս անփոփոխ թարգմանեցինք և պահեցինք այն-
պէս ինչպէս որ էին անոնք թուրք բնագրին մէջ:

Մուսթաֆա Նէտիմի՝ Հայկական կոտորածներու և
տեղահանութեան միջոցին հայերուն ըրած սատարի

մասին կենդանի վկաներն են Զէյթունի առաջնորդ
Բարթողէմէոս վրդ. Թագճեան, Սմբատ Եպիսկոպոս
Սալապաշեան, Մեգրակ Կէպէլեան, Յովսէփ Պօյաճ-
եան, Մինաս Գուլուսթեան, Յարութիւն Պէտէլեան,
Յովհաննէս Սայապալեան, Արմենակ Պէզիրճեան, Յա-
կոբ Ճէպէճեան, որոնց գրուատական նամակները,
ժօտաւոր թուականներով, Մուսթաֆա Նէտիմ իր ձեռ-
քին առկ ունի:

Աղքեսամղորիս
20 Յունիս 1925

ԱՐԵԱԿ Ս. ՇԱԼՃԵԱՆ

ՀԱՅ ԵՂԵՌՆԸ ≡

ԽՄ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Մէկը չի մնաց որ լսած չըլլայ և չգիտնայ քարե-
րը սարսեցնելու չափ դառն աղէտները և դարհուրելի
աստիճանը այն հարստահարութիւններուն, զորս
թուրքերը և գործ զրին հայերու քնկատմամբ:

Ի՞՞մ գրի առած իրողութիւններս կը պարունակեն
անձամբ տեսած, ակզեկացած և կամ յոյժ հուսաստի-
օրէն իմացուած գէղջեր: Իրպսուածը առմիշտ պահեց
զես հայկական հարցին մէջ:

Եջերուն ներքև քաշուած գիծերուն տակ արձա-
նագրած եմ, բուն իսկ խնդրոյն հետ կապ չունեցող,
տակայն շատ մը անձերու անծանօթ եղած իրերը:

1890 տարւոյն Գուրպան Գայրամի առաջին օրը,
ըստ սովորութեան Սուլթան Համիտ իջած էր Պէշիկ-
թաշի Տօլմա Գանչէի պալատը: (1)

(1) Բամաղանի և գուրպան պայրամներուն Սուլ-
թան Համիտ Սըլայման Տօլմա Գանչէի պալատը կ'իջ-
նար մեծաշուքօրէն և նոն պաշտօնական ընդունելու-
թիւն կը կատարէր:

Այսպէս պատրաստութիւններ կը սկսէին պայրա-

Երբ աւագանին, նախարարները, ուրիշ աստիճանաւոր անձնաւորութիւններ իրենց շնորհաւորութիւնս

մէն քանի մը օր առաջ: Ճամբաները աւագ կը թափէին: Հաւաքելով կը բանտարկէին կայսեր անցնելիք ճամբուն վրայի տուներուն և խանութներուն տէրերը: Կը խուզարկուէին խել մը բնակարաններ և կրպակներ: Կը քննուէին ու կը զննուէին հորերը և ջուրի ճամբաները: Ռուսեր և վառօդ կ'որոնուէին: Պայրամի առաւել կանուխ Սուլթան Համիտը կը բազմէր քառածի կառք մը: Այս կառքը ոսկեգօծ, զարդարուն և մեծաշուք էր: Հազարաւոր զօրքերու հսկողութեան ներքեւ ըլլալու պայմանով, Համիտ կ'երթար Պէշիկթաշի Սինան փաշա մղկիթը: Մղկիթին առջին բոլոր աստիճանաւորները կ'ընդունէին զիւքը. հագած իրենց մեծ համազգեստները: Սուլթան Համիտ կը քաշուէր «Կայսերական Աղօթատուն» յորջորջուած սենեակը և հոն կը կատարէր Պայրամի Նամազը:

Ան՝ Նամազէն վերջ կը հեծնար ձի մը, որ մօտեցուած կ'ըլլար «Կայսերական Աղօթատան» դրան: Աստիճանաւորներն ալ ձիեր կը հեծնէին: Այն ատեն աստիճանաւորները բանակ մը կազմելու չափ շատաւոր էին: Երկուստեք զինւորները, սպաներով բարեի կը կենային: Այսպէս կ'երթային Տօլթա Պահչէի պալատը: Մեծ ու պզտիկ, պալատին պատկանող պաշտօնեաները քալելով կ'երթային կայսեր ետեէն: Սուլթան Համիտ կը մտնար Գուպպէ Ալթը կողջուած խիստ լայն դահլիճին կողմնակի մէկ սենեակը: Աստիճանաւոր անձինք ալ, սպասարկող պաշտօնեաներու միջոցով կը տեղաւորուէին Գուպպէ Ալթըի կայսերական գահուն բոլորտիքը:

ները կատարէին, Սուլթան Համիտը հանգստանալու համար իր սենեակը կը քաշուէր. մօտ կէս ժամ ետքը

Գահուն երկու կողմը և ճիշտ դիմացը փոռած էին երկու կարգ գետնի կապերտներ:

Գահը հրաշակերտ անկողնի մը ձևով ահանակուտ և ոսկեպատ է: Երկու կողմէն ունէր մէյմէկ ոսկեթել ծոպ:

Մարաջախտը կամ նախարարներէն մին ձեռքը կ'առնէր ծոպը:

Ըսած ատեննիս, պալատական մարաջախտ Ղազի Օսման փաշան կը բռնէր ծոպը:

Գահուն ետեւը կը շարուէին պալատան պաշտօնեաները և արքունի քարտուղարները:

Եպարքօսը և պաշտօնանկ եպարքօսները աւագանիէն սկսելով՝ ընդունելութեան կարգով կուգային և կը համբուրէին ծոպը:

Կրօնաւորները մէջտեղի կապերտին գալով, փոխանակ ծոպին կը համբուրէին կայսեր փէշը:

Վերջանալուն Կայսրը կը քաշուէր սենեակը:

Կէս ժամ հանգստանալէ ետք, կրկին գալով կը նստէր գահը:

Պալատական, անձնական դաշնուն պատկանող պաշտօնեաները կը սկսէին ծոպ համբուրելու:

Այս արարողութեան միջոցին ոմանք քանի մը խօսքով, ոմանք աստիճանով և շքանշանով կը պատուուէին:

Ընդհանրապէս դեսպան և դեսպանատան պաշտօնեաները և ճամբորդութեան քերամամբ Պոլիս գտնուող օտարազգիները դիտելու կուգային իրենց ընտանեօք:

կրկին դառն բազմելով. այս անգամ կը սկսեք ընդունել պալատի պատկանողներուն շնորհաւարութիւնները:

Ան տարին, դեռ առաջին կարգի շնորհաւարութիւնները չէին վերջացած. երբ արքունի գթականատան արարողագրեա Միւնիւր փաշան (2) իրեն ժողովուրդականներէն բաներ մը ըսաւ:

Սուլթան Համիտ խոժոռ գէմքով մը ձգելով ընդորհաւարութեան դակիճը, քաջուեցաւ իր սենեակը: Ամէն ոք հուսնեց որ ասիկա արաւքոյ կարգի պատեռոյ մը առաջ եկած էր:

Վայրկեան մը ետքը պալատական քարտուղարայեա Սիւրէյա փաշա, (3) սենեկապան Էմին (4) և Արիֆ (5) պէյերը և քանի մը մօտ եզոզներն ալ

(2) Միւնիւր փաշա արարողայեա և արքունի գթականատան թարգմանն էր. ազնիւ և շնորհալի տնձմըն էր:

(3) Սիւրէյա փաշա Սուլթան Համիտի քարտուղարայեան էր, չարութենէ չէր ախորժեք, քարիքը կը սիրէր, քարեսէր անձ մըն էր:

(4) Պալատական Էմին պէյ, ազգութեամբ վրացի պատուաւոր, ուսեալ անձ մըն էր: Սուլթան Համիտ խիստ չար և անիծեալ մարդիկը պաշտօնի կանչելով հանգերձ, կը պահէր արժեքաւոր մարդիկ ալ միւնիւրն առան:

(5) Պալատական Արիֆ պէյ, դպրոցական, երթաւոր, շուտ էր Սուլթան Համիտին կամակրութիւնը: Վերջերք Եւրոպա փախաւ և ձեռք բերած պատկանութեան վրայ թէն վերադարձաւ բայց չի կրցաւ փանալ ետիկին ազգեցութիւնը և պատիւը:

մտան կայսեր սենեակը: Տասնըկինգ վայրկեան Վերջը քարտուղարայեա Սիւրէյա փաշա դուրս ելաւ սենեակէն: Ան յառաջացաւ մեր դռնաւած կողմը « Ընտրով սեկո'ւր » ի նշան տուաւ: Ես այն ատեն Սուլթան Համիտի քարտուղարներէն էի և տուաւ կը գանձուէր Գուլ-Գարու:

Իսկ մը հոգի մտեցանք Սիւրէյա փաշային: Փաշան կանչեց զիս անուսովս: Վախեցայ: Յառաջացայ յուզումովս:

Ըսաւ.

— Ես առ Գուլ-Գարու գնա՛: Դիպքը յննէ՛: Ուստի կանուլթեան նախարար Նազըմ պէյն ալ հօն է. զինքն ալ տես, սեղեկութիւնը ա՛ռ: Վեկափոռ Յերիիս լուր կը սպասէ կոր:

Ասիկա ըսաւ և դարձեալ մտաւ Սուլթան Համիտի սենեակը:

— Գուլ-Գարու ի՞նչ եղեր է. ի՞նչ պիտի քշենեմ. Ուստի կանուլթեան նախարարը Նազըմ պէյը չէ, Բեամիլ պէյն է: (6)

Շուարած վիճակի մը մէջ գացի գեպի գուար: Պարտէզ ելլելու պահուն թիկնապահներէն հանցեպե-

(6) Բեամիլ պէյ պատուաւոր, թոկապէս սասիկանութեան նախարար էր. Այո խնդրոյն պատճառով պաշտօնանկ եղաւ և ձերբակալուեցաւ: Յետոյ աքսոր ըլլալու պայմանաւ, պաշտօնեալ կարգուեցաւ իրեն քնակատեղի նշանակուած Մանիսայի գաւառակին: Հոն մեծաւ շառքի տնտէնէն, Եթէ այս անձը մնացած ըլլար սասիկանութեան նախարարութեան մէջ, թերևս ծանօթ հարստահարութիւնները չէին ըլլար: Բացէ ի բաց կը հաճառակէր պալատական լրտեսներուն:

ցայ հազարապետի մը (անունը չեմ յիշեր) . Գրաինք կը ցայաէր բոլոր մարմինէն : Բարեկեցի և՛

— Ուրկի՞ց այսպէս :

— Գու՛մ-Գարուէն , ըսաւ :

Ուզեց արագօրէն շարունակել ճամբան : Աճապարանօք բռնեցի թևէն :

— Ես ալ Գու՛մ-Գարու կ'երթամ կոր : Կալսերական հրովարտակ կայ քննութիւն ընելու համար : Սակայն ի՛նչ եղած է Գու՛մ-Գարու , խնդրը ի՞նչ է չեմ գիտեր . խնդրեմ քիչ մը տեղեկութիւն տուր ինձ :

Թիկնապահ պէյը իր խօսքերուն շտապ մը գնելով՝

— Հայերը ոտքի են ելեր Պատրիարքարանի մէջ : Զէնք են գործածեր . մարգիկ են մեռեր : Զօրք է եկեր Սպարապետի Գունէն , ըսաւ և հեռացաւ նեախ պէս :

Այն օրը ես ալ հագած էի մեծ համազգեստս : Հեծնելու համար , պալատէն ինծի համար յատկացուած էր ձեւաւոր գեղեցիկ կառք մը : Կառքս ձգեցի . նստայ վարձքով կառք մը , հին և կազմածները մաշած : Ծամբայ ինկայ Գու՛մ-Գարու : Կէտիկ Փաշայի զառիվարէն կառքս իջած ատեն՝ անընդհատ կ'որոնէի զէնքի ձայներ : Այսուհանդերձ ձայն-ձուն չկար : Միայն կը հանգիպէի կոր իրարու ետեւէ չընող զօրքերու : Կէտիկ փաշայի զառիվարին ստորոտը հասնելուս՝ հանգիպեցայ Ցայի Տիմիթրի անունով ծանօթ մարդու մը : Ցայի Տիմիթրի տէրն էր ընդարձակ գինետան մը , նանչքուած էր Գու՛մ-Գարուի մէջ և խաթրը կը սեպուէր : Գինետան առջև աթուռի մը վրայ ընկողմանած կլկլակ կը քաշէր կոր : Կառքը կեցնելով իջայ : Բարեկեցի եւ քովը նստայ : Հարցուցի իրեն խնդրոյն ի՛նչ և ինչէ՛ն ծագում առած քլալը :

Ցայի Տիմիթրի պատասխանեց անփութօրէն :

— Բան մը չէ . Ռօտսթօցի ձկնորսներէն անկիրթ ժարդուն մէկը սիրահարուեր է իր ազգականներէն աղջիկի մը , ուզեր է պտակուիլ աղջկան հետ , պտակ չէյնալուն համար պատրիարքը արտօնութիւն չէ տուած , ան ալ քանի մը դատարկապորդներ գլուխը ժողովելով եկեր է , կանուխէն գլուխները տաքցուցեր են , այսօր տօն ըլլալուն , պատրիարքարանը բազմութիւն կ'ըլլայ . ճիշտ արարողութեան ատեն աղմուկ են հաներ , զէնք են պարպեր քանի մը անգամ : Գնդակներէն մին հանգիպեր է ոստիկան Կարապետ էֆէնտին . խեղճը մեռեր է . քնականաբար եկեղեցիին խառնուեր է . հասարակութիւնը սկսեր է փախչիլ . զէպքը պահականոցէն կ'իմանան , ո՞վ գիտէ ի՛նչ ձեռով տեղեկացուցեր են որ զօրք եկաւ Սպարապետի Գունէն . Պատրիարքարանի և փողոցներու գլուխները պաշարուած են , մինչքեռ չորժեր գործը այսքան մեծ բռնել , յանցաւորները ձերբախալուեցան , պատիժին կը տրուի , կը վերջանայ , կ'երթայ :

— Այս ձկնորսներէն զատ խառնուող , զէնք նեատող չէ՞ եղեր :

— Բնա՛ւ :

— Շնորհակալ եմ :

Բաժնուեցայ : Գացի սրճարանապետ վանեցի Յակոբ աղային , օրուն ծանօթ էի պղտիկ տարիքէս , աւելի յիտակ անօր ձեռքը մեծցած էի : Յակոբ աղան յարգալիր վարմունք ունէր ամբողջ մեր ընտանիքին հանդէպ , և զիս կը սիրէր իր զաւկին պէս : Շատ մը տացի . արժանաւոր , նրբամիտ և մեծարելի անձնաւորութիւն մըն էր : Իրեն պատմեցի ինչո՞ւ համար և ի՛նչ ձեռով զալօ : Յակոբ աղան խոր մտածման մէջ ինկաւ , ըսաւ .

— Այս բանը նշանակութենէ զուրկ է , բայց կը

տեսնամ որ անիրաւ անզը փորձանք պիտի գայ հայե-
րոս գլխուն :

Փոքրիկ տարրերութեամբ մը հաստատեց Տայի
Տիմիթրիի յայտարարութիւնները : Անկից ետքը գիմե-
ցի ծանօթ անձերէս, եօթը սւթ հայ, յոյն և իւլաժի :
Գաղի պատրիարքարան : Հոն տեղեկութիւն հաւաքեցի
քահանաներէն, զինւորականներէն և ծառաներէն : Ե-
թէ ընդհանուր դիժ մը քաշէք լսած խօսքերու տակը
արդիւնքը կ'ըլլայ Տայի Տիմիթրիին յայտարարութիւ-
նը : Գոցի վերջապէս ստաիկաններու պահականց կոչ-
ուած հին շէնքը : Հոն էր նազըմ պէյ, որ նոր կարգ-
ուած էր ստաիկանութեան նախարար : Անկից առաջ
պաշտօնը՝ Բերաի կատալարչութեան, անկից առաջ ալ
քաղաքագրութեան մօտ մէքթուպիութիւն էր : Նա-
զըմ պէյին՝ Կայսեր կօզմէն՝ քննութեան համար եկած
ըլլալու ըսի . բարոյութիւն չփոթած խօսքի սկսաւ :

— Ամբողջ չարագործները ձերբակալուեցան, ի-
րենց գլխուն պիտի թափին լարիլ ուղած սաքայէլա-
կան գաւերնին : Կայսեր շնորհիւ, մէկ երկու օրուան
միջոցին ձեռք պիտի անցնին բարձր քօմիթէճիները :

Այս ձեռով շատ մը խօսքեր գրուեցեց :

Նազըմ պէյի խօսքերէն կռահեցի սրճարանապետ
Յակոբ աղային շատ շիտակ խորհած ըլլալը :

Շատ ազդուած բաժնուեցայ անկից, հեծայ ինձի
սպասող կողմս : Արագօրէն վերագարձայ : Ընդունե-
լութիւնը վերջացած, Սուլթան Համիտ վերագարձած
էր Երլուրը . անցայ գրասեղանիս գլուխը . ընդարձա-
կօրէն գրի առի քննութիւնս, վերջարանին :

«Այս գէպքը ճշմարտապէս գոյացած է քանի մը
ստահակ ձկնորսներու երեսէն, թէ ոչ զիւանագիտու-
թեան, քաղաքականութեան հետ կապ ունեցող գէպք
մը չէ . եթէ մինչև անգամ քաղաքական բնոյթ ալ են-

թագրուի, աւելի յարմար է կատալարչական տեսա-
կետով պարզ խնդրոյ մը գոյն տալը : Հակասակ պա-
րազային, յետագային բունկիլը հեռուոր չեղող կրակը
ձեռքօղջիս քրքրած և բունկեցուցած պիտի ըլլանքս,
ըսի :

Գժբախտաբար, իրենց անձնակաւն օգուտները ա-
պահովելու համար եազար հրցեկ ցանկացող անձանց,
անձրեկ պէս տեղացուցած ժուռնալներու դէմ, իմ
անհատական խորհրդածութիւններս ազգեցութիւն մը
չունեցան : Ըսածիս պէս հրդեհը յանկարծակի շրջապա-
տեց տանիքը, Երլուրի մէջ լրտեսապետ Գատրի պէյի
գազտնի ստաիկանները՝ հրացանակիրներու պետ թահիբ
փաշայի մարգրիկը, թիկնապահ Անմէտ պէյի գազափա-
րակիցները հրապարակ նեաուեցան անօթի գայլերու
պէս, կայսեր համակրութիւնը վասակելու և թախոյիկ-
ներնին լեցնելու ջանադրութեամբ :

Պէչիկթաշի կատալարիչ Հասան փաշան (7) և իր պառ-
կանեալները կաքաւել սկսան իրենց ուրախութենէն :

(7) Հասան փաշան տնուս, սգէտ, անգութ և և
փայտի պէս մարդ մըն էր : Ի՞ր անիրաւ ճանկը ինտո-
ները, ծեծի տակ մեռնելու աստիճանին կը բերուէին :
Ինչ որ ընկր քովը կը մնար . օրինական պատասխա-
նատուութենէն զերծ կը գտնուէր : Անոր այս առանձ-
նաշնորհումը պարգևողը եղած էր Ալի Սաատիի խըն-
գիրը : Ալի Սաատիի խնդիրը պատահած ատեն Հասան
փաշան հասարակ ստիկանէ բարձրացած հարիւրապետ
Հասան ազան էր : Իեւի կերպարանք ունեցող Հերքիւն
Հասան Ազան, հաստ բիր մը գարնելով Ալի Սաատիի
գլխուն մահացուցած էր գոյն : Այս լաջողութիւ-
նը, զինքը երկինք բարձրացուցած էր յայտ Սուլթան

Ոստիկանութեան նախարարը և պաշտօնեաները՝ կը շանային կօր, իրենց ամբողջ ուժով, մեծցնել այս հրդեհը։ Երկարը կուգային ժուռնալներ՝ կառավարական գործերու վերաբերեալ պաշտօնաթղթերէն հազար անգամ աւելի։ Զերբակալութիւններու վերջը վախճանը չէր կտրուեր կօր։ Ոստառակութիւններու և ստորնութիւններու աղբիւրներ դարձած էին մանաւանդ ոստիկանական պահականոցները։ Օրինակի համար, Թշուառական և կաշառակեր գօմիսէրին մէկը, գիշեր մը հանրատուն կամ խաղարան պիտի երթար, իր վստահութիւն ունեցած պարզ ոստիկաններէն մին կանչելով՝

— Գնա՛, այսինչ տեղ գտնաւող վաճառատան տիրոջ . . .-ին բարե խօսէ՛, երեսուն ոսկիի պէտք ունիմ, թող փոխ տայ ինձ, մօտ ատենէն կը վերագարձնեմ, կ'ըսէր։

Գարզ ոստիկանը, իր բաժնին ալ բան մը փրցնե-

Համիտի։

Զուրի պէս տեղացին աստիճաններ, շքանշաններ, գրամներ։ Իրեն յանձնուեցաւ հսկողութիւնը Զրազանի պալատին, այսինքն Սուլթան Մուրատի բանտին։ Այնտեղ Հասան փաշան էր որ կ'ընտրէր ու կը նշանակէր պարզ զինուորներն անգամ և մէն մի պարզ զինուորին երեսուն-քառասուն ոսկի ամսական կը տրուէր։ Հասան փաշան եղած էր Սուլթան Համիտի ամենահաւատարիմ մէկ մարդը։ Որեւէ կերպով իր աչքը չէր կշտանար կօր։

Մեռած ատեն ութսուն տարեկան էր Հասան փաշան։

Անիձեա՛լ ըլլայ . . .

նելու յոյսով ու նպատակով, անմիջապէս կը փութայ գործադուր առած հրամանը, Գոմիսէրին ուզած դրամը վճարուեցաւ, ինչ լաւ, չհատուցուելու պարագային, յաջորդ օրը, փառաւոր ժուռնալ մը կ'երթար ոստիկանութեան նախարարին, Ոստիկանութեան նախարարը, որ կայսերական համակրութիւնը պահել եւ դիրքը ապահովել կ'ուզէր միայն, խկոյն է՛ն անգութ և ստորին մարդոցմէ յանկարծակի խուզարկութիւններու պաշտօն ունեցող մարմին մը կը կազմէր։ Մտնօթ քօմիսէրն ալ միասին ըլլալով կէս գիշերէն ետք կը կոխուէր այդ մարդուն տունը և վաճառատունը։ Ոնկճ մարդը այս աքացիին ուրկից գալը գիտնալով հանդերձ, քաղաքականութեամբ զբաղած չըլլալուն՝ հետեութեան մը կը լսպատէր վստահաբար։ Մէկ երկու եւրոպական լրագիրներ, կամ քանի մը պատրաստուած նամակներ կ'ելլային մահճակալին մէջէն, կամ պահարանին անկիւնէն։ Թշուառ մարդուն ձեռքերուն հսկայ երկաթէ ձեռնակապեր անցնելով՝ կոռուփներով բանտ կը տանէին։ Քանի մը օրուան հարցաքննութիւններէն ետք կ'իմացուէր թէ՛ կամ տեղ մըն է աքսորուեր, կամ քանի մը ամսուան բանտարկութեան է դատապարտուեր։ Այ այս վատութենէն ետք, քօմիսէրը ուր որ իր ճանկը երկարէր, բան մը կը հանէր։

Այս կացութիւնը արագօրէն տարածուեցաւ ամբողջ պահպանօցները և շատ քիչ ատենէն բոլոր Փոքր Ասիա։ Չմնաց հայ մը, որ վստահութիւն ունենար իր հոգիին և ունեցածին վրայ, Նազրֆ Սիրուրի Սալահետին և Արաբ Սամի պէյերը, Նէճիպ Մելիամէ փաշայի պէս Սուլթան Համիտի մեծ լրտեսները զբաղած էին աւելի մեծ գործերով։ Այն ատեն Արաբքին Գործերու նախարարութեան խորհրդական եղող Տատեան

Յարութիւն փաշայի նման՝ քաղաքականութեան, խեղացիութեան և ծառայութեան մէջ եղակի անձն անդամ լեզուունն փաթթած, անոր յեղափոխականներու նախագահ ըլլալու մասին ժողովներ կուտային կոր։ Սուլթան Համիտ գիտնալով հանգերձ որ այս ժողովները դրամ կորզելու նպատակով են, ոչ միայն չէր պատժեր սուտ ամբաստանողները, այլ անոնց առջև մէյմէկ օսկոր կը նետէր։ Կր վախնար որ սուտ ամբաստանողները պատժելու կամ անոնց բան մը չտալու պարագային՝ ժողովներու վախճանը պիտի գար։ Այս ստորին կացութեան մասին, երբեմն յօդուածներ հրատարակող լրագիրներուն փոխարէն կը նետէր դանոնք լսութեան դատապարտելու համար։

Գուժ-Գարուի դէպքէն ետքը՝ Պոլսոյ հայերուն, հազարաւորներու տուները մարեցան։ Այս եղելութեանէն ատեն մը վերջը, սկսուեցաւ «Համիտիյէ հեծելագնդեր»-ու կազմութեան։

Պալատական հացկատակները բուռն կերպով ծափահարեցին զայս, բայց սակաւ ինչ խղճահար, զգայուն եղողները կը ցաւէին։ Վերջնականապէս որոշ էր որ այս զինեալ յելուզակ խումբերուն՝ Փոքր Ասիայ, Բիւրտանի, հայաբնակ վայրերու մէջ ի գործ դնելիք խայտառակութիւնները չափ սւ սահման չպիտի ունենային։

Դեռ եւս խօսակցութեան նիւթ են ցեղապետ Իպրահիմ փաշայի, Տիգրանակերտի և Մուսուլի միջև տիրապետող Մըսթօ փաշայի ոճիրները և անդամութիւնները։ Բարեբախտաբար, շատերը արար եւ քիւրտ ցեղապետներէն չկրնալով կռահել հեռեանքը, որ ասկից առաջ պիտի դար, նոյնպէս զինուորական լուծի ներքեւ մտնելու երկիւղէն չյարեցան անոնց։

Սակայն յետոյ ամօթահար մնացին տեսնելով մըսնողներուն կատարեալ ազատութիւնը և անոնց ի գործ դրած անզգամութիւնները։ Մանաւանդ կարգ մը խորամանկ ցեղապետներ չուչացան ձիեր, իւղի պէս նուէրներ և դրամ տեղացնել Պոլսոյ ազդեցիկ անձանց և պալատին, ու Պոլսէն երես գտնելուն հետեւանքով կատղած հրէչներու պէս յարձակեցան իրենց շուրջ եղողներուն վրայ և սկսան թալլելու ձեռուրնին անցածը։

Այս շրջանի խայտառակութիւններէն է Պիթլիտի շրջակաները բնակող քիւրտ Մուսա պէլի պարագան։ Քիւրտ Մուսա պէլ, նոյն շրջանին, ինքնիշխան և բռնակալ թաղաւորը եղած էր։ Իսկապէս այդ միջոցին գրեթէ ամբողջ մը հող չէր մնագած ոչ մի հայու ձեռքը։ Ընդհանրապէս ծառայ եղած էին թուրքերուն եւ քիւրտերուն։

Մուսա պէլ կ'աշխատեցնէր զանոնք գերի պէս։

Հայերը կը համբերէին կոր բռնութեան, տառապանքի և անօթութեան։ Սակայն անպամ մը որ խնդրոյն մէջ պատուոյ հարցը կը մտնար կոր, ատոր է որ հիւլէի չափ չէին կրնար կոր հանդուրժել։

Անպատիւ ապրելէն՝ պատուաւոր մեռնիլը նախամեծար կը համարէին կոր։

Մուսա պէլ սկսաւ ձեռք երկնցնելու հայերու կիներուն և աղջիկներուն։

Կոյս աղջիկ մը բռնի առեանգելով, իրեն պատկան քիւրտի մը հետ ամուսնացնելը գրգռեց հայերը։ Օգնութեան կոչեր տեղացուեցան աժէն տեղ, եւրոպական լրագիրներուն և դեսպանատուններուն։

Դեսպանատուններն ու եւրոպական մամուլը օտրպեցին Սուլթան Համիտը որպէսզի ձշղէ իրակաւ նութիւնը։

Մուսա պէյը , հակողութեան ներքե Պոլիս բերին :
 Հարցր յանձնուեցաւ Արդարագատութեան նախարարին :
 Այսուհանդերձ չփափաքելով ձգմել Մուսա պէյը
 Հայերուն համար , մինչ դատավարութեան վախճանը
 Մուսա պէյը հիւրընկալուեցաւ Սկիւտարի կառավարիչ
 Պահրի (8) փաշայի քէօշկը :

Մուսա պէյ անպարտ արձակուեցաւ կաշառքի
 միջոցով : Սակայն քաղաքական տեսակէտով յարմար
 չդատուեցաւ զինքը երկիր վերադարձնել :

Այս բանը հասկցող Մուսա պէյը և Պահրի փաշան
 շատ շփոթեցան :

(8) Պահրի փաշան ծագումով քիւրտ է : Անուս ,
 տգէտ մարդ մը ըլլալով հանդերձ , բնականէն շատ սր-
 քամիտ էր : Միջոց մը Քերայի հրամանատար եղած
 ատեն , դրամաննդներու ընկերութիւն մը կը ձերբա-
 կալուէի :

Քննութիւններու եզրակացութենէն կը հասկցուի
 որ Պահրի փաշան այ այդ ընկերութեան մէջ կը գտնու-
 ուի եղեր :

Այսպէս ըլլալով հանդերձ Պահրի փաշան կրցած է
 իր օձիքն ազատել և միանգամայն Սկիւտարի կառա-
 վարիչ կարգուիլ :

Այն ատենները շատ ու շատ էին ասոր յարեման
 զարմանալի խայտառակութիւններ :

Չգիտցուիր թէ ինչպէս եղաւ որ վարեց Ատանայի
 կուսակալի պաշտօնը :

Նոյնպէս մեզ անձանօթ կը մնայ թէ ինչպէ՞ս կըր-
 ցաւ առաջը առնել իր անդգամութեան :

Օրէնքին կարեւորութիւն չէր տար : Գործադրու-
 թիւնը գաւազանով էր :

Առտու մը , կանուխ , պալատ հասաւ Մուսա պէյի
 փախստեան լուրը : Ապտիւլ Համիտ յուզուեցաւ , Եւ-
 րոպայէն վախնալուն պատճառաւ : Իսկոյն հրաման-
 ներ տրուեցան ամէն կողմ . զայն ձերբակալելու հա-
 մար : Հեռագիրներ քաշուեցան կուսակալութիւննե-
 րուն : Վերջապէս Մուսա պէյ օձիքը ձեռք տուաւ էն-
 կիւրիի կուսակալութեան մէջ :

Պոլիս բերուեցաւ :

Քննութիւններու պահուն հաստատուեցաւ մեծ
 կաշառքի փոխարէն փախցուած ըլլալը :

Մուսա պէյ թախիքէ , իսկ Պահրի փաշան Ալպանիոյ
 Փրիշթինա գաւառակը աքսորուեցան :

Տարօրինակ է , որ քիչ ատենէն Պահրի փաշան իր
 աքսորավայր Փրիշթինայի գաւառակին միւթէսարիք և
 ապա Ատանայի կուսակալ կարգուեցաւ :

Այս ղէպքէն երկու տարի ետքը , ես , քաղաքա-
 կան պատճառներով աքսորուեցայ Տիգրանակերտ :

Ութ ամիս վերջը աքսորավայրս դարձաւ Խար-
 բերդ :

Այն ատեն Խարբերդի կուսակալն էր Թօփհանէի
 հրամանատար Ձէքի (9) փաշայի աները , Իզմիրցի է-

(9) Ձէքի փաշան նախապէս տեսուչն էր զինուո-
 րական վարժարանի :

Յետոյ իրեն յանձնուեցաւ Թօփհանէի հրամանա-
 տարութիւնն ալ :

Ձէքի փաշան է՛ն գլխաւոր լրտեսներէն էր Սուլ-
 թան Համիտին . թեւերը իրարու միացուցած սարսը-
 ռագին կը ղողար Սուլթանին ներկայութեան ելլելու
 միջոցին . անշուշտ կեղծ էր իր այս շարժումը : Իրա-
 կանութեան մէջ որդին էր աւելավաճառի մը և օգուտ
 չունեցող անդգամին մէկը :

նրո (10) փաշան :

Այս մարդը վերջին աստիճան տղէտ եւ ապուշ էր : Իր ամբողջ արժանիքը կը կայանար Ձէքի փաշայի անունն ըլլալուն մէջ : Հոգիով , սիրտով կը փարէր գող պաշտօնեաներուն և բաժին կը ստանար անոնցմէ :

Ասիկա , գեղեցիկ առիթ մը նկատելով , պաշտօնատարներն ալ ծանրանալով ծանրացան հայերուն վրան : Մանաւանդ ոստիկաններու անզգամութիւնները , կեղեքումները խելքէ մտքէ դուրս ելած էին : Գանձումներու համար , ոստիկանները կ'երթային գիւղերը : Գիւղական ազգաբնակութիւնը ահ ու սարսափի կ'ենթարկուէր :

Ոստիկանները զիւր մը մտած ատեննին , կը մտաբանէին իրենց առջև ելլողները և զիւրը կը մտնէնէին անոնց հեծեծանքներուն և օգնութեան կոչերուն մէջէն : Իսկոյն կը կանչէին զիւրին քրիստոնեայ մեծաւորները , զիւրապետը և գրամ կը պահանջէին կալուածի , տասանորդի ոչխարի տուրքերու փոխան : Մե-

(10) Էնիս փաշան որդին է Իզմիրցի փսիաթա-
գործ Շաքիր աղա անուանեալին : Տղայութեան ատեն ընկերացիք է Իզմիրցի կուսակալ Էմին Մուհլիս փաշային . անոր փեսայանալով , այս առթիւ արժանացիք է աստիճաններու : Վերջին աստիճան նախանձոտ , անմիտ , անարգ մարդ մըն էր , փորը ձրի կըշտացնելու համար , համակրութիւնցոյց կուտար պարզ ոստիկանին անգամ և զօրով հրաւիրել կուտար ինքզինքը : Հիւլէի չափ արժէք չէր ներկայացնէր ընկերութեան մէջ : Շատ անարգանքներու ենթարկուած է , իր վերջին պաշտօնավայրն եղող Գաթեմունի մէջ , հոն կուսակալ եղած ատեն :

Ճի կը դատապարտուէին և նուազած իյնալու աստիճան կը գանակոծուէին անոնք որ կ'ըսէին թէ անկարելի է այսքան դրամ հայթայթելը՝ աճապարանօք :

Ճարահատ , ցրուելով փողոցները , արտերը , տունները , այրերու զրպանները գտնուած դրամները , կրնորու վիզը իրենց հօրմէն , պապէն մնացած չնչին արժէքով ոսկիները հաւաքելով , այս աչքի արցունքով թրջած դրամները կը տանէին կը նետէին ոստիկաններու առջև : Ոստիկանները յայանի կերպով , փոխան ստացագրի , կուտային մէճիտէի թուղրայի կողմով ստորագրուած պարզ թուղթի կտորներ , որով ան եղկելիները կրկին պարտական կը մնային իրենց ամբողջ պարտքերը տալերնէն ետքն ալ : Պահ մը վերջ ոստիկանները իրենց հաշուոյն ժողովելու սկսան կապերտի , թաղիքի , պայուսակի , վերմակի և նոյնիսկ չուանի կտորներու պէս հասարակ գոյքերն իսկ :

Արդէն քիւրտ աղաներու օգտին համար աշխատող եւ տարուան մը ջանքերնուն փոխարէն իրենց ձեռք անցած երկու պարկ գարիով իրենց որդիներուն և զաւակներուն ապրուստը ապահովել ջանացող հայերը կը համբերէին ապաւինած Աստուծոյ : Ոստիկաններն ալ կ'աւելացնէին իրենց անիծեալ արարքները , տեսնելով անոր համբերութիւնը : Եղաւ ատեն մը որ հայերու դրամները առնելն ալ բաւ չի համարելով , սկսան աչք տնկել անոնց պատիւին :

Այն հայերը որ ոչ մէկ ցեղի , ոչ մէկ արարածի չտոկալիք հարստահարութիւններուն առջև վիզ կը ծռէին , ալ բնաւ չի կրցան հանդուրժել այս անզգամութեան :

Երբեք չի հայերը իսկապէս և յոյժ պատուախընդիր են : Ահագին կուսակալութեան մէջ չէ լսուած նոյնիսկ պոռնիկի մը անունը :

Ոստիկաններու այս սառնութիւնները զիրենք մը-
 զեցին ցասումի և բարկութեան վերջին կէտր, Ես աչ-
 քովս տեսայ այս պարագան, Այն ատեն եպարքոսն էր
 մարաջխտ ձէվատ (11) փաշան, Միրլիվա եղած ժա-
 մանակ լաւ տեսնուած էի այս անձին հետ, Ընդար-
 ձակ տեղեկագրով մը իրեն պարզեցի կացութիւնը և
 ձէվատ փաշան նկատողութեան առնելով զայն, յանձ-
 նարարեր է նախարարներու խորհուրդին, Թոփանէի
 հրամանաւար Ձէքի փաշան, նախարարներու խոր-
 հուրդին մէջ, իր աներօր էնիս փաշայի ի նպաստ
 պաշտպանութիւն ընելով հանդերձ, նամակ մըն ալ
 գրեց էնիս փաշային խելքը գլուխը ժողովուր համար:
 Տխմար էնիս փաշան, պարծենալով ցոյց կուտար
 զայն, Այդ առթիւ ինծի ալ ցցուց կարգացուց:

Ես ալ նրկորդ նամակով իմացուցի եպարքոսին,
 կուսակալին խայտառակութիւնները:

Ասոր վրայ, էնիս փաշան պաշտօնանկ եղաւ,
 էնիս փաշայի պաշտօնանկ ըլլալէ ետք անոր տե-

(11) ձեվատ փաշան սպայակոյտէն էր:

Երկար ատեն դեսպան եղաւ Ձէթինէի:

Վերջերը, երբ Փեթերսպուրկի դեսպան մարա-
 ջխտ Շաքիր փաշան արտաքոյ կարգի կուսակալ նը-
 շանակուեցաւ կրէտէի, իբր օգնական մրասին առաւ
 տարաւ ձէվատ փաշան:

Ատեն մը ետք Շաքիր փաշան հրաժարեցաւ:

ձէվատ փաշան մարաջխտի աստիճանով կար-
 գուեցաւ անօր տեղ:

Յետ այնու Քեամիլ փաշայի պաշտօնանկութեան
 առթիւ եպարքոս կարգուեցաւ:

ձէվատ փաշան հակառակ էր Սուլթան Համիտին
 և չէր սիրեր ապօրինութիւնը:

ղը կոչուեցաւ Բէուֆ (12) փաշան:

Առաու մը հասարակութեան մէջ զրոյց մը սկսաւ
 չրջիլ, Օր մը առաջ, Տիգրանակերտի մէջ, հայերը
 յարձակեր են մահմետականներու վրայ, երբ ասոնք
 լոգանք կ'առնեն եղեր մզկիթի բակը, շատրուանը,
 Միահաղոյն կրակ են բացեր և մեռեր են եօթը ութը
 մահմետականներ: Արտասովոր յուզում և զրգուցիւն
 են առաջ եկեր մահմետականներու մէջ:

Բերնէ բերան անցնելով մէկ խօսքը եղած է հա-
 զար: Օր մը ետքը մէջտեղ ելան, Տիգրանակերտի չը-
 ջակայքի գիւղերուն քիւրտերու հայ գիւղերուն, իսկ
 բնիկ ազգաբնակութեան ալ քաղաքի քրիստո-
 նեայ տուներու վրայ յարձակումի, սպանութեան,
 հրդեհի և աւարառութեան սկսած ըլլալնուն լուրերը:

Երեքշաբթի օրն ալ զրոյցներ սկսան թէ, Մալա-
 թիոյ մէջ քիւրտին մէկը հայ սափրիչի մը ածիլուելու

(12) Տրուած ըլլալով Բէուֆ փաշայի պարկեշտու-
 թիւնը, մինչքեռ հասարակութիւնը կը յուսար օգտուի,
 յիշեալը կուսակալ կարգուեցաւ Կարնոյ: Փլաւ յոյսի
 այդ չէնքը, Բէուֆ փաշա կը նախընտրէր փորձառու
 մարզիկը, այս պատճառաւ Կարին փոխադրել տուաւ
 տէֆթէրտար, մէքթուպձի և ոստիկանութեան հրամա-
 նատարի պէս անձեր: Մինչե նոր կուսակալին գալուստը
 կուսակալի փոխանորդ ձգեց Տիգրանակերտցի Ալի է-
 միրէ էֆէնտին: Ալի էմիրէ էֆէնտին պարկեշտ, բա-
 նաստեղծ, պատմագէտ անձ մըն էր, բայց շատ կրօ-
 նամու էր և չէր քաջուեր քրիստոնեաներուն հանդէպ
 բացէ ի բաց թշնամութիւն ցոյց տալէ: Այսպէս, այս
 մարդու փոխանորդութեան ատեն էր որ տեղի ունե-
 ցան Սարբերդի խռնակութիւնը եւ դժբախտութիւ-
 նը:

կ'երթայ, հայը կը կտրէ քիւրտին գլուխը, ասոր վը-
րայ խուժանը կատղած յարձակում կը գործէ հայե-
րուն վրայ, Բիչ ատենէն, գրեթէ վայրկեանական կեր-
պով իմացուեցաւ գիւղերուն կոխուիլը, հայ տունե-
րուն աւարի տրուելով հրդեհուիլը և շատ մը սպանու-
թիւններու և կողոպտուածներու առջ գալը: Ես կը
ճանչնայի շատերը Խարբերդի հայերէն: Մասնաւորա-
պէս մէջերնիս գոյութիւն ունեցող եղբայրական կա-
պերը չափէն աւելի էին երևելիներէն Արփիարեան Փի-
լիպոս և Նշան, Խարբուլեան Արթին, Թարագճեան
Գրիգոր, Փափազեան Բերոբ, Եազրճեան Յովհաննէս,
Ատանայեան Արթին, Մրօակեան Պօղոս, Եազճեան
Գրիգոր, Տէմիրճեան Սիմոն էֆէնտիներուն հետ: Այս
անձերուն մօտ գոյութիւն չունէր ունէ գաղափար ու
նպատակ քաղաքականութեան և կառավարութեան
մասին:

Գրիգոր մը կը գտնուէի կառավարչատունը, կաւ-
սակալի փոխանորդին սենեակը: Յանկարծ աղմուկ մը
լսուեցաւ գուրսէն. կուսակալին թիկնապահը ներս մը-
տաւ. ըսաւ թէ բռնած և բերած են հայկական զօժի-
թէի նախագահը. հետաքրքրուեցայ տեսնալ ուղեցի նա-
խագահը. սենեակին դրան առջևն ելայ, հինգ տառը
սուրնաւոր զօրքերու միջև տեսայ Եազճեան Գրիգոր
էֆէնտին: Սարսեցայ մնացի զարմանքէս: Եազճեան
Գրիգոր էֆէնտին կը բնակէր Բէսրիկ անունով գիւղ
մը, քառորդ ժամ հեռաւորութեան վրայ, Հօրմէն ի-
րեն մնացած էր բազում հարստութիւն և հող. լաւ
կ'ապրէր. ճաշի ատեն տասը հինգ քսան հօգի հիւր
կուներնար: Բէսրիկի մօտ կար Խըրխըր անունով պըղ-
տիկ գիւղ մըն ալ, այս զիւղին հողերն ալ մեծ մա-
սամբ Եազճեան էֆէնտինն էին, ընդարձակ պարտէզ
մըն ալ ունէր. ես ամառները ընտանեօք կ'երթայի

Խըրխըրը զի պարտէզը, վրան կը կանգնէի և հոն կը
բնակէի: Եազճեան էֆէնտին պարագան կը կազմուէր
կնոջմէն, մէյ մըն ալ աղջիկէն: Ասոնք առտուն կա-
նուխ քովերնիս կուգային և մինչև ուշ ատեն կը նըս-
տէին մեզ հետ: Ես երիտասարժական խանդավառու-
թեամբ կը քննադատէի թուրք կառավարութեան քա-
ղաքականութիւնը եւ անէծք կը կարդայի Երլտըզի ըն-
թացքին և գործերուն վրայ: Միասին անցուցած չորս
ամիսներուն միջոցին, ոչ իսկ անգամ մը, Եազճեան է-
ֆէնտին բերնէն բոռ մը չէր ելլեր կառավարութեան
մասին:

Նայնիսկ երբեմն.

— Ո՛վ դուն, բնաւ զգացում չունի՛ս մի, կ'ըսէի
և կը նեղանայի:

Ճշմարտապէս ալ հիւլէի չափ իսկ յարաբերութիւն
չունէր քաղաքականութեան և գիւտնագիտութեան
հետ: Հիմա, կարելի՞ էր այս մարդը իբր քօմիթէի նա-
խագահ տեսնալ ու չզարմանալ: Այս ճշմարտութիւնը
հասկցուցի կուսակալի փոխանորդին, ականջը չմտաւ:
Նախագուշակելով գալիքին ծանրութիւնը, գացի Ար-
փարեան էֆէնտին տունը, լուր զրկեցի այն հայե-
րեւելիներուն որոնք վստահ էին բարեկամութեանս վը-
րայ. ամենքն ալ եկան. ըսի.

— Այս ընթացքին ես չեմ հաւնիր կոր. այս ե-
րեկոյ Եազճեան էֆէնտին ձերբակալեր բերեր են, իբր
քօմիթէի նախագահ, վաղը քեզի, միւս օրը անգիլին
պիտի բռնեն, պիտի փճացնեն բանտերու մէջ. այսպէս
չըլլայ իսկ, գիւղերու մէջ ջուրի պէս արիւն կը հօ-
սեցնեն եղեր. աշխատինք ասոր առջևը առնելու. ա-
մենքն ալ համաձայն մնացին խօսքերուս:

— Ի՞նչ ընենք ըսին:

— Վաղը առտու կանուխկեկ երթանք զօրաբանակի

հրամանատարին քովը . Տիգրանահերտի մէջ այսպէս , Մալաթիոյ մէջ այնպէս է եղեր մեզի ի՞նչ , մենք , վերջին աստիճան հաւատարիմ ենք կառավարութեան : Լուր ուղարկենք կուսակալի փոխանորդին ալ : Խորհրդակցութեան ղենք հոն հարցը և յանգեցնենք լաւ եզրակացութեան մը :

Կարծիքս ընդունուեցաւ :

Ըստ որոշման , յաջորդ օրը , առտուն կանուխ գացինք զօրանոց : Կուսակալի փոխանորդին հետ զօրանոց եկան Մուսթաֆա Նայիմ փաշան և խել մըն ալ պաշտօնատարներ : Հարցը խօսակցութեան գրուեցաւ : Յայտարարութիւններ եղան Խարբերդի հայերու հաւատարմութեան և կառավարական հրամաններուն հընազանդելու մասին :

Հրամանատար Մուսթաֆա փաշան՝

— Լա՛ւ , ի՞նչ ընենք , ըսաւ :

— Զօրք հանեցէք գիւղերը , թո՛ղ ցրուեն քիւրտերը , թո՛ղ վերջ գտնայ զրգաութիւնը :

— Աղէ՛կ , բայց զօրքերը գիւղերը ցրուելնու ետքը , ինչպէ՛ս կրնանք վստահիլ որ գէշութիւն չպիտի պատահի կուսակալութեան կեդրոնը :

— Ի՞նչ վստահութիւն որ կ'ուզէք պատրաստ ենք տալու :

— Ուրեմն հայ երեւելիները՝ իրենց վստահութեան ներքեւ առնելու են թաղերը , ղէպք պատահած թաղին պատասխանատուութիւնը կը պատկանի երաշխաւորին , ասկից զատ բոլոր զէնքերը հաւաքելով , վաղն առաւօտ պէտք է յանձնել զօրանոցը : Եթէ այսպէս ըլլայ ես ալ զօրք հանելով , կը ցրուեմ խուժանը և քիւրտերը :

Ենօրեակալութեամբ ընդունուեցաւ այս առաջարկը , երաշխաւորագիր մըն ալ տրուեցաւ , ամէն ոք

ուրախութեամբ բաժնուեցաւ զօրանոցէն այն կարծիքով թէ զրգաութիւնը վերջացաւ : Միւս օրը , կանուխ նորէն հաւաքում տեղի ունեցաւ զօրանոցին մէջ : Մէջ տեղ բերուած գէզերու քանակէն կը մակաբերուէր կորոր , եթէ ամբողջ չըսեմ , քաղաքին մէջ գտնուած զէնքերու հարիւրին ութսունը հաւաքուած էր :

Կրկին մեծ դահլիճը կը գտնուէին կոր հաւաքող պաշտօնեաները , ականաւորները և երեւելիները : Հաղիւ կէս ժամ էր անցեր , անա ղէժիի տնօրէն Մուրատ պէյը թեւ տ բռնեց , Զիս մօտեցուց պատուհանին :

— Սա՛նկ նայէ՛ , ըսաւ :

Նշան ըրած իողմը նայեցայ , Մօրնիք անունով գիւղն էր , ութը տասը վայրկեան հեռաւորութեան վերայ , գիւղին բոլորտիքը խուժան կը տեսնուէր եւ սրկէց նըկէց ծուխ կը բարձրանար կոր : Աճապարանքով ենեաղիտակ մը ճարեցի , նայեցայ անով , հասկըցայ որ յարձակման ենթարկելով գիւղը կրակի է տըրուած . իսկոյն տարածուեցաւ ղէպքը , հայերու երեսին գոյնը նկտեց . կուսակալի փոխանորդին քովը գացի . խօսեցայ թէ կառավարութեան պարտադրութիւնն է յարգել երէկի պայմանագրին տրամադրութիւնները :

Կուսակալի փոխանորդը ձեռքը պզտիկ մատիտ մը և թուղթի կտոր մը , կ'աշխատէր կոր լրացնել բանաստեղծութիւն մը , զօր շարաթ մը առաջ ճեմիչին մէջ սկսած էր : Տեսնելով որ խօսքերս յեն ազդեր կոր , քանի մը հայեր ևս առի քով և գացի հրամանատար փաշային :

Ըսինք որ խոտտման համեմատ զօրք հանէ , առաջըն առնուի այն համարձակութեան , որով զօրանոցէն հինգ վայրկեան հեռաւորութեան վրայ գտնուած գիւղ մը կոխելով հրդեհելու աստիճանին են հասած :

Ի պատասխան .

Չօրք հանելը կայսերական հրովարտակի կը կա-
րտի, ըսաւ:

Ամենքս ալ զարմանքնուս սարսափեցանք:

Սենեակէն դուրս ելած ատեննիս, ըսի ներքը եղած
հայերուն:

— Հասկցուեցաւ որ կառավարութիւնը քառորին
վարմունք պիտի ունենայ, պէտք է որ ամէն մարդ
իբ գլխուն ճարը նայի:

Ողջ-մեռած տունս դարձայ:

Հինգ վայրկեան ետքը իմացուեցաւ Մօրնիք կո-
խերին, պարզ էր հրամանատարին պատասխանը:

Եղկելի Հայերը սկսան ապաստանիլ տուններն այն
մահմետականներուն, որոնց վրայ վստահութիւն ու-
նէին:

Տունը ուր կը բնակէի ես, յայն, պարտէզը ըն-
դարձակ, պարունակութիւնը մեծ էր: Փողոցին դուռը
բացի Այո, կին, տղայ, եօթը ութը հարիւր հիւր ունե-
ցանք: Իրարու ետեւէ փախչելով, գալու սկսան գիւ-
ղերէն: Ամէնուն ալ մարմիններն ու դէմքերնին ա-
րիւնաթափաւ բլլալուն, յայտնի էր թէ դանակի տա-
կէն ելած էին:

Քաղաքին մէջ ոստիկան մը իսկ չէր տեսնուեր
կոր, բոլորն ալ գիւղերը գացեր էին Թալանի, գեղծումի
և սերագործութեան համար: Բացի փախստական վի-
րաւորեալներէն, ոչ ոք կը տեսնուէր փողոցներուն
մէջ, այն օրը, մինչև երեկոյ քաղաքը մխրճուած էր
սուգի և ամայութեան մէջ:

Իրիկուան մութը կոխելուն, հին Խարբերդի*) մէջ

*) Բուն Խարբերդ քաղաքը չորս հարիւր տունով
քաղաք մըն է լեբան վրայ: Կուսակալութեան կեդ-
րոնը, այն լեբան ստորաբը, գաչտը առանձին քաղաք

հրդեհի բացերը տեսնուիլ սկսան:

Այցելեցի մահմետականներու տուները ապաստա-
նող շատ մը հայերուն: Թշուառները ինքզինքնին ըս-
պանգանոցի մէջ փակուած մտավաճառի հօտ մը կը
նկատէին կոր:

Շատ զգացուեցայ: Միայն թէ այս զգայնութիւ-
նը իմ մէջս յառաջ բերաւ հնարքի գաղափար մը:

Ուղղակի կառավարչատուն գացի: Կուսակալի
փոխանորդը ինձի տուաւ հեռագիր մը ծածկագրելու
համար: Այս հեռագրին իմաստը՝ «չնորհիւ կայսերա-
կան կառավարութեան, անգործութիւնը կատարեալ
է, ամէն մարդ իր բանով ու գործով զբաղած է»-ի
ձևով խմբագրուած էր: Մինչդեռ կուսակալի փոխանոր-
դը պիտի ամչնար այս տեսակ հեռագիր մը տալու, ե-
թէ երբեք կառավարչատան տանիքը ելլալով գիտէր
մոմի պէս այրիլը ամբողջ գիւղերուն, լսէր ողբագին
օգնութեան կոչերը սպաննուած կիներուն և տղոց:

Անընդհատ իրարու կը հեռակէին կոր կուսակալին
այս իմաստ հեռագիրները:

Երբեմն երբեմն պալատէն. «կրօնականներ դրկե-
ցէ՛ք, ժողովուրդին խրատ տան»-ի եղանակով հրովար-
տակներ կը հաղորդուէին:

Եօթանասուն-ութսուն հազար հոգի մէջտեղը տու-
րածուած՝ ջուրի պէս արիւն հոսած, ամէն կողմ հրդե-
հի տրուած ատեն մը, այս ձևով հաղորդագրութիւն-
ներ՝ զօրութեամբ՝ «ձգեցէք ընեն ինչ որ կ'ուզեն» կը
նշանակէր:

Ես համրեցի տողերը, նոյնիսկ բառերը ծածկագրե-

մըն է: Մէջերնին ժամուան մը հեռաւորութիւն կայ,
Աւելի գեղատեսիլ, օղաւէտ, այգիներով և պարտէղ-
ներով չըջապատուած գեղեցիկ տեղ մըն է Խարբերդը:

ուելիք հեռագրին : Գրեցի ճիշտ անոր չափ հեռագիր մը ,
Գրած հեռագրիս իմաստը .

«Տէրսիմ, Բալու, Քաղղէքի քիւրտները միացեր են
Բերդակ ջուրին գլուխը, մէջերնին կարևոր ուժ մը
տեսնալով . — «Ինչո՞ւ թոյլատու ըլլանք որպէսզի այս-
տեղ Հայաստան մը կազմուի և այսքան ուժ մը ու-
նենալնուս ետքը ինչո՞ւ ապրինք օսմանեան լուծին
ներքև, անպատճառ քիւրտ կառավարութիւն մը ըս-
տեղծենք» - Ի ձեռով սկսեր են խորհրդակցութեան . Ի՞նչ
ընենք :

Այս տեսակ երկիւղ մը պէտք էր, Սուլթան Հա-
միազ վախցնելով լուրջ հրովարտակներ ձեռք բերելու
համար : Կուսակալի փոխանորդը ստորագրեց այս հե-
ռագիրը որպէս իր հեռագիրը :

Երեկոյեան տուն դարձած ատենս գտայ խել մը
աղէտեալներ եկած գիւղերէն և հին քաղաքէն : Ա-
մենքն ալ տեսած են նոյնը, իրինց աչքերովնին, իրենց
ընտանիքէն մէկ քանիին կոտորուած ըլլալը :

Տխուր էին անոնց հառաչն ու աղաղակները :

Անոնց մէջ էր Տէմիրճեան Սիմոն էֆէնտին, հին
Խարբերդէն եկած : Ան պատմեց թէ սպաննած են Ա-
տանալեան Արթին էֆէնտին, փորձ ըրած են առևան-
գելու անգլիական հիւպատոս Մր. Թոմաի *) աղջիկը :

*) Այս դէպքէն քիչ առաջ մեռած էր, անգլիական
հիւպատոս Մր. Թոմա, ազգով հայ, կինը անգլիացի :

Այն կողմերէն Հաճի Լուսթֆուլլան անունով ան-
ուանի սրիկայ մը փորձեր է փախցնել աղջիկը . միրա-
լայ Շիւքրի պէյ առեր է ձեռքէն . Սան գերզացի Սըր-
փո անունով աւագակ մը փախցուցեր է աղջիկ մը ա-
մերիկեան գօլէճի աշակերտուհիներէն, թէև մէկ երկու
ամիս ետքը ձերբակալուեր բայց անպատիժ է մնացեր :

Շուտ մը խօսեցայ այս եղկելիներուն, միխթարե-
լու նպատակով : Յայտնեցի թէ, վաղը վախճան մը
պիտի արուի այս ոճրագործութեան : Բնականաբար,
չէի կրնար մանրամասնութիւններ տալ :

Ատուէն կանուխ, արևը չծագած, կուսակա-
լին փոխանորդը զիս կանչեց : Գացի յոյսով և յուզու-
մով : Այնտեղ էր հրամանատար փաշան ալ : Եկեր էր
ճշմարտագէտ հեռագրին պատասխանը :

Պատասխանին իմաստն էր .

«Շուտ հանեցէ՛ք պատրաստի զօրքը, գեների տակ
առէ՛ք պահեստիները, գործածեցէ՛ք քանի բնդանօրներ
որ ունիք, ցրուեցէ՛ք քիւրտերը, ջնջեցէ՛ք խառնաշփո-
քութիւնը» :

Կուսակալի փոխանորդը և հրամանատարն ալ զար-
մացան . ես՝

— Անպատճառ օտար միջամտութիւն սկսած է .
գործը այս աստիճանին բերելու չէր, ըսի .

Կուսակալութեան կեդրոնը իսկոյն չըջապատուե-
ցաւ զօրքով, երեք թնդանօթներ գետեղուեցան բարձ-
րադիր տեղեր . կրակ բացուեցաւ Հին Խարբերդի և
Հիւսէյնի գիւղի վրայ խուռներամ յարձակող քիւր-
տներուն դէմ : Աւելի շիտակը քիւրտերուն վրայ կը-
րակ ընելու պատրուակով ոււմբի և գնդակի նշաւակ
ըլլալ սկսան հոգինին ազատելու համար հոս հոն փախ-
չող հայերը . ամերիկեան հիւպատոսարանն ալ ծակ
ծակ եղաւ . այնքան որ «կառավարութեան հրամա-
նով հայերը կը կոտորենք կոր» ըսող քիւրտերը, տես-
նելով այս արգելքը, լաւագոյն համարեցին ցրուելը :
Ընդհանուր դատաստաց Շէվքէթ, հարցաքննիչ դատա-
ւոր Աղիզ, ազնուականներէն Չութէլիզաաէ Իօհակ,
հաճի էօմէր, Մուհէտտին, Ասրմ պէյերը մաքրասիրտ
անձեր էին : Այս մարդիկը համամիտ չէին այս խայտա-

ուակ կացութեան: Համաձայնարար այս անձերուն հետ մտանք ջրբաժնուն մէջ: Մերթ խրատով, մերթ երկիւղ տալով աշխատեցանք ցրուել զանոնք: Բաւական ալ յաջողեցանք: Յանցաօրէն փախչելով, չրջականերէն գալ կարողացող հայերէն լուր ձեռք բերինք: Սպանութիւնները այնտեղերը շատ աւելի եղած էին: Արաբկիրի մէջ ջրբաժնի պաշարեր են ամբողջ քաղաքը, կօտրեր են քաղաքին դուրսը գտնուած քարիւղի շտեմարանը. եղած քարիւղը առնելով թափեր են հարկական թաղին բոլորտիքը և կրակ տուեր են: Մէջը մնացողները այրեր, դուրս նետուողները գնդակահար են եղեր: Կոտորուեր են չորս հազարէ աւելի հայեր: Մալաթիոյ մէջ նոյնպէս քարիւղ թափելով այրեր և փնջուցիւր են եկեղեցին ապաստանող հազարաւոր մարդիկ: Տիգրանակերտի մէջ հրդեհներ են բոլոր հայ տունները, սջնչացուեր են հազարաւոր մարդիկ, թալանի տրուելով հրդեհուեր են նոյնպէս շուկաները, մինչև իսկ առևն մը ազատ չէ մնացած գիւղերու մէջ: Միայն Սարբերդի կուսակալութեան մէջ, կորուստի քանակը յիսուն հազարի չափ կը կարծուէր կոր: Միեւնոյն ոճիրները տեղի ունեցած էին Սըվազի Էնկիւրիի, Էրզրումի, Սրդնկայի և վերջապէս բոլոր հայաբնակ գաւառներու մէջ:

Ձինուոր և թնդանօթ հանելը, ջրբաժնիուն եղած սպանալիքը՝ յառաջ բերաւ սպասուած օգուտը: Կուսակալութեան կեդրոնին վրայ, երկու օր տեւող յարձակումներէ վերջը, յոյսերնին կտրելով, ետ քաշուեցան և ցրուեցան: Երբ ջրբաժնիւր բոլորովին քաշուեցան, հոս հոն ապաստանած հայերը սկսան վերադառնալ իրենց տեղերը: Ձմրան եղանակը ի գոց՝ դնելու էր սկսած իր խտութիւնները, այն ասան էր որ մէջտեղ պիտի գար երկրորդ ողբերգութիւնը: Տղաքներ,

որ կորսնցուցած էին իրենց հայրն ու մայրը, հայրեր ու մայրեր, որ լուր չունէին իրենց օրտահատորներէն, եղբայրներ՝ որ կորսնցուցած էին իրենց եղբայրներն ու քոյրերը, կը մտիթարուէին որ անոնք տեղ մը պահուրտած են: Բայց գիւղերնին վերադառնալով անոնց հետքը չտեսնալով, կռահելով վախճանը, որուն ենթարկուած էին անոնք, կը սկսէին ողբի ու կոծի: Իրենց տուններուն մէջ նշանն իսկ չէր մնացեր գոյքի և արմտիքի: Ինչ փորձանք չէ ձմրան և անձրեւներու եղանակին մնալ անտուն, անօթի, առանց անկողնի և առանց վերմակի: Այս կացութեան հետեանքով, հազարաւոր դժբախտներ, որոնք արդէն երկիւղէ, վիշտէ, տեսակ տեսակ ձախորդութիւններէ հիւանդացած էին, գետինները փռուեցան բոլորովին անպատապար: Պառկեցան տակը հրկիզեալ տուններու փլչելու վրայ պատերուն, խոնաւ հողերուն վրայ: Չորսական հինգական ժամ հեռաւորութենէն այս թափառական եղկելիները կրկին կուսակալութեան կեդրոնը գալով, ստիպուեցան դռները ափ առնելու և իրենց չգիտցած ձայնով ու լեզուով պատառ մը հաց մուրալու:

Այդ միջոցին էր որ, Կարին իր պաշտօնատեղին մեկնեցաւ կուսակալի փոխանորդը: Կուսակալի փոխանորդութեան համար եկաւ Մալաթիոյ կառավարիչ Ալի փաշան: *)

*) Ալի փաշան ծանօթ է Արաբ Ալի փաշա յորջորջմամբ, նշանաւոր իր գեղծումներով և կողմնակալութիւններով: Այս մարդն է, որ պատճառ եղած է, Մալաթիոյ մէջ տասը հազարի չափ հայերու այրուուն: Կուր է զրկած նոյնիսկ գաւառական ժողովի եւ դատարանի անդամ եղող հայերուն և ականաւոր վա-

Ողջ մնացած ոչ մի հայու երեւին վրայ, արեան հետք չէր տեսնուեր կոր: Չյուսացուելիք վատութիւններ տեսած էին այն թուրքերէն, որոնց մինչ այն ատեն օգնութեան ձեռք կարկառած էին: Մահմետականներուն և ոստիկաններուն գրպանները դրամով, տուներնին լեցուած էր գոյքով ու կարասիքով: Կուսակալի փոխանորդ Ալի փաշան՝ անգուր, անզգամ ըլլալուն հետ ալ ապուշ ու վեհերոտ մարդ մըն էր: Իրեն հետ տեսնուած մէկ պահուս ըսի:

— Լուր առի որ Անգլիա Իսկէնտերուն զրահաւոր պիտի զրկէ և զօրք հանէ. Ռուսաստան ալ բանակ մը զրկելու վրայ է եղեր. յայտնի է որ մեծերը, պատասխանատուութիւնը նետելու համար իրենց վրայէն, փօքրերուն վրայ կը նետեն յտնցանքնին, ասոր համար աչքերնիս բանանք:

— Ի՞նչ ընելու ենք:

— Ընելիք շատ գործ կայ. նախ՝ ըստ կարելւոյն հաւաքելու է հայերուն աւարի տրուած ապրանքները և գոյքերը և զանոնք դարձնելու է իրենց տէրերուն: Կերակրելու և ընակեցնելու է անօթի և մերկ մնացողները: Եթէ կը ջանկաք, յանձնախումբ մը կազմեցէք, ես ալ գտնուիմ այդ յանձնախումբի մէջ: Հայերէն ալ զբանի մը հօգի անդամ թող ըլլան:

— Արտօնութիւն առնենք Պոլսէն:

— Ասիկաներքին գործ է, կապ չունի Պոլսոյ հետ:

ճառակաւորներուն «գան զիրենք պիտի պաշտպանեմ», ըսելով, եկեր են. անիկա պահուած ոստիկաններուն կրակ ընել տալով ոչնչացուցեր է զանոնք, կառավարութեան քակրն մէջ. Աստուց մէջն են եղած Մենտիլձեան էֆէնտիի և Պօնափարթեան էֆէնտիի պէս մեծարժէք անձեր: Ասիկա ինքը կ'ըսէր հպարտանալով:

Երբ հոս օտար մարմիններ գան, անտուն, անօթի մէկը տեսնելու չեն: Ասոր կայսրն ալ գոհ կը մնայ:

Ալի փաշան համոզեցի, յանձնախումբ մը կազմեց, ըսածիս պէս հայերէն ալ չորս անձեր անդամ ընտրուեցան: Պարապ սենեակներ պատրաստեցինք կառավարչատան մէջ: Հետերնիս վեցական և օթական ոստիկան առնելով ելանք գիւղերը: Սկսանք որոնումներու, բազում գոյք գտնուեցաւ: Ընդհանրապէս թաղեր էին գետիները, ախոռները: Պահեր էին ծխնելոյգներու խորշերուն, պատերու պարապութիւններուն մէջ. այս միջոցով պատասպարուեցան շատ մը ընտանիքներ եւ տղաքներ, որոնց գոյքերը մէջտեղ չէին ելած, թէ ոչ հազարաւոր մարդիկ պիտի մեռնէին ցուրտէն: Երբ անակութենէն տասնուհինգ օր ետքը մարմին մը եկաւ բաղկացեալ պալատական սպայակոյտի հրամանատար Շաքիր փաշայէն և ծերակոյտի անդամներէն, Ռիւշտի պէյէն: Եկած օրերուն գիշերը, սեղան տրուեցաւ իրենց Ռէփի տնօրէն Մահմուտ Պէյի կողմէն: Այս խնձոյքին ներկայ էին կուսակալի փոխանորդը, հրամանատարը, ընդհանուր դատախազը և ես:

Յաջորդ գիշերը ես հրաւիրեցի կերակուրի:

Սեղանները պատրաստեցի շատ շքեղ և կատարեալ ըմպելիքներով, կրնամ ըսել թէ գրեթէ ընդօրինակեցի Սուլթան Համիտի խնձոյքները: Գոհ մնացին մեծապէս: Շարունակ կը խմէին կոր: Գլուխներու տաքեցած մէկ միջոցին, մէջտեղ դրուեցաւ քիւրտերուն ապստամբութիւն յարուցած ըլլալու սուտ հարցը:

Կուսակալի փոխանորդը և հրամանատարը ըսին թէ ասանկ բանէ մը լուր չունին:

Ես խնդացի և ըսի.

— Մամսոնէն մինչև հոս կապով եկաք: Ուրիշ

տեղերը չեմ գիտեր: Չհրգեհուած քաղաք մը, գիւղ մը տեսա՞ք այս կուսակալութեան սահմանին մէջ: Չեր տեսած հայերուն մէջ հանգիպեցա՞ք մարդու մը, որ իր ընտանեկան պարագայէն քանի մը հոգի սպաննուած չունենար: Վստահ եմ, որ «ո՛չ», պիտի ըսէք: Ասի այսպէս ըլլալով հանդերձ, կուսակալի փոխանորդ Ալի Էմիրի էֆէնտին, կայսերական պալատ հեռագիրներ քաշելով, երկրին խաղաղութեան մասին խօսելով, կը խարէր կոր կայսրը: Ասիկա հաւատարմութիւն չէ, դաւաճանութիւն է: Պէտք է ամէն բան շիտակ իմացնել կայսեր, որպէսզի այն ալ ըստ այնմ միջոցներ ընտրէ: Ինչեր մը Սարգերդի դաշտը ամբողջ կըրակներու մէջ էր մնացեր: Վերաւորներուն օգնութեան կոչերն երկինք կը բարձրանային կոր: Անանկ ատեն մը երբ լեռներն ու քարերը կը սարսռային, այս մարդը հեռագիր մը գրեր է միեւնոյն իմաստով: Ինձ տուաւ ծածկագրելու համար: Ահա այս ձեռով կաղապարեցի այն հեռագիրը (ու գրպանէս հանեցի ընդօրինակութիւնը): Հրգեհուեցաւ, աւերուեցաւ կուսակալութեան մէն մի կէտը: Կոտորուեցաւ և աւարի տրուեցաւ մէն մի անկիւնը: Մնացեր էր միայն կուսակալութեան կեդրոնը: Ամէն անոնք որ կրցեր էին փախչիլ գիւղերէն, ասկից ու անկից ապաստաններ էին հօս: Սթէ այստեղն ալ յարձակումի ենթարկուէր, անկաւկած երեսուն-քառասուն հազար հօգի ևս պիտի իշնային զիտապաստ: Մինչդեռ, ազատելու համար երեսուն-քառասուն հազար հօգի, կարելի է, ամէն ատեն, նուիրաբերել միայնակ գլուխ մը:

Ահա գլուխս:

Շաքիր փաշա սրտով, մարդասէր անձ մըն է եղեր: Երկարեց ձեռքը:

— Կը շնորհաւորեմ ձեր խղճմտանքին վեհուէթիւ-

նը, — ըսաւ:

Սակայն Սուլթան Համիտի է՛ն ծանօթ, է՛ն հօգի այրօզ լրտեսներէն՝ Արաբ Սամի պէյը, աստուհ կանուխ հեռագրով տուեր էր իր ժուռճալը:

Իսկոյն ևս ալ գրեցի հեռագիր մը:

«Բնա՛ւ կասկած չըլլայ որ, պիտի դայ ժամանակը, երբ հաշիւ տալ պէտք պիտի ըլլայ Եւրօպայի, թերևս ամբողջ մարդկութեան՝ այս դաւազին ոճիրներու մասին: Իմ բրածս, ան ատեն, պիտի նպաստէ թեթեւացմանը ձեր պատասխանատուութեան»:

Տարիներ ետքը, պալատական ընկերներէս մէկէն իմացայ թէ Արաբ Սամիին ժուռնալը և իմ հեռագիրս շատ գէշ կերպով շուարեցուցեր, շատ բարկացուցեր են Սուլթան Համիտը, մինչև անգամ ան մտածեր է մահուան դատապարտել զիս:

Այս աննախընթաց ոճիրները արիւնեցին բոլոր սիրտերը խղճահար և դատողութեան տէր անձերուն: Շատ սրտածմիրկ աեսարան մըն էր տեսնել մարդիկ, որոնք կեանքերնուն մէջ ափ չէին բացած ու հիմա դռնէ դուռ շրջելով պատառ մը հաց կը մուրային, խուճերով աղաք որոնք փողօցէ փողօց թափառելով կ'որոնէին իրենց հայրերը, մայրերը և եղբայրները:

Պատահեցաւ տեսնել շուկայ և վաճառանոց եկող քիւրտերէն հօթանասուննոց մարդուկ մը՝ զարգարուած, օձիքը ժանեկաւոր ժաքէթով մը, նոյնպէս կանաչ վաթթոցով, մօտաւոր գիւղի իմամ մը, որուն սրունքի ստորին վասէն կը նշմարուէր կանացի վարտիկի մը ֆիսթօն:

Լա՛լ թէ խնդալ, կարելի չէր որոշել այս կացութեան հանդէպ:

Այս անվերջ ոճիրներուն, տեսարաններուն վրայ

արդարութեան քօղ մը տարածելու ոճրապարտութեամբ, դատի տակ առնուեցան կարգ մը քերտերը : Ասոնցմէ անպարտ արձակուեցան կաշառք տուողները : չտուողները (որքան որ միտքս մնացած է) վախճուեան հոգի, երկուական, երեքական տարի ժամանակամիջոցով աքսորուեցան Ափրիկեան Տրիպոլիս :

Խայտառակութեան ալիքները շարժած ատեն, մեծ փութաջանութեամբ փնտռուելու վրայ էին Ահարոն ու Արուսթ անունով երկու հոգիներ. մին մտազաճառ և միւսը նպարավաճառ. իբրև թէ ասոնք Ֆէտայի են եղեր, անոնց մարմինները վերցնելը կը նրկատուէր սրբազան պարտականութիւն :

Նպարավաճառ Արուսթի մայրը հէգ Հռիփսիմէ բարեկամուհին էր, գրեթէ ամէն օր տուններնիս կ'ըլլար, աղուն վարքն ու բարքը գիտէինք, կապ չունէր անանկ Ֆէտայութեան, քօմիթէճիութեան հետ : Բոլոր յանցանքը կը կայանար իր գեղադէմ, երիտասարդ և վայելուչ ու յաղթանգամ մարդ մը ըլլալուն մէջ :

Մսավաճառ Ահարոնին ալ Ֆէտայի անունը կուտային, որովհետև ունէր խոշոր և թաւ ընչացք, երկիւղալից երևոյթ և ազատամիտ էր :

Ես, այս երկուքն ալ առած էի տունս և պահած էի ստորին յարկը :

Հակառակ ասոր, մահմետականներու բերնէն .

— «Այս գիշեր մսավաճառ Ահարոնը այսինչ գիւղն է գացեր. տասնըհինգ մահմետականներ է մեռցուցեր . . . Առտուան դէմ Արուսթ քսան տղայ մորթելով, աչտարակ մըն է շիներ անոնց գլուխներէն» . ի պէս յերեւանքներ կը լսուէին կոր :

Թայտնի էր թէ հայերուն վերագրուած յերիւրանքներուն նպատակն էր ատելութեան կրակը վառել անոնց դէմ :

Շատերը պաշտօնեաներէն, հասարակութենէն, ոստիկաններէն, վերը յիշած եղանակովս, տիրացան հարստութեան : Բայց կը վստահեցնեմ որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, այս արիւնոտ հարստութիւնները սիկարի թուղթի մը բոցին պէս փայլելով մարեցան : Նոյնիսկ այն որ օրինաւորապէս վաստակուած էր, ան ալ միասին գնաց :

Ստորեւ, այս մասին, օրինակելի դէպք մը պիտի պատմեմ :

Դէպքէն երկու ամիս վերջը կայսերական հրաման մը հասաւ որով աքսորավայրս Իզմիր կը փոխադրէին :

Չմեռը սաստիկ էր, գոց էին ճամբաները, նոյնիսկ թղթատարը չէր գործեր կոր. կամայ ակամայ սպասեցի ամիս մը : Անկապկաճ էր թէ, Խարբերդէն բաժնուելովս, պիտի սպաննուէին Ահարոնը, Արուսթը և զեռ աչքի փուշ եղած քանի մը հայեր, մօտս կանչեցի զիրենք, ըսի իրենց թէ միասին պիտի տանիմ զիրենք : Պատրաստուեցան : Որոշեցինք ճամբայ ելլալ Փետրվար մէկին : Իրօք ձիւն, փոթորիկ կը շարունակէին կոր թէև, բայց բաց օդով, ասոնց հետ ճամբորդելը վտանգաւոր նկատելուս, աւելի յարմար դատեցի փոթորկոտ ատեն ճամբայ իյնալը :

Միւս կողմէն լուր առի որ, քրիստոնեայ, մահմետական խել մը անձեր կը պատրաստուին յուղարկ գալու մեզ մեկնելու օրերնիս :

Այս պարագային վտանգաւոր գործ մըն էր հասարակութեան առջևէն, քաղաքէն հանելը այն անձերը որոս միասին տանել կ'ուզէի : Օր մը առաջ քովս հրաւիրեցի Հիւսէյն անունով Տէրսիմցի ոստիկան ենթասպան : Վստահութիւն ունէի այս անձին վրայ :

Խնդրեցի իրմէն, որպէսզի ընդունի վրաս առած աս

մարդիկս և ինձի յանձնէ Տէվէ Պոյնու լերան ստորոտը :

— Գլխուս վրայ, ըսաւ այս քաջատիրա և արթուն անձը, Գրչերուան մութը կոխելուն եկաւ, դանձնք առաւ և տարաւ :

Յաջորդ օրը կանուխ, մենք ալ կենդանիներ հեծնելով ելանք ձամբայ : Արդարև հաղարէն աւելի հայեր և քանի մը հարիւր մահմեականներ ընկերացան մեզի մինչև Մոլլա գիւղ որ երեք ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուէր : Իրարմէ բաժնուեցանք ջերմ եւ անկեղծ արցունքներ թափելով : Երբ Տէվէ Պոյնու լերան փէշը հասանք, դէմերնիս ելաւ ենթասպայ Հիւսէին էֆէնտին, իմ իրեն յանձնած մարդոցս հետ, ինձ յանձնեց ամէնն ալ ողջ առողջ : Ինքն ալ, այդ գիշեր եկաւ մեր օթեւանելիք Կէզին խաւը : Չիւնը հետզհետէ աւելնալու վրայ էր : Անկից մինչև Տրգրանակերտ, ձամբաները, վտանգներ անցուցինք ձիւնին և փոթորիկին պատճառով : Երբ Արզընի քաղաքին եզերքի օթեւանը պիտի իջնէինք, չորս հինգ փոթթոցաւոր մարդեր ելան դէմերնիս : Սենեակ կրեցին մեր գոյքերը, մաքրեցին և շուտ բերին : Սակայն աս մարդոց կեցուածքն ու ընթացքը և յարմարցուած ձերմակ լաթէ փոթթոցները կասկած ներշնչեցին մեզի : Տարակոյսը զոր զգացի, յայտնեցի ընկերներէս Պետրոս Գասպարեանի : Հինգ տասը վայրկեանէն Պետրոս Գասպարեան քովս զալով ըսաւ ինձի ասոնց հայ ըլլալը :

Կանչեցի անոնցմէ մին, նստեցուցի :

— Ի՞նչ պատահեցաւ այստեղերը հարցուցի իրեն :

Առաջին անգամ, խեղճ մարդը շատ երկմտեցաւ : Բայց քաջալերուեցաւ երբ Գասպարեան, հայերէն լեզուով, վստահեցուց զինքը :

— Մենք շատ զէջուեթիւն տեսանք, տասնը չորս

տարի է, այս օթեւանը կ'աշխատիմ ես : Կրտսեր եղբարքս և որդիս ալ մ'իասին կ'աշխատէին, օթեւանին տէրը մահմետական է, շատ կը սիրէր մեզի, մինչև հիմա, հինգ փարա մնաս տուած չունինք իրեն : Մենք էր որ կը տեսնայինք իր ամէն գործերը : Օրին մէկը աշխարհք իրար խառնուեցաւ : Ազգականներէս երեքը, քաղաքէն հոս եկան արիւն քրտինքի մէջ : Անուան Աբրահամ է :

— Ամա՛ն Աբրահամ, պակէ մեզի, մահմետականները պիտի մեռցնեն մեզի, քաղաքը հայ չի մնաց, ըսին :

Ախտը մտնելով պահուըտեցան : Երկու պղտիկ աղջիկներ և կին մը ունէի, զանոնք մտաբերեցի : Տուն գացի վազելով, ոտքերս կոտրէին և չերթայի : Դրաներնիս կ'անակի վրայ բաց էր : Ներս մտայ, մէկ սենեակ մըն է տուներնիս, սենեակի զրան մօտ, արևելունայ և մեռած գտայ կինս և աղջիկներս, այնտեղէն վերադարձայ հոս, խենթի պէս : Ատկէց աւելի ստորնութեան հանգիպեցայ այստեղ, Մեր էֆէնտին կը դաշունահարէր կոր տղաս : Տղաս կը պաղատէր կոր իրեն : Հակառակ անոր աղաչանքներուն էֆէնտին կը կրկնէր կոր իր հարուածները : Բանեցի այս վերջինին թեւը, կեցաւ : Կեցաւ, բայց երեք ժամ ետքը մեռաւ եղկելի զաւակս : Հիմա մնացինք երկու եղբայր : Երկուքնուս ալ խելքը գլուխնիս չէ : Միեւնոյն գիշերը տասնըհինգ մահմետականներ եկան հոս : «Մահսե տական եղէ՛ք, թէ չէ ձեզի պիտի սպաննենք», ըսին : Կամայ կամայ կեղծ մահմետական եղանք, մեր էֆէնտին վեց հայ աշխատաւորներ ալ ունի, անոնք ալ ընդունեցին մահմետականութիւնը : Մեզի թլփատեցին : Հիմա, ամէն օր կրօնաւոր մը գալով, աղօթել կը սորվեցնէ մեզի : «Էչհէտ» քաջել կուտայ :

— Օթեւանին տէրը թշնամութիւն ունէ՞ր տը-
ղուդ դէմ :

— Ո՛չ... տղաս կը ծառայէր էֆէնտիին անկեղ-
ծօրէն :

— Ո՛վ սպաններ է կինգ և միւս զաւակներդ :

— Չեմ գիտեր :

Խեղճ մարդուն կարողութիւնը չի մնաց խօսք խօ-
սելու : Ես ալ չուզեցի, աւելորդ հարցումներով նորո-
գել իր վէրքը : Բաւականացայ քանի մը մխիթարա-
կան խօսքերով :

Երբ Տիգրանակերտ հասանք, ուղղակի հիւր ե-
ղանք ոստիկան հազարապետ Սապիթ *) պէյի տունը .
տասնըեօթը ընկերներս զրի աջն պանդուկը, զոր Սա-

*) Սապիթ պէյ, մենէ առաջ, ոստիկան հրամա-
նատար «Թապուր աղասի» է եղեր Խարբերդի մէջ .
դատի տակ էր առնուած կաշառակերութեան և կողմ-
նապահութեան պատճառով . իր հարցաքննութիւնը տե-
ւեր է տարիներ . այն ատեն ոչ գոյք, ոչ դրամ է մը-
նացեր ձեռքը, հասեր է աղքատութեան և թշուառու-
թեան ծայրագոյն աստիճանին : Իսկապէս խղճալի վի-
կի մը մէջ էր, երբ զինքը ճանչցայ, միջնորդեցի հը-
րամանատար Մուսթաֆա Նայիմ փաշայի մօտ, զի-
մուսներ կատարեցի, վերջապէս աղատեցի զինքը և
«Թապուր աղասի» նշանակել Տիգրանակերտի . հո՛ն
գացած ատեն պարզապէս մերկ վիճակի մէջ էր . յիշա-
տակութիւնն ըրած միջնորդութեանս հետեւանքով, ե-
րախտապարտ է ինծի, իր ռնտանիքը կը բաղկանար
իր կնոջմէն և աղջիկէն : Քանի մը էջ վերը ըսի թէ օ-
րինակ առնուելիք դէպք մը պատմեմ, այս դէպքը կը
պատկանի այս ընտանիքին :

պիթ պէյ ցոյց տուաւ ինծի . Սապիթ պէյին առունը
հիւր իջնանելուս շարժաթիթը ընկերներուս ձեռքը կա-
ռավարական վաւերաթուղթ չգտնուիլն էր : Ճամբէն
վերադարձուելու հաւանականութիւն կար : Մտածեր
էի, նոյնիսկ յարմարցուած թուղթ մը առնել Սապիթ
պէյէն : Իսկապէս ալ, շատ դիւրութիւն ցոյց տուաւ և
օգնեց մեզ . Յարմարցուած թուղթեր տուաւ մեզի :
Ճամբարդութեան ատեն շատ օգուտներ տեսանք այս
թուղթերէն :

Տիգրանակերտի մէջ, քրիստոնէականերու թաղերը,
չուկան ծայրէ ի ծայր հրդեհած աւերած էին . գտայ
ճանչցած հայերէս մէկ քանին, տեղեկութիւն քա-
ղեցի . Տիգրանակերտի մէջ ալ կառավարական պաշ-
տօնեաները, ոստիկանները, զինուորական սպաները
առաջնորդ են հանդիսացեր . կուսակալ էնիս^{*)} փաշան
բանիւ և գործով գրգռեր էր մանմետականները, յոյժ
նշանաւոր և յանդուգն վատերէն էր Տիգրանակերտի

*) էնիս փաշան բնիկ Սելանիկցի էր, մուսուանդ,
քրիստոնէութեան ուխտեալ թշնամի սագի սւղեղով,
մեծ ուրախութեամբ ընդառաջ էր գացած՝ ոճիրի ըս-
պանութեան, տուներ կողոպտելու և գողութեան,
զորս կրօնական առաքինութիւն էր համարած : Քանի
մը տարի ետքը, թէեւ Հալէպի կուսակալ նշանակ-
ուեցաւ, բայց պաշտօնի չկրցաւ անցնիլ հիւլատոսա-
կան մարմնի կողմէ չընդունուելուն համար : Հագիւ ու-
րինն արտօնեցին իրեն Հալէպի մէջ պարզ քնակութիւն
մը : Իր Տիգրանակերտի մէջ գործած նախնիրներուն
քերմամբ էր որ հիւլատոսները չհամաձայնեցան ա-
նոր Հալէպի կուսակալ կարգուելուն :

Աստուած անիծէ զինքը :

ալոյ պէյր չէր քէղ Ազիմէթ փաշան։ Էնիս փաշայէն ստած համարձակութեան վրայ, խելքի և մտքի ըսքանչացում առթելու աստիճան առաջ էր գացած բոլոր հայերու տունն ու խանութները աւարելու եւ ոչնչացնելու գործին մէջ։

Այս ազէտները յոյժ աւելի եղած էին Տիգրանակերտի պատիան գաւառ և գիւղերուն մէջ։ Կոտորուած էին հազարներով մարդիկ, աւարի տրուած և հրօգնուած էին անխափ բոլոր տունները։ Չէր մնացեր ոչ մէկ հայու համար բնակելիք տեղ, վրան առնելիք վերմակ, պատառ մը հաց։ Այն ատեն Տիգրանակերտ կը գտնուէր վերև յիշուած կարբերդ եկած ըննիչ Յանձախուսթը։ Զօրարածոյ հրամանատար Միւնիք փաշա անունով անձ մը, շատ աշխատեր է որպէսզի արգելէ այս անզգամութիւնները և վատութիւնները, բայց առանձին մնալով ոչինչ կրցեր է ընել, Տեսնուեցայ այս անձին հետ։ Սրտանց ուղղամտութիւն ունեցող մարդ մըն էր։ Կուսակալին հետ՝ իրենց պատուարէր ընթացքը կատարեցներ է միւս յելուզակները։

Ի վերջոյ, ասոնց դրդումով, պաշտօնանկ եղեր և աքսորուեր է։

Նշանատախտակ ուրիշներուն օրինակը ըլլալու համար, վերը, կարգին, խոստացայ պատմել օրինակելի դէպք մը։ Ըսած էի թէ ոստիկան հազարապետ Սապիթ պէյ Սարբերդէն Տիգրանակերտ եկած էր, ասանց զրպանը հինգ փարա ունենալու, գրեթէ մերկ վիճակի մէջ։ Աչքերնուս հաւատալ չուզեցինք, երբ հիւր եզանք իր տունը։ Տասը, տասներկու սենեակէ բազկացած իր տունը, վերէն վար կահաւորուած էր պարսկական դորգերով և ոսկեթել մետաքսեայ կերպասներով։ Սեղանի սպասները ամբողջ արծաթէ էին-

Իր կնոջ, աղջկան գլուխը, կուրծքերը, բազուկները զարդարուած էին ադամանդներով։ Տեսնուած շքեղութիւնը և հարստութիւնը, անանկ ամսական հազար գանեկանով ոչ թէ եօթը ամիսէն, այլ եօթը ութ տարիէն ալ չէր կրնար գոյանալ։ Այս ստացուածքն ու գոյքերը ամբողջ հայու ապրանք էին։ Հիւրընկալութեան յաջորդ օրը նստած էինք միասին Քիւրդ մը մտաւ սենեակը։ Մատանի մը սենէր ձեռքը։

— Այս մատանին ծախու է, կ'ուզե՞ս մի, բայց շատ դրամ կը պահանջեմ, երկու ոսկի, ըսաւ ան։

Սապիթ պէյ առաւ մատանին նայեցաւ։ Յետոյ ինծի ուզեցելով՝

— Եթէ կ'ուզէք դուք գնեցէ՛ք, ըսաւ ինծի, Զեռքս առի մատանին և քննեցի։ Շատ խոշոր զմրուիտ մըն էր։ Մատանին մօտեցուցի ապակիին, և

— Իրաւամբ խիստ գեղեցիկ մատանի, ըսի, սակայն շատ գէշ տեսակէն արատ մը կայ մէջը։

Սապիթ պէյ մօտեցաւ զննեց ուշադրութեամբ։

— Բան մը չկրցայ տեսնալ։

— Ուշադրութիւն ըրէք։ Երկու շատ գէշ տեսակէն արատ կայ մէջը, մին՝ արեան, միւսը՝ աչքի արտասուակ՝ ընդամէնը երկու չիթեր, կը վախնամ օր քաղցկեղ ունենայ այն մատը, որ պիտի կրէ զայն։ Սապիթ պէյ նեղուեցաւ. «չեմ ուզեր» ըսաւ և քիւրտին վերագարձուց մատանին, այսուհանգերձ, Նշանացի ըրաւ քիւրտին։ Երբ քիւրտը դուրս ելաւ, պատրուակ մը ստեղծեց և ետևէն դնաց։ Կասկած չկայ որ զննեց զայն։ Այս դէպքէն ետք, տարի մը չէր անցած, երբ լուր առի թէ՛ պատճառարանութեամբ իմը Սապիթ պէյ պաշտօնանկ եղած և բանտարկուած է. արդէն նիհար և հիւանդկախ մարդ մըն էր, մեռեր է բանտին մէջ, կինը ամուսնացեր է, իր տան մէջ սպասարկօզ

երիտասարդ ոստիկանի մը հետ: Ոստիկանը դրամի է վերածեր ստացուածքը և ամբողջ գոյքը. զանոնք ամբողջապէս առնելով փախեր է. կինը մնացեր է հինգ փարայի կարօտ վիճակի մէջ, յետոյ հիւանդանալով մեռեր է քաղաքապետական հիւանդանոցին մէջ, առանց դրամի և անոք մնացած, աղջիկն ալ ինկեր է պոռնկանոց մը:

Ահա՛ թէ ինչ կ'ըլլայ վախճանը հարստութեան մը, որ ոճիրներով և ստորնութիւններով հաւաքուած է:

Ահա թէ ինչպէս առաջ կուգայ քաղցկեղը մատանին կրող մատին վրայ:

Առոնց պէս շատ օրինակցու նշանատախտակներ տեսայ:

••

Տիգրանակերտի մէջ կարաւաննիս ստուարացաւ: Աւելցան եօթանասունը չորս հայեր ալ: Ոչ ոք հինգ սանթիմ ունէր, այդ պատճառով այդ եղկելիները, ճամբայ ելան հետիոտն: Բարեբախտաբար դրամ ունէի ես, ասով էր որ կարողացայ հիւանդներուն ու ծերերուն մէյմէկ ջորի և ամբողջին կերակուր տալ: Տիգրանակերտէն ճանապարհելէս երեք օր ետքը հասանք Սեվերէկ քաղաքը, հոն զմեզ իր տունը ապանշականնց Օսման Աղան*) որ տեղւոյն ամենազգեցիկ հարուստներէն էր: Օսման Աղան յոյժ պերճասէր, ա-

*) Վերջերս փաշայութեան տիտղոսը արուեցաւ Օսման Աղային, յետոյ Պոլիս կանչուելով անդամ կարգուեցաւ քաղաքապետութեան, բայց չարտօնուեցաւ մէյ մըն ալ երկիր վերադառնալ: Պոլիս մեռաւ:

րիւնխում, անգութ մարդ մըն է եղեր: Այս մարդը հպարտութեամբ պատմեց թէ առանց բացառութեան կոտորել տուած է Սեվերեկի հայերը և անոնց գիտկաները լեցուցած է չքանոց հորերու մէջ:

Աս մարդուն ոճրագործութեան բոյն եղող տան մէջ անցուցինք այդ գիշերը, սարսափի և յուզումի մէջ: Օսման Աղային արիւնոտ աչքերուն մէջ կը կարդացուէին կոր ամէն տեսակի ստորնութիւն և գազանութիւն:

Առաւտուն, չլուցած, ճամբայ ելանք: Միտք ունէինք Ուրֆա հանդիպելու, բայց լուր առինք որ Ուրֆա ոճիրն ու կոտորածը շատ ու շատ աւելի, շատ ու շատ ցաւալի եղած էին քան մինչ ցայն վար մեր տեսածներն ու լսածները. մէկ կողմէն կապարէ տարափի բռնելով և միւս կողմէն քարեւղ թափելով ողջ ողջ այրած էին տասը հազարէն աւելի այր, կին, տղայ որ հողինին ազատելու համար ապաստանած էին եկեղեցին:

Ետ կեցանք: Երտակ դացինք Պրէճիկ: Ծառերը Պրէճիկի բնակիչներէն ինծի:

— Աշխարհի երեսը քրիստոնեաց մեաց, հարցուցին:

Ձկրցայ պատասխան տալ այս տգէտ, անասունէն ա՛լ աւելի անասուն մարդոց: Ձիգերս պրկուեցան, լեզուս բռնուեցաւ:

Պրէճիկի գայմազամը և զինուորական սպաները աչք անկեցին հետս եզող հայերուն, ուզեցին վերադարձնել, կաշառք պահանջեցին: Եթէ քիչ բան մը ուզէին, փորձանքը հեռացնելու համար կարգադրութիւն մը պիտի ընէի: Մարդ գլուխ տասը ոսկի պահանջուեցաւ, որով ինքուունըմէկ մարդու համար

հարկ էր 910 ոսկի վճարել: Հնարաւորութիւն չկար: Մտածեցի իրիստ վարուել: Մէյմէկ հեռագիր պատ-
րաստեցի պալատան, Բ. Իրան, Հալէպի կուսակալին
համար, գայմադամը եւ պաշտօնեաները վախ-
ցան. Հալէպի կուսակալէն բուսն հրաման մը եկաւ
գայմադամին, ասոր շնորհիւ, օծիքնիս ազատելով,
անցանք Եփրատ գետը: Ետտ երկիւղի մէջ էինք. ո-
րովհետեւ գալու ատեննիս՝ գէմեր իս ելած էին շատ
մը հայեր, ձեռնակապերով, որոնք ետ դարձուած
էին Պրէճիկէն: Յետ այնու ապահովուած հասանք Հա-
լէպ:

Այցելեցի Հալէպի կուսակալ Բէուֆ*) փաշային. ան
ատեն, Հալէպի մէջ ալ սկսած էր զրոյց շրջի որ սը-
րիկայ դասակարգի պատկանողներ և նպատակաւոր
կերպով Հալէպ եկած կարգ մը պետելիներ կոտորածի
և թալանի պատրաստութիւններու էին ձեռնարկած:
Այս մասին Բէուֆ փաշա տեղեկութիւն և վկայու-
թիւնս ուղեց. Ես ալ պատմեցի իրեն արն ամէն բա-
ներու մասին, որ յիշուած են և բացատրուած այս
գիրքին մէջ: Յիշեալը հրաւիրեց զիս իր քովի տթո-
ւոր: Եոյեց կռնակս, յարգեց և ըսաւ.

— Ի՞նչ լաւ կ'ըլլար, եթէ Աստուած ամէնուն

*) Ֆէուէ Բէուֆ փաշա անունով հանրածանօթ
եղող Բէուֆ փաշան՝ ձեռնաստուեն էր Միսհաթ փաշա-
յին, պատուաւոր, յառաջդիմասէր անձ մըն էր, եօթը
ութը քարի կուսակալ մնաց Հալէպ վերջերը՝ Հալէ-
պի և Ատանայի արտասովոր հրամանատար Ալի Մօհ-
սէն փաշան, Հալէպի թղթատարական տնօրէն Ալի Բի-
զա պէյ ժուսնալ տուած էին թէ՛ Բէուֆ փաշան Սւրո-
պա պիտի փախչի:

ալ տուած ըլլար այն բաները, որ պատիւ, սիրտ
խելք և զոհողութիւն կ'ըսուին:

Այն օրը երկուան գէմ լուր առի որ Բէուֆ փա-
շա թնդանօթներ զնել տուեր է գորանցի շրջակայքը
բարձր կէտերու վրայ, յայտարարելով որ Հայերու
վրայ յարձակում ըլլալու պարագային թնդանօթի պի-
տի բոնէ աամիկ խուժանի բնակած Պապ Նիրապ, Մէ-
շայքա, Գայլաք թաղերը:

Այսպէս Հալէպ գերծ մնաց խոշոր վտանգէ մը որ
շատ մօտեցած էր իրեն:

Տարիներ անցան, բախտը Հալէպ զրկեց զիս կըր-
կին, Սուլթան Համիտ*) ատեն, կեանքիս տասնըեօ-
թը տարին անցած է աքսորի մէջ:

*) Սուլթան Համիտ, կարճահասակ, նիհարակազմ,
հաստ ձայնով, նապաստակի պէտ երկչոտ էր. Ամէ-
նուն ծանօթ է որ կը բնակէր Երլազի պալատին մէջ:
Երլազի պալատը, ի հեճուկս ծախսուած խոշոր գու-
մարներուն, անճաշակ շէնք մըն է վերջին աստիճան,
պալատան՝ պաշտօնական կոչուած մասին մէջ անգամ,
առտուընէ մինչև իրկուեն օդային կազի լամբարներ
կը վառէին: Գեղեցիկ ըսուելիք բան մը չկար: Օրի-
նակի համար Սուլթանին բնակած բաժանումին մէջ իսկ
կը տեսնուէին կօտրած ապակիներով պատուհաններ,
և ծաղկամաններ ռեհանի և երիցուկի խուրձերով:

Ընթրելու եղանակը կատարեալ էր միայն: Առա-
ջին առաւօտուն, երկրորդ ցերեկը, երրորդ երեկոյեան
պահուն, չորրորդ արեւմուտքին, չորս անգամ կը ճա-
չէր օրը: Առտուան և ցերեկուան ճաշերը պաղ ուտե-
լիքներէ կը բաղկանային. հնդկահաւ, հաւ, լորամարք
գի, ձկան հաւկիթ, պանիր, ձկնկիթ, թեթև խաշած

Այն երջանիկ և յաղթական ազատութենէն ետքը մենք ալ, բոլոր օգտորեականերու պէս դառնինք Պոլիս։ Պոլիս հասնելէս շաբաթ մը ետքը, նոր կազմուելու

հաւկիթ, խորոված միս և պտուղի պէս ուտելիքներ։ Երեկոյեան և ցերեկի ուտելիքները բոլորն ալ տաք բաներ էին։ Տաք կերակուրներու թիւը քառասունէն պակաս չէր ըլլար, նախ կը ներկայացուէր ասոնց ցանկը, որոնցմէ ուզածը կը ջուկէր և կ'առնէր. ձաշը կուգար պաշտօնական արարողութեամբ. այսպէս կերակուրները կը դրուէին պնակներու մէջ, պնակները թապլաններու վրայ, թապլանները կը փաթթէին ստուիններու մէջ, սոյն փաթաթը մեղրամոմով կը կնքուէր արքունի խոհարարապետին կողմէ։ Երկրորդ հանդերձապետ Իլիաս պէյ (վերջերը հանդերձապետ Հսմէթ պէյ մեռած ըլլալուն, Իլիաս պէյ հանդերձապետ կարգուեցաւ) կը բերէր այս թապլանները կայսեր բաժանումը։ Կայսրէն մնացած չորս հինգ թապլան կերակուրներէն մին տիկիններուն, մին պալատան մարաշատ Օսման փաշային, մէկն ալ քարտուղարներուն, իսկ կինդերորդը կը զրկուէր պալատական բաժանումունքի ծառաներէն Ապուհրևատա էֆ. Լութֆի աղա, Գաղթականներու Յանձնախումբի նախագահ Րիզա փաշայի և այլն և կ'ուտուէր անոնց կողմէն։ Ամէն գովեստէ գեր ի վեր էր կերակուրներու քաղցրամութիւնը։

Սուլթան Համիտ օրական կը ծխէր քսանընէնք զըլանիկ իսկ կը խմէր վեց-եօթը գաւաթ սուրճ։ Տորեկի ձաշէն ետք կը քնանար Բօտ-մէկ ու կէս ժամ։ Բունէն ետք կ'ելլար պարտէզ, նշանաօթիւն կ'ընէր, կը

վրայ եղող իթթիհատնիներու կազմակերպութեան վախճանի վտանգը նանկատեց սիրաս։

Անոնք որ կը պատկանէին այս կուսակցութեան

զբաղէր նոյնպէս ատաղձագործութեամբ և լուսանդկարչութեամբ։

Առաւօտները և երեկոյները կը զբաղէր հասած գրութիւններով, գիւանատան զլիսաւոր պաշտօնեաններուն մին կը կարդար ամփոփումները եկած գրութիւններէն, իսկ ինք բան մը կ'ըսէր ամէնուն մասին։ Գիւանապետը կը գրէր հրովարտակաները։

Եկած գրութիւնները կը բաժնուէին երեք մասի.

- 1) Պաշտօնական Տեղեկագրեր։
- 2) Մասնաւոր տեղեկագրեր։
- 3) Անհատական խնդրագրեր։

Պաշտօնական տեղեկագրերը կուգային եպարքոսութենէն, սպարապետութենէն, թնդանօթարանի հրամանատարութենէն, դենպետութենէն, անձնական գանձէն, կանանոցէն, ծովային նախարարութեան բաժանումներէն։

Մասնաւոր տեղեկագրերը, փոքրագիր գրութիւններ էին որ կուգային կրկին վերոգրեալներուն հետ կապ ունեցող ներքին, արտաքին և ուրիշ բաժանումներէ։

Անհատական խնդրագրեր բուռելով կը հասկցուէին ունկնդրութիւն աղերսող անձերու կողմէն գրուած աղերսագրերը և քաջուած հեռագիրները։

Իրիկուան պահուն գրազբատուններէն կը հաւաքուէին պաշտօնատուններէն հասած գրութիւնները, կը պատրաստուէր ասոնց ամէնուն մէկ ամփոփումը,

կը բաժնուէին երկու մասի։ Մէկ մասը ազնիւ, իսկ միւս մասը՝ ապրուստէ զուրկ, կը պատկանէին ոտաբուսակ դասակարգի։ Ասոնք անձնական շահու համար աս ալ իր կարգի մաքուրի կ'առնուէր ոսկեմատեանի մը մէջ, ամփոփումը, տետրակներով միասին կը զրկուէր կայսեր, և հետեւեալ օրը մէյմէկ հրովարտակ կ'ելլէր։

Սուլթան Համիտ շատ ուշադիր էր իր առողջութեան։ Մարմնամարզ կ'ընէր, սգելից բմպիլիք չէր գործածեր, հակառակ որ կ'ընթրէր օրական չորս անգամ, կատարելապէս չէր կշտանար։ Միայն թէ իգամալ էր։ Կոզուտ անուն կուտային այն տիկիներուն, զորս կայսր իրեն կին կ'ընտրէր. ճիշդ է թէ կէօզտէներուն թիւը չէր անցներ երեքը, սակայն միւս կողմէն անհաշիւ էր թիւը մասնաւոր հարճերուն։ Սուլթան Համիտ ասոր անոր ամուսնութեան կուտար այն կէօզտէն կամ հարճը ուրկից փափաքն առած և կամ ձանձրացած էր։ Բսան օսկի ամսավարձք կը յատկացնէր այն կէօզտէին, զոր կ'ամուսնացնէր։ Միւսներուն թէև ամսական չէր տար, բայց դուրս հանելու պարագային անոնց կը պարգև էր խել մը զարդեղէններ և գոյքեր։

Սուլթան Համիտ սաղայելական խելքով, մտացի, վարպետորդի և տգէտ էր, կասկածոտ վերջին աստիճանի։ Կա ինչ բանի պէտք էր վերագրել զոյուլթիւնը հաղարաւոր լրտեսներուն որոնք լծուած էին իր ծառայութեան։

Չէր ուզեր որ իր պալատին մէջ գործած մարդիկը, յարաբերուին իրարու հետ։ Ընդհակառակը, իւր փափաքէր որ անոնք թշնամանան միմեանց հետ, ասով նպատակ ունէր տեղեկանալ իւրաքանչիւրի մտադրութեան։ Լուսթի աղա, սէտնատէնի պաշր Հա-

կը հնազանդէին ամէն հրամանի, գործիք կ'ըլլային սպանութեան և սպառնալիքի։ Միւս մասը ուսում տեսած, մտացի, զիտուն գասակարգն էր։ Ասոնք ալ, իրենց

Փրզ էֆէնտի, սենեկագետ հաճի Ալլի փաշա, թիւֆէնիճի պաշր Թահիր փաշա և զեռ շատեր, ուսում և կըրթութիւն չտեսած տգէտ արարածներ էին, բայց չափազանց ճարտար և հնարագէտ սուա և սխալ ժուռնալներ յերիւրելու մէջ։ Մանաւանդ հռչակաւոր եղած են վերջերր յառաջ եկած Ֆէհիմ փաշայի և իր մեղսակիցներուն ի գործ գրած նախճիրները։

Սուլթան Համիտ շատ հարուստ էր։

Կուսակալութիւններու խել մը բերրի և արժէքաւոր հողերն ու ագարակները, շատ չնչին գնով սր առած, միացուցած էր անձնական գանձուն։ Միայն թէ ասոնց բոլոր հատոյթները կ'երթային պալատական մասնաձեւներուն, լրտեսներուն և եւրոպական թերթերուն։ Եթէ կար պարագայ մըն ալ, որ երկիւզի մէջ կը ձըգէր Սուլթան Համիտը, ան ալ իր եղբայրը՝ Սուլթան Մուրատն էր։ Օրթաքէօյի Չրաղան Պալատի մէջ բանտարկուած եղբորը ողջ ըլլալը շատ կը նեղէր զինքը։ Անոր բանտէն հանուելով կրկին գահը բազմեցնելու հաւանականութիւնը կը փախցնէր իր քունը։ Ասոր համար էր որ չէր վարաներ, անոր պահպանութեան համար, տոպրակներով օսկի տեղացնել։ Սուլթան Մուրատի գլխաւոր պահպաններն էին Պէլիթիաչի ոստիկանագետ Հասան փաշա և ներքինագետ Ճէվհէր աղա։ Նախկին սուլթաններուն պէս, Սուլթան Համիտ ալ ներքիններ ունէր. ներքիններն ամառահանութենէ զուրկ սեւամորթներ էին։ Ասոնց գլխաւորին կը տըր-

ամբողջ կարողութիւնները և արժանիքը սկսան ծա-
աայեցնել անձնական շահերու ապահովութեան և շա-
բութեան: Մեր նկարագրերն չյարմարեցան իրարու:

ուէր Տար-իւլ-Սաստէ-էլ-Շէրիֆէ ազատը (Երջան-
կութեան դրան փառաւոր ազայի անունը, Գրզլար
աղասիները, ինչպէս և ներքինիները, ընդհանրապէս
տկարամիտ կ'ըլլան ծայր աստիճան: Ներքինիներ
կարգով կը նստէին աթոռներու վրայ. Սուլթան Հա-
միտի սենեակին առջեւ: Կայսրը, մէկը կանչելու կամ
բան մը ուղեւաւ համար կը գործածէր կարգ սպասող
ներքինիներ. կանանոցին մէջ ալ կը գործածուէին շատ
մը բնածին սեւամորթ ներքինիներ, որոնց հարէմազասի
անունը կուտային. ասոնք պաշտօնեաներ էին պալա-
տական հարձերու պահպանութեան, հակառակ հարէմ
աղասիներու հսկողութեան և խստութեան, հարձերը
առիթ չէին փախցնել և սիրոյ յառանջացած կապեր կը
յօրինէին ալպանացի պարտիզպաններու հետ: Երբեմն
ալ ձեռք կ'անցնէին. հարձերը կ'աքսորուէին Թաիֆէ:
Իսկ պարտիզպաններն ալ իրենց երկիրը:

Սուլթան Համիտ կը ստանար ամսական յիսուն
հազար ոսկի. անձնական գանձուն կապած էր մօտ
Թուրքիոյ մէկ չորրորդը, այսուհանդերձ կաշառք ալ
կ'առնէր:

Մեծաքանակ գումարներ կը ստանար մասնաւո-
րաբար մենաշնորհները արուած ատեն:

Իմ գիտցած ատենս, կաշառքի գլխաւոր միջնորդ-
ներն էին պալատական Բաղիպ փաշա, ծովային նա-
խարար Հասան փաշա, սպարապետ Աի Սաիպ փաշա:
Այս մասին ոչ թէ անելորդ, այլ հետաքրքրական կը

ասոր հետեանքն այն եղաւ որ ծայր աստիճան ցըր-
տութիւն և թշնամութիւն ծագեցաւ մեր մէջ:

Ասոր հետեանքն այն եղաւ որ, — կարծես թէ չէր

նկատեմ արձանագրել սպայակոյտի հրամանատար Իս-
մայիլ Ֆաղրի փաշայէ անձամբ լսած մէկ պատմու-
թիւնս:

Նակէլմաքէրս անունով հարուստ գրամատէր մը
մենաշնորհ սեղած էր Մուսանիայէն մինչև Պրուսա եր-
կաթուղի մը շինելու համար: Այս անձն ալ, բոլոր
մենաշնորհ ուղտորներուն պէս դիմած էր պալատական
Բաղիպ փաշային, որ դեռ նախարար չէր եղած: Կը
մտնէ սակարկութեան. Բաղիպ պէլ Սուլթան Համի-
տին կը հաղորդէ քանակը առաջարկուած կաշառքին,
յայտնելով Նակէլմաքէրսին գալ հետեւալ առաւօ-
տուն իր տունը, վերջնական պատասխան ատենու
համար:

Սուլթան Համիտ չէ հաւաներ առաջարկուած քա-
նակին «... ոսկի եթէ շտայ, շըլլար» ըսեր է. այն օր
իրիկունս դէմ, Բաղիպ փաշայ կը հիւանդանայ,
բուռն խիթի մը կը բռնուի, տուն կ'երթայ հանգստա-
նալու և դարմանուելու համար:

Գիշեր և ցորեկ Սուլթան Համիտ մարդ զրկելով
անոր մօտ, կը հարցնէ անոր որպիսութիւնը. խիթը
կը շարունակէ բուռն թափով: Բաղիպ փաշա կէսօրին
թուղթ մը կը դրէ կայսեր հետեւալ պարունակու-
թեամբ:

«Պ. Նակէլմաքէրս եկաւ. սիրաման եղած... ոս-
կիէն վար շըլլարը» ըսի, չհաւանեցաւ. հուսկ վերջին
ըլլալով... ոսկի կ'առաջարկէ: Կը ցաւիմ որ հիւանդ

բաւեր տասնըեօթը տարիներու աքօսորի կեանքս զոր անցուցի Սուլթան Համիտի ժամանակ Տիգրանակերտի, Խարբերդի, Հալէպի, Տէյր Զօրի մէջ — կրկին պարտաւորուեցայ Հալէպ երթալ :

Հալէպի մէջ էր որ ինձ դիպեցան, երկրորդ անգամ զօրակօչը և զարհուրելի գրուագները հայկական խրճ. զժուլթիւններուն :

Հալէպի բարձրագոյն վարժարանի տնօրէն կարգուեցայ առանց Պոլսոյ գիտութեան : Թուրքիոյ ամէն բաններուն պէս, գարշանք կը զգայի անոր քաղաքակա՛նութենէն և կատավարական գործերէն առհասարակ : ասոր համար ալ բնա՛ւ չէի խօսեր անոնց մասին . սա՛

ըլլալուս պատճառով, չկրցայ յարգանքներս անձամբ մատուցանել յոտո Նորին Կայսերական Վեհափառութեան . ինչ հրովարտակ որ հրամայուի այնպէս պիտի պատասխանեմ . . . »

Սուլթան Համիտ այս թուղթի ետեք՝

« . . . ոտի պակաս չըլլար պատասխանը տուր » ի մաստով երկտող մը գրելով կը գրկէ :

Կեղծ է եղեր Բաղդապ պէյի խիթը, ուզեր է թուղթ մը առնել Սուլթան Համիտի ձեռքէն անոր ձեռագրովը :

Յաջորդ օրը կուգայ ան պալատ և կ'ըսէ Սուլթան Համիտին .

« Ի՞նչ արժանի չէք վստահութեան . կը փնացնէք վաղը այն մարդը, որ այսօր կը պաշտպանէք . ապա՛ գաս ապահովելու ստիպողականութեամբ խաղ մը խաղացի ձեզ . վերջին տատիման վստահելի տեղ մը պահած եմ Նահելմաքէրի կաշաւքի խնդրոյն : առթիւ ձեր ինձ

կայն հակառակ այս ամէնուն, իմացայ քանի մը անկեղծ տեսնուած անձերէս պատերազմի կոչերու հրապարակ ելած ըլլալը :

Օրին մէկը, քովս եկաւ Յովսէփ Պոյաճեան անունով անձը, որ հինաւուրց և իսկական բարեկամս էր, լուսահատ և ջաւագին շեշտով մը ըսաւ ինձի ան .

— Կալուած մը ունիմ Լիճէի մէջ (Լիճէ Տիգրանակերտի պատկան գիւղաքաղաք մըն է), ասոնք ծախելու համար գիտես որ հոն գրկեցի տղաս Կարապետը, արդ լուր առի թէ ջարդեր են Լիճէի հայերը . անկտակած զաւակս ալ ենթարկուած է այս աղէտին :

Իր հօրը չափ ես ալ կը սիրէի Կարապետը, միակ

զրկած ձեռագիրը . եթէ որեէ վասնդի ենթարկուիմ, կամ մեռնիմ ոչ բնական մահուամբ, քանի մը կարիւր հազար օրինակ պիտի տպուի այս և պիտի ցրուի արար աշխարհի :

Եթէ չըսվիք ինձի բան մըն ալ չըլլար » :

Սուլթան Համիտ այս անփութութեան համար շատ կը ձեռէ իր ծունկերը, բայց բանը բանէն անցեր էր . արդարեւ ալ Բաղդապ պէյ կամ փաշա, մինչև վերջը Պապ պաշտօնի վրայ և պատմուածին նայելով գիղեց հինգ միլիոն ոսկրի հարստութիւն մը :

Որքան Սուլթան Մուրադը, նոյնքան ալ պանպանութեան և հակողութեան տակ կը գտնուէին գահաժողովուրդը, կայսերազուները՝ կ'երթային Երլարդի պալատին մէջ դպրոց յորջորջուած տեղ մը և հոն գրել-կարգալ հ'ուսանէին շիփաշխտակ կարգալ գրել չի գիտցող ուսուցիչներէն ու պարզ ընթերցանութեան և թուարանութեան գասեր կ'առնէին :

նեցուկն ու յոյն էր հօրը, հարցուցի թէ ուրկից առած է այս լուրը և թէ՛ հեռագիր առա՞ծ է կամ ոչ:

— Ո՛չ, հեռագիր քաջել չեկաւ միտքս, պատասխանեց թշուառ հայրը:

Հեռագրատուն վազեց արագօրէն: Ափսոս որ մինչև այսօր ալ լուր մը չառնուեցաւ ի մասին Կարապետի ողջ ըլլալուն: Անկից վերջը ընդհակառակը դէշ լուրեր հասնիլ սկսան, որ մը, փողոցին մէջ տեսայ մարդկային հօտ մը, բազկացած ծերերէ, տղաքներէ, հիւանդներէ, որոնք մեծ դժուարութեամբ կը քայլին շրջապատուած բիրերով, սուիններով, մտրակով զինուած ոստիկաններէ: Շատերուն օտքերը ուսած տանջանքով քայլ կը նետէին. կարգ մը մարդիկ, անդամները նոյն այդ կարաւանին, մտած էին հիւանդներուն թեւը, զորս կը տանէին կօր պարզապէս քաշկռտելով: Մօտեցայ ոստիկաններէն միտջն և հարցուցի.

— Որո՞նք են ասոնք:

— Հայ գաղթականներ:

— Ուսկի՞ց կուգան:

— Սերաստիայէն:

— Ի՞նչ բանի հետեանք է այս տարագրութիւնը:

Դեռ պատերազմ չկայ Սերաստիոյ կողմերը: Բացի այդ բիրով, մտրակով կ'երթան տարագիրները, ի՞նչ կը նշանակէ այս:

Միեւնոյն ատեն հանգիպեցայ բարձրաստիճան զինուորականի մը: Մեր մէջ անցաւ հետեւեալ խօսակցութիւնը.

— Ասոնք գաղթական են, կուգան Սերաստիոյ կողմերէն. խելքս չհասաւ այս տեսակ գաղթականութեան: Յետոյ ի՞նչ կայ Սերաստիոյ մէջ.

— Ասոնք գաղթական են. բան մը չկայ Սերաստիոյ մէջ:

— Այն ատեն ինչէ՞ն առաջ եկած է տարագրութիւնը:

— Հայերը կը հանեն իրենց երկրէն. կառավարութիւնը ուրիշ կողմ կը զրկէ զանոնք:

— Լա՛ւ, պատճառք:

— Ստովարար ընթացքի մէջ կը գտնուին կօր եղեր, պատերազմի ատեն, քնականաբար առիթ չի տրուիր ներքին հոգերու:

— Ո՞ր տեղերու մէջ է որ խռովարար ընթացքներ են օւնեցեր:

— Ամէն տեղ:

Հասկցայ: Հաւանական է որ, տեղ մը, երկու երեք զինուորներ բանդագուշեր են. արդէն պատրուակ որոնող կառավարութիւնն ալ, պատճառ համարեր է զայս գողութեան և ոճրագործութեան համար նոր դանկեր բանալու համար. Արդէն ակներե էր որ, պաշտօնեաները, ստիկանները, քաղաքապահ զօրքերը պիտի ջանային օգտուիլ այդ պատճառներէն և պատրուակներէն, որովհետեւ բերանին էր մնացեր համը առջի գէպքերուն:

Յարմար տեղն ըլլալուն, պիտի յիշեմ որ Սարաբղի խառնակութենէն վերջ գիշեր մը նստած էինք Արփիարեան Նշան էֆէնտիին տունը, ըսած էի մտերմական խօսակցութեան մը ընթացքին.

«Այս գէպքին վրայ մի նայիր վերջացածի աչքով. պատմութիւն մը կարդացած եմ անգլիերէն ընթերցանութեան գիրքի մը մէջ. Լորտին մէկը ձեռք անդուցեր է վազրի կորիւն մը. անուցեր է զայն, վազրը ընտանի շան մը պէս կը շրջի տան մէջ, և Լորտին սենեակը մտնելով կը լիզէ եզեր անոր ձեռքը. վազրին լեզուն խարտոցի երեսին պէս կ'ըլլայ. լիզելով լիզելով կը մաշեցնէ Լորտին ձեռքը. արիւն կ'ըլլայ:

վազրր արեան համը առնելով կը սկսի խածնել Լորտին ձեռքը . Լորտը կը կռահէ գայիք վտանգը . հրաման կ'ընէ ծառային լաւ նշան տեսել և սպաննել վազրը . ծառան կը սպաննէ վազրը և կ'ազատէ Լորտին ալ կեանքը . Հայկական Հարցն ալ յոյժ յար և նման է վազրի պատմութեան . թուրքերը առին համը աւարին . վտան էրէք որ քանի մը տարի ետքը պիտի ստեղծեն չնչին պատրուակներ, պիտի կրկնեն այս ոճերները . իրաց այս վիճակին մէջ անխելքութիւն է նստելը թուրքերուն մէջ : Ելլալու երթալու է Եւրոպա կամ Ամերիկա, կամ ժողովուելու է հոն, ուր հաւանականութիւն կայ, որ օր մը կազմուի Հայաստանը . հոն է որ պէտք է հաւաքուին ամէն տարի, ամէն երկրէ ութնական, տասնական հիմերը գնելու համար սեփական օճախի մը : Թէեւ շատ դժուար ըլլայ ասոր գործադրութիւնը, շատ կարօտի ատենի, միւս կողմէն որքան ալ բազում ատենի պէտք ունենայ, որքան ալ կապուած ըլլայ գոհարեութեան հետ, էն կարճ միջոցը, իմ համոզումովս այս է, ասկից աւելին կրնայ ձեռք բերուիլ զէնքէն աւելի՝ քաղաքական և գիււանագիտական զօրութեամբ :

Անցեալ տարի Ազեքսանդրիոյ մէջ տեսնուեցայ Քիւրքճեան նազարէթ էֆէնտիի հետ, ան ըսաւ ինծի .

— Ի՞նչ մարգարէութիւն մը ըրիր երեսուն տարի առաջ . այսպէս ըսած էիր, ես մտիկ ըրի քու ըսածներդ . այն ատեն ծախեցի ամբողջ կալուածներս, այսու զերթ մնացի ազգակիցներուս ենթարկուած վնասներէն և դժբախտութիւններէն .

Այսպէս ալ, զինուորական էֆէնտիի խօսքերէն մակարեբեցի, որ վազրը արեան հոտ մը առած էր : Երբ տունիս առջեւ եկայ, հանդիպեցայ նոր բազմութեան մը, երկու ուրիշ կիները մտած էին ձեր հիւանդ

կնոջ մը թեւերը և կը ջանային քալեցնել զայն . կիներէն մէկուն գիրկը տղեկ մը կար, կմախքացած : Չորս ուրիշ ազաք լալով ողբալով կ'ընթանային քովերնուն, ասոնց պզտիկը վեց և մեծը տասը տարեկան պիտի ըլլար :

— Քաղաքապահ զօրքերը առջևն են, այս իմ տունս է, ներս մտէք այս տունէն ասանց նշմարել տալու, ըսի իրենց :

Եղկելիները երկինք վերցուցին աչքերնին, որոշա կի կ'երևար որ կ'ազօթէին և սրտանց շնորհակալութիւն կը յայտնէին կար :

Կամաց մը ներս մտան հստէս . Իսկոյն ջուր տաքցնել տուի, տաք ջուրը դրի ռաւերներնին, ամէնուն ալ ռաքերը ուռած էին . ապուր խմցուցի, կինս իրենց տուաւ իր ձերմակեղէններն և հագուստներէն . հանգստացան քիչ մը . հարցուցի թէ ուրկից կուգային, ծերուկ կինը պատասխան տուաւ .

— Մինք տիգրանակերտի ենք . անունս Մարիամ է . այս երկու կիները ազջիկներս են, ասոր անունը Աննա, անոր անունը Աղնիւ է . ասոնք ալ Աննային տղաքն են . Տիգրանակերտի մէջ շատ լաւ կեանք կը վարէինք մեր վիճակին համեմատ . օր մը յանկարծ, քաղաքապահ զօրքերը մեր տունը կոխեցին, աննելով տարին երկու փետաներս . ժամ մը ետքը կրկին եկան ու տարին մեզ ալ . թող շտուին որ անկողին, վերմակ առնենք հետերնիս : Քիչ մը զբամ ունէինք, ասոնց ատնաց ցուցնելու, զանի, մէյ մըն ալ ազջիկներուս հարսանեկան ոսկիներ կային, զանոնք առնելով պահեցինք և ճամբայ ելանք հետիտոն . Տիգրանակերտէն մինչև հոս եկանք քալելով . ճամբան ոստիկանները առին մեր զբամներն ու ոսկիները . միւսոյն ատեն փճացուցին զաւակներուս պատիւը, պիտի երթանք

եղեր մինչև Տէր-Չօր, կաղալով կաղալով թերևս կարենանք քայել մէկ երկու օր ալ, անկից ետքը անպատենբու մէջ իյնալով կը մեռնինք: Դժբախտներուն աչքերէն արցունքը կը թափէր կոր:

Երկու օր ետքը մեռաւ մօրը գիրկը եղող երկամսեայ տղան: Միւսները քովերնիս մնացին մինչև վերջի ատենները: Անկից ետքը, սկսայ ութնական, տասնական ծեր, հիւանգ, տղայ առնելու ամէն տարագիր խումբէ:

Չարմանալով կը զարմանայինք երբ մտիկ կ'ընէինք իրենց գլխէն անցած դարձածը և անտես վրայ ի գործ դրուած կեղծքումներու և անզգամութիւններու չափն ու աստիճանը:

Սկսանք ձրի դարմանել տալ հիւանդները բժշկապետ Տօքթ. Ալթունեան էֆէնտիին, որ կրկին կեանք պարգեւեց խեղճերուն. յաւիտեանս երախտապարտ եմ աս շատ հոգածու մաքրասիրտ բժշկին: Տարագիր խումբերու մէջ յոյժ սակաւ էին այրերը: Մանաւանգ բնաւ այր չկար Սարբերգէն և Սերաստիայէն և կողներուն մէջ:

Դահին դասակարգին էն անսիրտը, էն աննկարագիրն եղող Սերաստիոյ կուսակալ Մուսմէր փաշան կոտորել տուեր է Սերաստիոյ մէջ գանուղ բոլոր այր մարդիկը: Սարբերգի կուսակալն ալ իրենց ընտանիքներէն ջոկել է տուեր Սարբերգի այրերը և Սարբերգի ու Մալաթիոյ միջև գտնուած Բէժօմիւր խան յորջորջուած տեղը առաջնորդելով գնդակահարեր է գանսնք ու զիականերնին նետեր Սփրատ գետը:

Պատահեցաւ որ, օր մը անցնիմ Հալէպի Ճուտէյտէ կոչուած շուկայէն, տարագիր խումբը նստած էր խառն ի խուռն ու ցիրուցան եկեղեցւոյ պատին տակ: Ոչ մէկին երեսը արամ մը արիւն, ոչ մէկին մարմնոյն

վրայ արամ մը միտ չէր մնացած: Ամէնն ալ անօթութենէն հասած էին կենդանի մեռեալի վիճակին:

Հաւանաբար երեսուննոց երիտասարդ մը նստած էր գետինը, մէկ ծունկին վրայ պառկած էր ծեր, իսկ միւսին վրայ երիտասարդ կին մը: Երիտասարդին գիրկը մէկ տարու տղեկ մը կար: Կիններն ալ, տղան ալ մեռած էին, իսկ երիտասարդը հոգին աւանդելու վրայ էր: Երկու կիներէն մին՝ մայրը, իսկ միւսը՝ կողակիցը, տղեկն ալ զաւակն է եղեր: Դեռ ևս հոգիս կը սարսռայ, երբ միտքս կը բերեմ այս ահաւոր պատկերը, Աստուած երբեք չի ներեր անոր որ այս աստիճան զարհուրելի ոճիրներ կը գործէ:

Օր մը, առտուն կանուխ ինձ լուր տուին որ այցելութեան եկած է թէժիի պաշտօնեաներէն: Չրաքեան Կարապետ էֆէնտին, բարեկամս:

«Հրամմեցէ՛ք» ըսի: Ներս առի, Մօտը կար ձերմակ պիտերով անձանօթ անձ մը: Սովորական բարևտուքէն ետքը Կարապետ էֆէնտին բաւ:

— Ձեզի աղաչանք մը ունինք, այս անձը Օհաննէս Սայեապալեանն է Գոնիայի երեւելիներէն, զինքը, կինը, տղան, դուստրը, որդեգիրը, ամենքը մէկանց հաներ են Գոնիայէն. հազար տառապանքով եկեր են մինչև հոս, հիմա պիտի զրկեն Տէր Չօր: զինքը, տղան, կինը և որդեգիրը զրկեն ուր որ կ'ուզեն, հաճ են: Ճամբան կոտորուեր, սպանուեր են կարելորութիւն տուած չունին. միակ մտածումսին՝ իրենց աղջկան պատիւը և պարկեշտութիւնն է. իրենց համար կեանքէ աւելի, ամէն բանէ աւելի սուրբ է պատիւսին, չէն սուրբ որ ան աղարտի: Դուք ուսուցիչ էք գերմանացիներու դպրոցը, գիտենք որ շատ յարգանք ու վստահութիւն ունին զէպի ձեզ, միջնորդ

հանդիսացէք շնորհաբար, թող ընդունին սա աղջիկը վարձքով, գիշերօթիկ . իրենք ինքզինքնին պիտի յանձնեն վտանգին ու ճակատագրին և պիտի երթան :

Այս խօսքերը և Օհաննէս Սայեապալեան էֆէնտիին վիճակը արցունքի կայլակներ ցայտեցուցին աչքերէս : Հայր մը կը հաճէր մեռնիլ իր ամբողջ ընտանեկան վարագայով միայն թէ չէր հաւաներ կոր որ անէծքի տակ փչրուի անոր սրբութիւնը :

Ի ներքուստ և դառնակակիծ լացող հոր խոստացայ ամբողջ լաւագոյնս ընել, դպրոց ընդունիլ տալու համար իր գուտորը :

Արդէն մտանցած էր դպրոցին դասի ատենը, խնդրեցի իրենց արտօնել զիս և սպասել վերադարձիս : Գացի գերմանական վարժարանը . անոնց երկսեռ վարժարաններուն ես էի միայն այցելու թուրքերէնի ուսուցիչը . ճշմարիտ է որ շատ կը սիրէին զիս . հարցը դրի տնօրէնուհիին կսկծալի լեզուով մը և խնդրեցի . ո՛հ է կերպով չի յաջողեցայ :

— Հայ տարագիր չենք ընդունիր, մանաւանդ որ գիշերօթիկի բաժանում չկայ, ըսելով ազատեցաւ :

Մեծ յուզումով անջատուեցայ դպրոցէն : Մինչդեռ կը մտածէի թէ ինչպէս այդ դժբախտ հօրը պիտի հաղորդեմ մերժումի պատասխանը, ահա հնարք մը եկաւ միտքս : Պարզապէս ուրախացայ տնօրէնուհիին մերժումի պատասխան տալուն վրայ : Տուն վերագարձայ : Սայեապալեան էֆէնտին, ներումի կամ կախադանի որոշման սպասող ոճրագործի մը պէս, կը նայէր կոր բերնէս ելլելիք խօսքերուն :

— Դպրոց չեն ընդունիր կոր ըսի . բայց ես աւելի լաւ բան մը մտածեցի, զուք աղջիկներդ դպրոցը ձգելով, վտանգի մէջ չպիտի նետէք ինքզինքնիդ : Ո՛չ . . .

զուք ալ չպիտի երթաք, չպիտի դատուիք ձեր զաւկէն : փոքր է այս տուներնիս, առած տարագիրներու քանակը հարիւրը անցաւ, անոնք ալ շատ դժուարութեամբ կը սեզմին կոր, ուրիշ մեծ տուն մը կը վարձեմ . կ'ապրինք միասին : Խեղճ մարդը ուրախացաւ, յաւիտենական կեանքի արժանացածի նման : Ետևով պահանջքի համաձայն մեծ տուն մը դտայ : Սայեապալեան էֆէնտիի աղջիկը վարակուած էր, այն ատեն բուռն կերպով տարածուած ժանտատենցէ : կառք մը դրինք, մեծ դժուարութեամբ և նեղութեամբ տուն կրցանք բերել զինքը, Բալոր հիւանդներու օգնութեան փութացող բժիշկ Ալթունեան էֆէնտին չուշացաւ Սայեապալեան Օրիորդ Զուարթին ալ հասնելու : Այդ յարգելի և վեհանձն բժշկին ճարտարութեան շնորհիւ ազատեցաւ Օրիորդը, ազատեցան Սայեապալեան Օհաննէս էֆէնտին և կինը, որոնք վարակուեցան նոյն հիւանդութեամբ : Միայն կարելի չեղաւ փրկել միևնոյն հիւանդութենէն բռնուած որդեգիր օրիորդը, որ դարուն կեանքին տասնըչորս տարին չբարեկեցած թօշնեցաւ գնաց :

Այս ընտանիքին հետ, մէկ տան մէջ բնակեցանք չորս տարի (մինչև զինադադար), ցայսօր ալ կը յիշենք անոնց պատիւի, վարքի ու բարքի և խղճի բարձր աւաքինութիւնները :

Օրիորդ Զուարթ շատ յաջող կերպով գիտէր Ֆրանսերէն, ճարտարօրէն գահնակ կը նուագէր . ամէն տեսակ գովեստէ վեր էր իր կրթութիւնն ու նրբութիւնը :

Սովորական բան էր ամայի փողոցներուն մէջ հանդիպիլ հինգական տասնական դժբախտներու, որոնք թափուած աւուրքի դէզերուն մէջ հաւերու

պէս բրելով, բան մը կը փնտռէին բերաններն նետելու համար: Շատ կազգուէի, երբ ասոնցմէ մէկ քանին զատելով, տունս կամ տնօրէնը եղած բարձրագոյն վարժարանս տանելով կը տեղաւորէի և կը լսէի իրենցմէ՝ իրենց պատահարներուն մանրամասնութիւնները:

Ոմանք բարձրագոյն ուսում առած, լուսաւոր գաղափար ունեցող, ոմանք ատենին մեծ գրամագըլխով գործի մարդիկ ըլլալով հանդերձ համակերպած էին այս աստիճանին:

Պատահեր է, որ Տէր Զօրի փախստականներէն, Պէզիրճեան Արմենակ ատանացին ճամբան կը բռնուի թիֆուսի: Հիւանդութիւնը կ'անցնէ ախտներուն մէջ անկողին ընտրելով արաբ գիւղերու կենդանիներուն աղբերը. այդ վիճակին մէջ իսկ ոստիկանները ծեծեր են զինքը: Նորէն կը ղրկեն զայն Տէր Զօրի ճամբան, այսուհանդերձ փախստատէ փախուստ յառաջանալով կուգայ կը հասնի Հալէպ: Կիսամերկ վիճակի մէջ էր երբ ինծի բերին այդ թշուառը: Դէմքին վրայ տեսայ ազնուականութեան և ազնուութեան յայտնի նշաններ. նախ և առաջ ծառայութեամբ դպրոց ատի. կառավարութիւնը սնունդ կուտար պետական պաշտօնեաներուն, նոյնիսկ ծառաներուն: Մէկ հոգիին տրուած սնունդը չորս հինգ հոգիի բաւելու չափ էր: Քանի մը ամիս կար որ Արմենակ էֆէնտին կ'օգտուէր սնունդէն, այսուհանդերձ, պատառատուն վիճակի մէջ էր վրան գլուխը. որ մը ըսի իրեն:

— Արմենակ աղա՛, բան մը չի՞ մնար կոր քեզ սընունդէն, գէշ չըլլար եթէ ձեռք մը հագուստ առնես:

— Շնորհակալ եմ, իրաւ է թէ շատ կ'օգտուիմ սնունդէն, բայց...

— Բայց ի՞նչ...

— Պզտիկ եղբայր մը ունէի. ես դես ամուրի եմ, փոքր եղբայրս ամուսնացած էր. ես, եղբայրս, եղբորս կինը և երկու փոքրիկ տղաքը միասին տարագրուեցանք Ատանայէն: Եղբորս կինը և երկու պզտիկները հոն մնացին, անոնք ազատեցան շնորհիւ և միջամտութեամբը Մերսինցի Պէտէլեան Արթին էֆէնտին, որ մենէ տարիներ առաջ եկած հաստատուած էր հոն: Ես և եղբայրս ղրկուեցանք Տէր Զօր. ճամբան սպաննեցին եղբայրս, ինծի համար այլևս կեանքը իր նշանակութիւնը կորսնցուց: Հարիւր հազար գոնուրութիւններու գլուխ ծնելով Հալէպ գալս եղբորս կընոյլ և աղոցը համար է. ձեր շնորհիւ, ասոնց կը ղըրկեմ կոր մնացորդը ստացուած սնունդիս:

Ձեռքը սեղմեցի այս վեհանձն մարդուն. երկիրը վաճառականութեամբ զբաղած, շատ հող ունեցած է եղեր:

Յաջորդ օրը մեր տունը բերաւ եղբոր կինը և տղաքը, տեսանք տեսնուեցանք:

Ասօր վրայ տունս առի Արմենակ աղան և իրեն յանձնեցի տանս բոլոր գործերը:

Սարբերդ գտնուած միջոցիս ունէի Թարագճեան Գրիգոր էֆէնտի անունով բարեկամ մը, մեծ հողատէր և կալուածատէր, որ միւլնոյն ժամանակ անգամ էր Գաւառական Ժողովին. շատ հաւատարիմ և պատուաւոր մարդ մըն էր, չափազանցած չեմ ըլլար եթէ ըսեմ որ բոլոր Սարբերդի մէջ չի կար մարդ մը, որ իրմէն բարիք կամ օգնութիւն տեսած չըլլար: Անկասկած թէ երջանիկ էին ասանկ յարգի ընտանիքի անդամներն ալ:

Պատահեցաւ որ պզտիկ թուս մեանի. բարձրա-

գոյն վարժարանի տնօրէնը ըլլալու հանգամանքով ,
 յուզարկաւորութեան էին բերուած բոլոր զպրօցնե-
 րու ուսանողները , Կայսերական և Գեղարուեստից
 կրկին վարժարաններու նուազները սգաւորի եղանակ-
 ներ կ'ածէին կոր : Դազաղը դրուած էր մեր տան բա-
 կին մէջտեղը , ճիշտ այդ բոպէին վրան գլուխը պա-
 տըռտած , ոտքը բոպիկ կին մը ներս մտաւ մեր
 տան դռնէն . տեսնալով բազմութիւնը և մէջտեղի
 դազաղը շուարեցաւ , լալ սկսաւ և մօտաւորապէս նը-
 լաղեցաւ . վաղեցի քովը , ջուր սրսկեցինք երեսը ,
 մարձեցինք գօլօծիայով և խելքը գլուխ բերինք , ներ-
 կայ կրներէն մէկ երկուքը , թեւ մտնելով սենեակ
 մը տարին զայն , ես ալ հետեւեցայ իրենց , և հար-
 ցուցի .

— Ինչո՞ւ յուզուեցաք աղջիկս ,

— . . .

— Ըսէ՛ , աղջիկս :

— Էֆէնտիմ , վիշտս մեծ է : Բոլոր յոյսս ձեր վը-
 րայ էր , դժբախտութեանէս գէշ ատենի մը հանդիպե-
 ցայ :

— Ըսէ ի՞նչ է վիշտդ , իմս Աստուծմէ է , ո՞ր տե-
 դացի ես դուն :

— Սարբերգի եմ , աղջիկը Թարագճեան Գրիգոր
 էֆէնտիին :

Այս անգամ ինձի եկաւ կարգը լալու : Կը հաւա-
 տացնեմ որ բնաւ չպիտի փափարէի այս վիճակին մէջ
 տեսնել այն վեհանձն և յարգելի անձին հազար նա-
 զով մեծցուցած դուստրը . բռնեցի ձեռքէն , նստե-
 ցուցի , ըսի .

— Ի՞նչ հայրդ իմ եղբայրս է , հեռաւարար այս
 տեղը քու եղբորդ տունն է , նստէ՛ ձոս , պիտի աշխա-

տինք յարգել և պատուել զքեզ :

— Ծնորհակալ եմ , բայց . . .

— Ի՞նչ բայց , աղջիկս :

— Կայսրան տարին տղաքս ու գոյքերս . Տէր Զօր
 զրկելու համար . Բէս-էլ-Այն կ'ուղարկեն կոր . չեմ
 կրնար բաժնուիլ զաւակներէս . իմացայ ձեր հոս գրա-
 նուիրը , եկայ , մինչդեռ դուք ալ սուգի մէջ էք եղեր :
 — Մէկ կողմ ձգէ իմ ցաւս , ո՞ր են հայրդ ու
 ամուսինդ :

— Զանոնք սպաննեցին :

Սուք չկրցայ գտնել մխիթարելու համար թշուառ
 կինը . առի հետս , փողոց ելանք , բարեկամներէս մէ-
 կէն խնդրեցի որ տասնըինգ քսան վայրկեան յետա-
 ձգեն յուզարկաւորութիւնը . իսկոյն կառք մը նստանք
 և զացինք կայսրան . կայսրանապետը բարեկամս էր ,
 զիբուրթեմօք առինք գոյքերը և ազաքը :

Այս դժբախտ տղոցը հետ միանին մինչև Հալէպ
 եկած էր քալելով , ձեռքէն խելք , առեր էին ունեցած
 դրամն ու զոմարեղէները . այնքան զգուեր է հոգիէն ,
 որ Ուրֆա մտեր է թիֆուսի բռնուողներուն յատկա-
 ցեալ մէկ առնը , որպէսզի ինքն ու զաւակները վա-
 րակուին , մեռնին , ազատին : Գիշեր մը կը պառկին
 հոն , բայց առաւօտուն բժիշկը դուրս կը հանէ զի-
 րենք զերծ նկատելով զանոնք համաճարակէն :

Թարագճեան էֆէնտիի աղջիկէն , ինչպէս նաև
 քանի մը ուրիշ Սարբերդցիներէ տեղեկացայ որ փաթ-
 թոցաւոր կրօնաւոր մը առեանդեր և բռնաբարեր է
 Սողոմոն էֆէնտիի Ֆրանսէական երկու աղջիկները :
 Այս պարագան այնքան յուսահատական տպաւորու-
 թիւն է գործեր իրենց մօր վրայ որ խեղճ կինը իր
 անմեղ մանկիկով նստուեր է Եփրատ և խեղզուեր :

Նոյնպէս քսանի չափ աղջիկներ, պաշապանելու համար իրենց անբժուկները, անպատիւ ապրելէն գերադաս են համարեր պատիւով մեռնիլը և այս իսկ նպատակով նետուեր են Եփրատ ու մեռեր:

Քաղաքական տեղակալներէն Ասրմ պէյի պատմութիւնը:

Աւետարական գործով մը գացած էի Պէհիսնի, վերադարձիս նաւակով եկայ, ինչև էպուհիհրէյրէ գալս չկրցայ գաւաթ մը ջուր խմել, Եփրատը լեցուն էր մարդու դիակով: ութնական, տասնական չուաններով կապեր և նետեր են: Մեռելներուն մէջ կան կիներ և տղաքներ, ամենուն ըսի որ ձուկ չուտեն քանի մը ատրի: չեմ կրնար նկարագրել ոստիկաններու գործած անզգամութիւնները: դրամ պահանջելով չարաչար կը ծեծէին կոր կիները և թիւն ու համարը չկար ծածի ներքև մեռնողներուն: Անգամ մը կը տեսնեմ կնոջ մը երկու ոսկի կլլելը, ասոր վրայ երբ դրամ չեն գտներ, կը սկսին ճեղքել կիներու փորը և կատարեալ անտարբերութեամբ կը քննեն անոնց ստամոքսն ու աղիքները:

Պիթիթի կողմը ուրիշ խայտառակութիւն մըն ալ տեսայ:

Տէր Զօր զրկելու նպատակով, ճամբայ կը հանեն յիսուն վաթսու մարդ:

Ես հանդիպեցայ խումբին: Վեց ոտական կար, ասոնք և ժողովուրդէն ալ տասնուհինգ հոգի մէջտեղ կ'առնեն, կը նստեցնեն հայերը և կ'ըսեն անոնց:

— Դուք Տէր Զօր պիտի երթաք, հոն բնականաբար պիտի ենթարկուիք անօթութեան և թշուառութեան, եթէ կ'ուզէք աղատիլ այս փորձանքներէն մահմետականացէ՛ք:

Խեղճերը կը համակերպին: գիւղէն կը բերեն կրօնաւոր մը, կը մահմետականացնեն ամէնն ալ, կը թլփատեն, յետոյ կ'աւելցնեն:

— Դուք հիմա մահմետականացաք, եթէ մեռնիք արքայութիւն պիտի երթաք, մանաւանդ մարտիրոսները անխուսափելիօրէն դրախտ կ'երթան, այս պատճառաւ զձեզ պիտի մարտիրոսացնենք:

Աւ կը սպաննեն ամէնն ալ:

Արցունքի տաք կայլակները յորդահոս սկսան իջնել Ասրմ պէյի այտերն ի վար, երբ կը պատմէր այս օճիրները:

Անհաշուելի աստիճանի հասած էին այս սրտամօրմօք եղեռները: գիշեր մը, մինչ հինգհարիւր մէթր հեռաւորութեան վրայ եղող տեղէ մը տունս կը վերադառնայի, Հալէպի է՛ն բանուկ մէկ պողոտային, Պապ-էլ-Սարաճի վրայ հանդիպեցայ տասնըինը մեռելներու, ասոնք ամէնը մահացուցեր էին անօթութիւնը, ճամբաւ տուայտանքը և ոստիկանի ճոկանը, ամէն առաւօտ, քաղաքին մէջ կարգով քաղաքապետութեան կառքերը կը ցրուէին և մեռել կը հաւաքէին: Առանց կրօնական արարողութեան է որ կը թաղուէին մեռելները: Բացուած փոսերուն մէջ կը նետէին զանոնք, եղածին պէս, վրայէ վրայ: Գտնուեցան կենդանի ըլլալով հանգերձ, հոգիներնուն զրգուած յուսալքուածներ, որ ինքզինքնին նետեցին այս փոսերուն մէջ և ողջ ողջ թաղուեցան:

Չհնուորական հրամանատարութիւնը հաստատած էր բազմաթիւ գործատեղիներ: Այս աշխատանցներու մէջ կը ծառայէին անոք և չքաւոր մնացած կիներ ու աղջիկներ: Օրական տասներկու ժամ աշխատանքի փոխարէն անոնց կը տրուէր մէյմէկ զինուո-

րական հաց, անօթութեան և Տէր Զօր զրկուելու երկիւղէն բոլոր կիներն ու աղջիկները ստիպուած էին արձանագրուիլ աշխատանոցները :

Հակառակ ասոր ալ այս դժբախտները կրկին հանգստութեան երեսը չէին տեսնար : Զինուորական և օստիկան սպաներ, իրանապետներ, նոյնիսկ հասարակ զինուորներ անընդմիջաբար կ'այցելէին գործատեղիները եւ կ'որոնէին գեղեցիկ կիներ, աղջիկներ և կը ջանային ձեռք ձգել զանոնք :

Էյուպ պէյի, Ալպախուհատ պէյի անունները — երկուքն ալ պաշտօնեաներ տարագիրներու առաքման Յանձնախումբին — զարհուրանք կը սփռէին մէջտեղը : Ո՛ր հայ որ հանդիպէր ասոնց, իր մահը գամած կը համարուէր :

Բժիշկ Ալթունեան էֆէնտիին, — որ ճշմարիտ մտէէ մը ազատեց աղէտահար հիւրերէս Սարաբրդի Արփիարեան Փիլոս էֆէնտիի շատ ծանր կիւանդութեան ենթարկուած աղջիկը, երկար ժամանակ տափաստանները մնացած՝ խօտայեղութեամբ աղիքներու հիւանդութեամբ տառապող Սերաստացի էլմաս հանրմը եւ զեռ տարբեր երկիրներէ երեսունը չորս զեռտարի անմեղներ — որքան որ շնորհակալիք յայտենէք քիչ է :

Ինչպէս իր հօրը՝ բժիշկ Ալթունեան էֆէնտիին պէս, նոյնքան ալ առաքինութեան գոհար մըն է իր աղջիկը Օրիորդ Նօրան, այնքան վեհանձն որքան պթասիրտ : Ան կրցաւ մինչ ևտքի ժամանակները պահպանել իր հիմնած օրանոցը և վանել անոր վրայ թափող հանապազօրեայ ապերասան միջամտութիւնները : Օրիորդ Ալթունեան տքնեցաւ հոգիով ու սիրտով, ազատեց հազարի չափ թշուառներ :

Պահ մը կառավարութիւնը որոշեց կառավարա-

կան պաշտօնեաներու ձեռք հաւաքել տասանորդական տուրքը, այս ժամանակամիջոցը հանդիպեցաւ դարոցական արձակուրդին, որով յարմար գատուեցաւ որ կրթական պաշտօնեաները յատկացուին տասանորդականներու հաւաքումին :

Ճիշտ այս առթիւ, ես ալ, տասանորդի պաշտօնեայ կարգուեցայ, Հայէպէն տասնըմէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Էպիպ դաւառին : Հոն գտնուած ատենս, օր մը նստած էի գայմաքամին սենեակը, երկու հայ քահանաներ ներս մտան, հագուատին պատառ բղիկ էր, իսկ իրենք փճացեր էին անօթութեանէն ու թշուառութենէն, բան մը որ զէմ յանդիման կ'երևար իրենց երեսէն :

Աղերսական լեզուով ըսին գայմաքամին .

— Տարագրեալ ենք, տարի մը կ'ընէ որ կը քնակինք այստեղ . առաջները իբր սնունդ ցորեն կուտային մեզ, հիմա կարեցին, շատ թշուառ ենք, կը խնդրենք հրաման ըրէք, որպէսզի գէթ փոքր քանակութեամբ կրկին ցորեն տրուի մեզ :

— Լա՛ւ, գլխուս վրայ, հիմա կը պատուիրեմ որ տան, պատասխանեց գայմաքամը :

Երկու շուառները ելան գացին շնորհակալութիւն յայտնելով :

Գայմաքամը ետևնուէ կճրտեց ակտաները .

— Ձեզի ցորե՞ն մի՞ . . . կապա՛ր, կապա՛ր, մը ալլտայ :

Անէժք կարգացի սրտանց այս անխիղճ մարդուն, երկու խնդները եկեր են քենէ մարդասիրութիւն, գրթութիւն հայցելու և դուն կը խորհիս զանոնք սպաննել :

Եբբ տուն վերագարձայ, քովս կանչեցի Պէդր-

ձեան Արմենակ աղան, այս մարդը չէի բաժնեք քովէս, ըսի.

- Հոս երկու հայ քահանայներ կա՞ն մի:
- Այո՛, կան:
- Բնաւ տեսնուած ունի՞ս մի իրենց հետ:
- Տեսնուած եմ:
- Ի՞նչ կ'ուտեն կը խմեն, ինչպէս կ'ապրին կոր:
- Շատ թշուառ վիճակ ունին խեղճերը, չեն կըրօնայ կոր պատառ մը հաց իսկ գտնել:
- Ինչո՞ւ համար, մինչև հիմա ինձի լուր չի տուիր:

— Այնքան աղքատներ կան ձեր գլուխը, որ ըսելու անգամ ամչցայ:

— Արմենակ աղա, առաջին անգամ ըլլալով սիրտըս կտորեցաւ քեզի դէմ, պիտի աշխատիս մոռցնելու այս յանցանքդ: Օ՛ն գնա՛, գտի՛ր զիրենք և իմ կողմէս խնդրէ՛ որ հո՛ս հրամմեն:

Բնականէն համեռտ ծնած Արմենակ աղան շիկնեցաւ, գնաց և բերաւ խեղճերը, նստեցուցի, ջանացի սիրտերնին առնել:

— Կը ցաւիմ որ մինչև հիմա չեմ տեսած, չեմ ճանչցած ձեզի, ըսի իրենց. այսօր առաջին անգամ ըլլալով տեսայ զձեզ գայմագամին քով, չըլլայ որ սուրիչ անգամ, որեւէ բանի համար դիմէք այդ անխիղճ մարդուն: Չեր ետեւէն սպառնաց. ես սլատրաստ եմ պէտք եղածի չափ արմտիք տալ ձեզի:

Գոհ մնացին:

Մինչև վերջին ատեններն ալ պաշտպանեցի այս մարդիկը: Աստուծէ մին Ջէյթունի առաջնորդ Բարթոլդիմէոս Թագձեան էֆէնտին, միւսն ալ Կեսարիոյ Սթ. Կարապետ վանքի վանահայր Սմբատ էֆէնտին է ե-

ղեր. այս թշուառները սնաններ են ձիթենիներու տակ թափած թոյնի պէս դառն ձիթապտուղի հատիկներով. Այժմ իսկ յարգանքի առարկան եմ եղած Երուսաղէմ գանուող Բարթոլդիմէոս էֆէնտին:

Յունվար ամսոյ մէջ էր. ցուրտ առաւօտ մը, օդը խածնող ու կծու, ուէ կերպով չէր տաքնար կոր: Ելայ գայմագամին տունը գացի գործով, այս վերջինն ալ ինէ աւելի կը մտի կոր եղեր. փոքրիկ սենեակին մէջ գրած էր թէ՛ կրակարան և թէ՛ վառարան. փոնջ խմեցինք: Անկից ելանք և միասին գացինք կառավարական պաշտօնատունը: Կառավարչատան բակէն ներս մտնելու վրայ էինք, երբ երկուքս ալ շուտաբանք և սառեցանք, գետինը մխուածի պէս մնացինք: Պատին տակ կծկտեր էին քսան երկու մանչ սւ աղջիկ պզտի սղաններ, որոնց է՛ն փոքրը վեց, իսկ է՛ն մեծը հազիւ տասը տարեկան կար: Դռնչիւնի ձևով աղմուկ մը կը բարձրանար կոր այդ զանգուածէն: Կռնակնին եղած կտոր պատառ հագուստներնին՝ պատանքի մը չափ իսկ չէին պահպաներ կոր իրենց հալումաչ, վտիտ մարմինները. կէս տրամ իսկ միս չէր մնացեր երեսնուն վրայ. ահա թէ որոնց է որ պիտի կրնայինք տալ կենդանի մեռելի անուանակոչումը:

Ատնք սողաքն են եղեր Հալէպի աշխատանոցներուն մէջ գործող հայ կիներուն: Մայրերնին և քոյրերնին աշխատելու գացած ատեն, ասոնք կը մնան եղեր փողոցները. կառավարութիւնը ժողովել տուեր է այս ցուրտ օրին առանց վրազլուխի, ոտքերնին բուպիկ զրկեր է կառավարչատուն: Էտիպէն ձիտի Շի. կուր գիւղաքաղաքը պիտի երթան եղեր զեռ, ճամբան, ուտելու համար խոտ անգամ չգտնելնուն, հող են կերեր:

Երբ սենեակ մտանք, ըսի գայմագամին .

— Դուք իթթիհատական էք, թշնամի էք հայե-
րուն . ըսենք որ իրաւացի էք, բայց խնդրեմ ըսէ՛ք ինչ
ոճիր կարելի է վերագրել սա չորսական, հինգական
տարու աղոց . մենք ալ տէր ենք զաւակներու,
ի՛նչ պիտի զգանք, եթէ անոնք ալ օր մը վիճակուին
ասանկ դժբախտութեան մը :

Եթէ կը հաւատանք Աստուծոյ, այս վիճակը մի-
թէ կ'արժանանա՞, Աստուծոյ հաճութեան . նո՛յն Աս-
տուածը ամէնուս ալ փորձանք չի՛ տար :

Եթէ ուրանաս Աստուած, կրնա՞ս մի մերժել սըը-
տի և խզի պատասխանատուութիւնը . Եթէ զայն ալ
հետանք, պիտի ընդունինք արդեօք մարդուն է՛ն
վայրագ, է՛ն անգաւթ զազանէն ալ վատ արարած մը
ԸԼԽԸ :

Եթէ մէկը մեզի ըսէր թէ՛ երէկ երկիրը, տունը,
արտը թռչուններու պէս ճռուողելով վազվզող, խա-
զացող, իրենց հօր ծունկերուն վրայ ուտոստող, ի-
րենց մօր կուրծքը ապաստանելով մշիկ մշիկ քնացող
այս անմեղները պիտի վիճակուէին այսօրուան այս
զարհուրելի դժբախտութեան, ապահովաբար այդպի-
սին վրայ, մենք պիտի նայէինք յիմարի և չարակա-
մի աչքով : Ո՛վ կրնայ ապահովցնել զմեզ որ վազը
մեր զաւակները չպիտի ենթարկուին ասկից հազար ան-
գամ աւելի դասն վիճակի մը : Ով կրնայ զմեզ վտա-
հեցնել որ չպիտի երևի Աստուծոյ վրէժխնդիր ողին :

Դայմագամ պէ՛յ . . . մէկ կողմ դնենք անդամ
քաղաքականութիւնը կառավարութեան, մտածենք
մեր հաշույն . եթէ ցաւինք այսօր, այս բերաննին
կաթ հոսող մանուկներուն վրայ, վաղն ալ մեր զա-
ւակներուն վրայ ցաւողներ կը գտնուին, զիտէք որ

ըստ իսլամական կրօնի ասոնք՝ իրենց տարիքով՝ ան-
պատասխանատու և անմեղ կը նկատուին, եթէ մեռ-
նին իսկ ուղղակի գրախա կ'երթան, արդ, ի՛նչ հա-
մարձակութեամբ պատժենք այն անմեղները, զորս
Աստուած զերծ կը նկատէ ամէն պատասխանատու-
թենէ :

— Աղէկ կ'ըսէք, բայց ես ի՞նչ կրնամ ընել :

— Կը տեսնուի կոր որ, ասոնք շատ աւելի մօտ
են մահուան, քան կեանքի, մինչև իսկ կարելի է որ
այս գիշերը մէկ քանին, վաղն ալ ուրիշներ մեռնին,
ոչ ոք հաշիւ կը պահանջէ ձեռէ, ինձ պարգևեցէք զա-
նոնք :

— Ի՛նչ պիտի ընէք զիրենք :

— Պիտի ջանամ իրենց վերագործնել ըստ կա-
րելոյն իրենց առողջութիւնը և կեանքը հուսկ ապա
բազուկներս պիտի բարձրացնեմ առ Աստուած և պի-
տի աղօթեմ . «Աստուած իմ, երբ գալ արդարութեան
և հատուցումի օրը, ոճրագործներու մէջ մի՛ ձգեր
զիս» :

— Առ տա՛ր, և ըրէ՛ ինչ որ կ'ուզես :

Առանց ըսպէ կործնելու ցատկեցի, տղաքը ա-
ռի, հոն կիսաւեր յունական եկեղեցի մը կար, սեն-
եակներէն մին գործի կուգար, տղաքը տարի այդ
սենեակը, իսկոյն չուկան զրկեցի Արմենակ աղան եւ
քսան երեսուն փոխաթ ու քանի մը բեռ ածուխ գնել
տուի : Գետին փոել տուի փոխաթներու մէկ մասը,
մէկ մասն ալ անցնել տուի ապակեայ պատուհաննե-
րուն : Ծնողները այնքան մասձ էին որ եօթը տա-
րեկան ձագուկ մը՝ մխուելով դէպի կրակը, այրեր է
արմուկը . տասնըհինգ օր տեւեց զարմանումը այ-
րուցքին . էտիպի մէջ կային երկու երեք տարագիր-

հայուհիներ. կանչել տուի զանոնք, խնդրեցի անոնց-
մէ որ մէկ երկու օր մայրութիւն ընեն տղաքներուն .
գոհունակութեամբ ընդունեցին . ապուր պատրաստել
տուի հատերը խիտ քիչ թելիայով :

Առատ դրամ տալով քաղաքապետութեան բժիշ-
կին, խնդրեցի որ ուշադիր և խղճամիտօրէն քննէ եւ
զարմանէ տղաքը . չիտալն ըսած ըլլալու համար լաւ
զարմանեց, աղոցմէն մին՝ աղջիկ մը մեռաւ ան գի-
չերը, մնացեալներն, շնորհիւ Աստուծոյ, ապաքինե-
ցան և իրենց առողջութիւնը գտան քիչ ատենէն .
էտլէպ գիւղաքաղաքի տունս անձեռնառու ըլլալուն,
աղոց մէկ մասը առժամեայ կերպով բաժնեցի քրիս-
տոնեաներու տունը . Սմբատ էֆէնտիէն խնդրեցի որ
արձանագրէ տղաներու անունները, երկիրներն ու
ծագումներն . ձեռքն առաւ թուղթը . գրելու ժամա-
նակ յանկարծ դողալ սկսան ձեռքերը ու արտասուքի
հեղեղ մը դուրս պոսթկաց աչքերէն . այդ թշուառնե-
րէն մին աղջիկն է եղեր իր եղբօրը . իրենց գիրկընդ-
խառնուիլը առաջ բերաւ վերին աստիճանին տխուր և
յուզիչ տեսարան մը, դուստրս այս աղջիկը՝ իր քոֆէ
առաւ և որդեգրեց զինքը :

Որոշուած էր կախաղան բարձրացնել Հայկ էֆէն-
տին, կրտսեր որդին հինաուուրց բարեկամներէս Յով-
սէփ Պօյաճեանի, ասոր տեղի տուած էր վատահամ-
բաւ կին մը . աստիկան քօմիսէրի մը պնդումները՝
պատճառ պիտի ըլլային առիւծի պէս երիտասարդի մը
մահուան : Անկասկած եմ որ այս երիտասարդին մահը
անժամանակօրէն հօրն ու մօրը գերեզման իջնելուն
առիթ պիտի ստեղծէր :

Ազատելու համար ղինքը, ստիպուեցայ խա-
զալ դեր մը, ինչ որ իսկապէս ծիծաղելի է .

այս գործը ձեռքն էր պաշարման վիճակի հրամանա-
տարի նախադահին . ընաւ չէի տեսակցած այս անձին
հետ : Սկսայ գաղտագողի ուսումնասիրել իր վարքն
ու բարքը . իմացայ թէ տասնրվեց տարեկան զաւակ
մը ունի . հայրը կ'ապրի եղեր միայն այս տը-
ղուն համար . մտիկ կ'ընէ եղեր անոր մէն մի խօսքը .
կը գործադրէ եղեր անոր անձնիւր փափաքը : Տղան
կը յաճախէր կայսերական վարժարանը, մինչև հիմա
բազում դպրոցներ մտեր ելեր է և չէ կրցեր մնալ ոչ
մէկուն մէջ . Մօտս կանչեցի, վարժարանի կառավարիչ
ընիկ Այնթապցի Յակոբ Ճէպէճեան (*) էֆէնտին . թե-
լաղրեցի իրեն ծանօթութիւն հաստատել յիշեալ պա-
տանին հետ և ջանալ որ աշակերտ արձանագրուի
մեր դպրոցին : Ճէպէճեան էֆէնտին՝ Հալէպի վարժա-
բաններու խառն ֆուլթօլի խաղերուն կը տեսնայ
տղան, տակաւ կը մօտենայ և ըսած ձեւովս թելա-
դրութիւններ կ'ընէ :

Օր մը, տղան, ընկերակցութեամբ տեղակալի մը
եկաւ և արձանագրուեցաւ : Խել մը դպրոցներու մէջ
ուսուցչութիւն և տնօրէնութիւն եմ ըրած, բայց աս-
կից անպատկառ, ասկից չփացած տղու չի հանդիպե-
ցայ . սկսայ ամէն առաւօտ քովս կանչել տղան և մե-
ծաբել զինքը . բարի վարքի համար բարենիշեր տուի,
մինչդեռ ոչ թէ բարենիշ, այլ հարկ էր պատժելի տալ
իրեն : Մոյլ էր վերջին աստիճան . ամէն ցորեկի ճաշի
պահուն, իրեն կ'ըսէի . «Ձեր բարի վարքին վարձատ-

(*) Ճէպէճեան Յակոբ էֆէնտին անցեալ տարի
մեռաւ Մանսուրայի մէջ շատ երիտասարդ հասակի
մէջ . յօրժ արժէքաւոր, լուրջ, հմուտ մէկն էր . իսկա-
պէս ցաւալի կը նկատեմ իր մահը :

բութիւն ըլլալու պայմանով, բացառաբար կուտամ ձեզ երկու ժամ: Գացէ՛ք. պտտեցէ՛ք դուրսը և օդ առէ՛ք»: Տղան մեծ ուրախութեամբ փողոց կը նետուէր: Սակայն բոլոր ուսուցիչները զձիք կը թօթուէին ասոր անամօթութեան և անկրթութեան երեսէն. ստեղծուած էր անհանդուրժելի կացութիւն մը. ուսուցիչներ և ուսանողներ ամէն օր քանի մը անգամ կը դիմէին ինծի անսպառ դժգոհութիւններով. բայց ես ստիպուած էի քանի մը բառով համոզել զիրենք և ճամբել, որ թվհետեւ նպատակ մը ունէի հետապնդուած որ զուտութիւն կը պահանջէր: Միեւնոյն նպատակին համար լծած էի ուսուցիչներէս ձէպէճեան Յակոբ, Սեգրակ Կէպէնլեան^(*) և Լեւոն Նամզարեան էֆէնտիները. այս փորձանքին համբերելու հետեւանքը պիտի ըլլար կախողանէ ազատումը անմեղի մը:

Սկսած էր դահիճներու բերնին մէջ ժուռ գալ գօմիթածի Հայկի անուներ: Կը հնարուէին կոր խելքէ մաքէ դուրս եղած յերկրանքներ: Վերջի վերջոյ շընօրհակալիքի գիրեր ընդունեցայ պատերազմական ատեանի նախագահէն. ձիչդ ատենն է ըսի, գացի երկա-

(*) Սեգրակ Կէպէնլեան էֆէնտին զինադադարէն ետք Ատանայի մէջ հրատարակեց թերթ մը «Հայ Ձայն» անունով. Շատ պատուաւոր, հմուտ, մաքրասիրտ, հազուագիւտ, բարձր անձնաւորութիւն մըն է. հիմա կը դսնուի Կիպրոս. կուրծք տուած է շատ դաւնութիւններու և զժբախտութիւններու. ճիչդ շունչ առնելու ատեն կորսնցուցած է իր կողակիցը և մընացած իր միամօր զակիին հետ. մեր վարժարանին մէջ ատեն մը մարմնամարզի և եաքն ալ ֆրանսերէնի դասեր կ'աւանդէր, է՛ն վերջերն ալ կարգուած էր

թուղիի ընկերութեան բժիշկ Ղալիպ պէյին,^(**) որ նոյնքան ալ բարեկամն էր Յովհաննէս Պօյաճեան էֆէնտիին:

- Օ՛ն, նայիմ, Հայկը ազատելու ատենն հասաւ:
- Ի՞նչպէս:

Ընդարձակօրէն բացատրեցի պատերազմական ատեանի նախագահի տղուն պարագան և մանրամասնութիւնները:

— Շատ լա՛ւ, հիմայ ի՞նչ ընել կը մտածես:

— Ահա՛, ես գրեցի աղերսագրի պատճէն մը, ասիկա տանք Յովսէփ էֆէնտիին. թող մաքուրի առնէ, յետոյ թող այրէ իմ պատճէնս. պատերազմական ատեանի նախագահին թօ՛ղ տայ աղերսագիրը. անոր իմաստն է:

«Ես հիւլէի չափ յարաբերութիւն և կապ չունիմ գօմիթէի և քաղաքականութեան հետ. այս բանը ինձ վերադրող սպան, այս բանը ըբաւ պոռնիկի մը պատճառով: Անստորագիր նամակ մը առած էի, նոյնիսկ անով ինծի կ'առաջարկուէր հարիւր ոսկի տանիլ ձեզ այն ինչ տեղ, հակառակ պարագային կը սպառնային սպաննել զիս. իսկոյն կռահեցի որ այս նամակը գըրողը, նոյն ինքն ուստիկան սպան էր. անմիջապէս գիմեցի Բարձրագոյն Վարժարանի Տնօրէն Մուսթաֆա Նէտիմ պէյի. բացատրեցի իրեն ինչդիրը, ան ալ ի պատասխան սրիկայութիւն մի ըներ որ, այս տեսակ ուրիշ փորձանքներ չի գան գլխուդ» ըսաւ և կարեւոր

հաշուակայ. գլխու թագ ըլլալու արժանի թանկագին գոհար մըն է ինքը. յաջողութիւն և երջանկութիւն կը հայցեմ իրեն համար:

(**) Ղալիպ պէյ սրտագին. անձնուէր, գլխասիրտ անձ մըն էր. երկու տարի առաջ սեռաւ:

րութիւն չի տուաւ . անկից ելլելով , գացի բժիշկ Կալիպ պէյին , անոր ալ հասկցուցի . ան էս վճռանց զիս միեւնոյն խօսքերով , եթէ ես գօմիթածի ըլլայի , չէի զիմեր այս անձերուն :

Կալիպ պէյ պատճէնը կարգալէ վերջ աւելցուց .

— Ճիշդ է թէ սուտ վկայ ըլլալը գէշ բան է , սակայն , անմեղ մը կախաղանէն ազատելու համար , կարելի է ընդունիլ սուտ վկայութիւնը :

Հուր տունք Յովսէփին , եկաւ . հասկցուցինք , տունք պատճէնը . կորանցուցած էր արգէն երէց որդին . արցունքի ծով կտրած էին աչքերը , լացաւ . բռնելով ձեռուրներնիս , համբուրեց զօտով . յաջորդ օրը կուտայ աղբոսագիրը . իսկոյն կոչնագիր ստացանք , ներկայ եղանք վկայութեան . պատերազմական ատեանի նախազահէն զաղտնապէս խնդրեցի որ ազատէ Հայկը : Հուսկ ուրեմն այդ անամօթ աղուն հօրմէն քաղեցինք անպարտութեան որոշումը :

Իմ տկար գրիչս անգոր է նկարագրելու դէպքերն ու նախճիրները Տէր Զօրի , որոնց չէ տեսնուած նմանը պատմութեան գիրքերուն մէջ և տեսնուելիք ալ չունի . «ներուեցաք» ըսելով Եփրատի հանդիպակաց ափն անցնել քառասուն յիսուն հազար զժբախտներ և հոն զանոնք սպառսպուր կոտորել , փոսր լեցնել տասր հազարէն աւելի տղաքը , քարիւղ թափել անոնց վրայ և այրել , երեւակայութեան մէջ չի սղձուելիք անլուր սճրագործութիւններու շարքէն են :

Տէր Զօրի մէջ , ամէն երկրէ հաւաքուած էին , շուրջ հարիւր վաթսուէն հազար անհատներ . Եփրատի եզերքը հաստատուած այս փոքրիկ քաղաքը , ունի առողջարար օդ . բերրի հող և ախորժահամ ջուր . Գանձ մըն է հարստութեան : Տարիներէ ի վեր զուրկ էր մնա-

ցեր ան քաղաքակրթութեան և գիտութեան բարիքներէն . Հայերը սկսած էին բարիքով լեցնել այս քաղաքը : Տարակոյս չկայ որ այնտեղ հաւաքուած հարիւր վաթսուէն հազար հայերը ասոր տասնապատիկն էին երբ վտարուեցան իրենց օճախէն . անսուաղութիւնը , թըշուառութիւնը , ճամբու տառապանքները հալեցուցեր , այս քանակին իջեցուցեր էին զանոնք :

Տէր Զօր զրկուելու համար Հալէպ բերած տարագրեալները , Գառլըք ըստուած քաղաքին եզերքը տեղ մը կը բանտարկուէին , Գառլըք յար և նման էր այն տեղերուն ուր մտավաճառները ժամանակաւոր կերպով կը բանտարկեն իրենց օչխարները սպանդանոց առաջնորդելէ առաջ . Գառլըք մանող թշուառը , յոյսը կրտելու էր կեանքէն :

Բազմաթիւ հայ կիներ և աղջիկներ կային Հալէպի գիւղերուն մէջ . մանաւանդ Ազազ , Գաթմա գիւղերը , որոնք Քիլիսի կը պատկանին , նշանաւոր են հանդիսացած իրենց մէջ գործուած ոճիրներով . կ'իմանայի թէ շատ կիներ կը գտնուէին Մեսքենէ , Էպուհիւրէյրէ , Հէմամ և Սեպհայի կողմերը վրանաբնակ արարներու քով . ասոնք մաս մը հաւաքուեցան զինադադարէն վերջը : Մեծագոյն մասը մնաց հոն :

Այն հարիւր եօթանասուն երեք կիներն ու աղջիկները՝ զորս ես պահպանած էի , յանձնեցի իրենց մօտաւոր և հեռաւոր ազգականներուն զորս դտայ : Անոնցմէ մէկ հատը միայն մնաց , որովհետեւ չէր յիշեր ո՛չ ծընընդավայրը , ո՛չ ընտանիքը , ո՛չ իսկ իր անունը : Հիմայ այս աղջնակը կը յաճախէ Հալէպի գիշերօթիկ վարժարանը : Այսու հանդերձ յոյսս չեմ կտրած : Եթէ իր ծնողքը չի գտնուի ալ , զմեզ իբր հայր , մայր , մենք ալ զինքը իբր զաւակ կը նկատենք որով անոք

չի կոչուիր :

Տեսանք զեղծումի և կաշառակերութեան ահաւոր դրուագները : Վերջերք երեւան ելաւ անոր նոր մէկ ձեւն ալ : Արեւը չի ծագած , ոստիկանները կը ցրուէին փողոցները , հետերնին ունենալով տասնըհինգ քսան մեթր երկարութեամբ պարան մը . ո՛ր հայուն որ պատահէին , առանց այլ ընդ այլօցի , կապելով կը տանէին ձոր . խեղճերը՝ «մենք զինուորական ծառայութենէ փախած չենք , մենք տարագրեալներ ենք» չէին կրնար ըսել . զի «տարագրեալ ենք» ըսողը Գառլըզ , իսկ ձայն չի հանողը կը տարուէր ոստիկանութեան պահականոցը : Կ'ազատէր միայն այն որ ոստիկանին ձեռքը մէծիտ մը կուտար : Այն ինչ ազատած մէկէն և փողոցը դարձած՝ կ'իյնար ուրիշ ոստիկաններու ձանկը : Պատահեցաւ ինծի որ ութն անգամ չուանէ ազատեմ մեր Արմենակ ազան :

Ես ալ երբեմն օտիպուեցայ կաշառք տալ . հարկ եզաւ տասը ոսկի կաշառք տալ զինուորական առաքումէ ազատելու համար Պէտէլեան Արթին էֆէնտիի միամօր զաւակը :

Շատ մը հայեր , իբր զինուոր , զրկուեցան հոս հոն : Չէնք չը տուին անոնց : Հազիւ թէ ասոնք զըրկուած , տարագրեցին իրենց ընտանիքներն ալ . ասոնցմէ՝ կաշառքով և կամ շատ զօրաւոր կողմնակալութեամբ ազատեցան անոնք , որոնք զբամ և պաշտպանութիւն ձարեցին :

Մերթ հրամաններ կը հասնէին կուսակալներուն , էնովէր կամ թալէամօ փաշաներէն , ի մասին կարգ մը մարդոց զինուոր չի զրկուելուն . բայց լաւ գիտեմ որ նոյն հետուոյն կը հազորդուէին ծածկագրութեամբ հակահրամաններն այս հրահանգներուն , որով անհետե-

ւանք և անօգուտ կը մնային առջինները :

Անկարելի է ուրանալ այն ծառայութիւնները զորս մատուցած են թուրք կառավարութեան Ձօհրապ , Վարդգէս և Գէլէկեան Տիրան էֆէնտիները : Այս վատտակաւոր , կարող , առաքինի երեք անձնաւորութիւններն աքսորեցին երեքը մէկանց , և այն ինչ Ուրֆան անցած մահացուցին զանոնք անգլթօրէն :

Նոյնքան պարկեշտ , լուրջ , վատտակաւոր անձ մըն էր Օհաննէս էֆէնտի , Ուրֆայի զատարանի անգամներէն . ասի այն անձն է որ , գերիի պէս անգնահատելի ծառայութիւններ մատուցած է Ալիէ , Մալիքէ , Նէվրէս , Սելմա հանըմներուն և Մահմուտ պէյին . առաջինները քուրերը , իսկ ետքինը փեսան Ահմետ Բիզա պէյի որ Սուլթան Համիտի ատեն Եւրոպա փախած էր և ազատութենէն ետքն ալ նախագահն եղաւ անդրանիկ երեսփոխանական ժողովին :

Երբ այս խնդիրները ծագեցան , ապրելու դիւրութիւն չի տեսնալով , Օհաննէս էֆէնտի հրաժարեցաւ և Հալէպ հաստատուեցաւ իր կնոջ և զաւկին հետ :

Քանի մը օր վերջը , վկայութեան հարց պատըրուակելով , շտապով Ուրֆա կանչեցին Օհաննէս էֆէնտին , մինչդեռ , անկասկած վկայութեան հետ առնչութիւն ունեցող ո՛րեւէ գործ չունէր ան . յաջորդ օրը , իմացանք թէ սպաններ են զինքը Հալէպէն երկու ժամ հեռաւորութեան վրայ : Անօք և անպաշտպան մնացին կինը Մարիամ հանըմը ու որդին Փօզֆ և արտասուքի մէջ անցուցին իրենց վայրկեանները և մինչև վերջերս ալ քովս էին :

Այն տղաքը զորս պաշտպանեցի էտլէպի մէջ , ամենքն ալ յանձնեցի իրենց մայրերուն և ազգականներուն : Ասոնցմէ մէկուն պատմութիւնը ստիմուկե-

ցուցիչ է: Թագուհին վեց տարեկան է եղեր և Սե-
րասոտացի, տարագրութեան ճամբուն վրայ, իրենց
ընկերացող ոստիկաններէն մին փորձեր է բռնաբարել
իր քրոջ, հազիւ տասնըրեք տարեկան աղջկան մը
կուսուժիւնը: Աղջիկը ընդդիմացեր է բուռն կերպով.
օստիկանը կը կատղի և Գրգըլ Ըրմաք կը նետէ զայն.
աղջկան երկու եղբայրները, մին ութը միւսը տասը
տարեկան, ասկից ազդուելով. կ'անիծեն ոստիկանը և
կը հայհոյեն. անգութը սուրինահար կըսպաննէ զա-
նոնք ալ, ջարդելով անոնց թոքերը: Այս երեակ աղէ-
տները կը փճացնեն իր եղկելի մայրը որ, վեց տարեկան
աղջկան ձեռքէն բռնած լաց ու կոծով կուգայ մինչեւ
Հալէպ. հազար դժուարութեամբ ինքզինքը ընդունել
կուտայ աշխատանոցը. ատեն մը ետքը, երբ կ'անհե-
տանայ Թագուհին, կը խելագարի և կը դրուի ամենա-
վատ յիմարանոցը: Այս մտնրամասնութիւնները ինձ
հաղորդեցին այդ աշխատանոցին մէջ տառապող հայ
կիները:

Իմ անխախտ համոզումս այն է որ, այսքան ա-
ղեսարչ սճիրներէ ետք, Աստուած անպատիժ չի պիտի
ձգէ անոնց հեղինակները և գործադրողները:

Եթէ գրի առնէի իմ տեսածներս և իմացած բոլոր
դէպքերս, քանի մը հազար էջնոց գիրք մը մէջսեղ
կուգար:

Աստուծոյ անէծքը թող վրան ըլլայ անզգամ-
ներուն:



917

Հայաստանի Ազգային գրադարան



NL0439017

73.449